


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի
միջազգային
կազմակերպություն


# Հայաստան. երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն 2015

# ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

# ՀԱՅԱՍՏԱՆ.
# ԵՐԵԽԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

## 2015

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2016

Հեղինակային իրավունք © Աշխատանքի միջազգային կազմակերպություն և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ), 2016թ.
Առաջին հրատարակություն՝ 2016թ.
Նյութը վերարտադրելու իրավունք ստանալու համար հարկավոր է դիմում ներկայացնել կա՛մ ԱՄԿ-ին՝ ԱՄԿ հրապարակումներ (իրավունքներ և թույլտվություն), Աշխատանքի միջազգային գրասենյակի հասցեին՝ Շվեյցարիա, Ժնև, 22, CH-1211 կամ հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ pubdroit@ilo.org, կա՛մ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ), հասցե՝ Հայաստան, Երևան 0010, Հանրապետության պող. 3, Կառավարության տուն կամ հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ info@armstat.am: Նյութը թարգմանելու իրավունք ստանալու համար հարկավոր է դիմում ներկայացնել ԱՄԿ-ին, որը գործում է երկու կազմակերպությունների անունից, վերը նշված հասցեով:
Գրադարանները, հաստատությունները և նյութը վերարտադրելու իրավունք շնորհող կազմակերպություններում գրանցված այլ օգտվողները կարող են պատճենել նյութը՝ այդ նպատակով նրանց տրված թույլտվությանը համապատասխան: Ձեր երկրում նյութը վերարտադրելու իրավունք շնորհող կազմակերպությունների մասին տեղեկություններ ստանալու համար այցելեք www.ifrro.org :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԵՎ ԱՎԾ

*«Հայաստան. երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն, 2015թ.» վերլուծական զեկույց* / Աշխատանքի միջազգային գրասենյակի Աշխատանքի ոլորտում հիմնարար սկզբունքների և իրավունքների հարցերով մասնաճյուղ (FUNDAMENTALS), Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ), - Ժնև, ԱՄԿ, 2016թ.:
ISBN 978-92-2-831207-2 (տպագիր), 978-92-2-831208-9 (առցանց «PDF» ձևաչափով)
Աշխատանքի միջազգային գրասենյակի Աշխատանքի ոլորտում հիմնարար սկզբունքների և իրավունքների հարցերով մասնաճյուղ (FUNDAMENTALS), Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ)
երեխայի աշխատանք / աշխատող երեխա / աշխատանքային պայմաններ / Հայաստան - 13.01.2
Առկա է նաև անգլերեն տարբերակով (“*Armenia National Child Labour Survey 2015*”), 978-92-2-130811-9 (տպագիր); 978-92-2-130812-6 (առցանց «PDF» ձևաչափով), Ժնև, 2016թ.

## ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

«Հայաստան. երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն 2015թ.» (ԵԱԱՀ) իրականացրել է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ): Հետազոտության աշխատանքները համակարգել են ԱՎԾ-ն ներկայացնող Գագիկ Գևորգյանը և Ֆեդերիկո Բլանկոն՝ FUNDAMENTALS-ից:
Սույն հետազոտությունը հրատարակվել է Միացյալ Նահանգների աշխատանքի դեպարտամենտի ֆինանսական աջակցությամբ (Ծրագիր GLO/13/21/USA):
Շնորհակալություն ենք հայտնում Մարդկային զարգացման միջազգային կենտրոնին՝ ծրագրին ցուցաբերած կազմակերպչական և ֆինանսական աջակցության համար:
Սույն հրապարակումը պարտադիր չէ, որ արտացոլի Միացյալ Նահանգների աշխատանքի դեպարտամենտի հայացքները կամ քաղաքականությունը, նմանապես առևտրային անվանումների, առևտրային արտադրանքի կամ կազմակերպությունների նշումը չի կարող ընկալվել որպես Միացյալ Նահանգների Կառավարության կողմից դրանց աջակցություն:

Սույն հրապարակման մեջ տեղ գտած հասկացությունները և դրանում ներկայացված տեղեկությունները չեն կարող ընկալվել որպես ԱՄԿ-ի և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) կարծիք՝ որևէ երկրի, տարածքի կամ տարածաշրջանի կամ դրանց իշխանությունների իրավական կարգավիճակի կամ արտաքին սահմանների վերաբերյալ:
ԱՄԿ-ն և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ) որևէ պատասխանատվություն չեն կրում տվյալների անճշտության, սխալի կամ բացթողման համար, որը կարող է առաջանալ սույն փաստաթղթում պարունակող տեղեկություններն օգտագործելու հետևանքով:

Տպագրված է Հայաստանում
Էջադրումը և դիզայնը՝ Արամ Ուրուտյանի
Շապիկի նկարը՝ iStock.com/Claudia Dewald

# Բովանդակություն


**Բաժին 1. Ներածություն** . . . 12

**Բաժին 2. Երկրի նկարագիրը** . . . 14

2.1 Ժողովրդագրական կազմը . . . 14

2.2 Երկրի տնտեսության և աշխատանքի շուկայի բնութագրերը . . . 16

2.3 Երեխայի աշխատանքի վիճակագրությունը . . . 18

2.4 Աղքատություն և անհավասարություն . . . 19

**Բաժին 3. Հետազոտության մեթոդաբանությունը** . . . 21

3.1 Հետազոտության շրջանակը . . . 21

3.2 Հետազոտության հարցաթերթը . . . 21

3.3 Ընտրանքի ձևավորում և իրականացում . . . 22

3.4 Հետազոտության կշիռներ և դասախանելիության մակարդակ . . . 23

3.5 Փորձնական հետազոտություն . . . 24

3.6 Հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացնող անձնակազմի ուսուցում և դաշտային աշխատանքներ . . . 25

3.7 Տվյալների մշակում . . . 26

**Բաժին 4. Հայեցակարգեր և սահմանումներ** . . . 27

4.1 Աշխատանքի միջազգային ստանդարտներ . . . 27

4.2 Ազգային օրենսդրություն . . . 28

4.2.1 Երեխաներ . . . 29

4.2.2 Երեխայի աշխատանք . . . 29

4.2.3 Վնասակար աշխատանքներ . . . 30

4.3 Հետազոտության շրջանակում օգտագործված հայեցակարգեր և սահմանումներ . . . 30

4.3.1 Արտադրական և ոչ արտադրական գործունեություն . . . 30

4.3.2 Երեխայի աշխատանքի գնահատման շրջանակը . . . 32

4.3.3 Երեխայի արգելված համարվող աշխատանք . . . 34

**Բաժին 5. Երեխաների կողմից կատարվող աշխատանքների հիմնական բնութագրիչները** . . . 38
5.1 Երեխաների ներգրավվածությունը տնտեսական գործունեությունում . . . 38
5.2 Երեխաների գործունեության բնութագրիչները . . . 41
5.3 Երեխաների կողմից կատարվող տնային գործեր / ծառայություններ . . . 44

**Բաժին 6. Աշխատող երեխաների բնութագրիչները** . . . 46
6.1 Երեխաների զբաղվածությունն ըստ գործունեության տեսակի . . . 46
6.2 Երեխաների զբաղվածությունն ըստ զբաղմունքի տեսակի . . . 48
6.3 Զբաղվածության կարգավիճակը . . . 50
6.4 Շաբաթական աշխատանքային ժամերը . . . 52
6.5 Աշխատանք փնտրող երեխաներ . . . 55

**Բաժին 7. Երեխայի արգելված աշխատանք և վնասակար աշխատանք** . . . 56
7.1 Երեխայի արգելված աշխատանք . . . 56
7.2 Երեխայի արգելված աշխատանքի հիմնական բնութագրիչները . . . 54
7.3 Երեխաների կողմից իրականացված վնասակար աշխատանքներ . . . 61
7.3.1 Վնասակար աշխատանքներում ներգրավված երեխաներն ըստ տնտեսության ոլորտների / գործունեության տեսակների . . . 63
7.3.2 Աշխատանքի վնասակար պայմաններ և վնասակար աշխատանքի այլ բնութագրիչներ . . . 64
7.3.3 Երեխայի վնասակար աշխատանքի շաբաթական ժամերը . . . 67

**Բաժին 8. Կրթական բնութագրիչներ** . . . 69
8.1 Երկրում իրականացվող կրթական ծրագրերը . . . 69
8.2 Երեխաների ընթացիկ կրթական աստիճանը . . . 69
8.2.1 Երեխաների ընթացիկ հաճախելիությունը դպրոց / նախադպրոցական հաստատություն . . . 70
8.2.2 Դպրոց / նախադպրոց երբևէ չհաճախած երեխաներ . . . 74
8.2.3 Երեխաների գրագիտությունը . . . 72

8.3 Մասնագիտական դասընթացների և ուսուցողական ծրագրերի մասնակցություն . . . . . 74
8.4 Երեխաների նախադպրոց/դպրոց հաճախելիությունն ըստ աշխատանքային վիճակի . . . . . 75

**Բաժին 9. Այլ բնութագրիչներ** . . . . . 78
9.1 Տնային տնտեսության սոցիալ տնտեսական բնութագրիչները . . . . . 78
9.1.1 Կացարանի տեսակ և սեփականության ձև . . . . . 78
9.1.2 Կացարանային պայմաններն ըստ առկա հարմարությունների . . . . . 79
9.2 Տնային տնտեսությունների ակտիվներ . . . . . 84
9.3 Տնային տնտեսության ծախսեր / եկամուտներ և պարտավորություններ . . . . . 86
9.4 Միգրացիան երեխա ունեցող տնային տնտեսություններում . . . . . 89
9.5 Աշխատանքի պատճառով երեխաների առողջությանը հասցված վնաս, պատահար և հիվանդություն . . . . . 91

**Բաժին 10. Երեխայի աշխատանքի (ուսման) որոշիչ գործոնները** . . . . . 96
10.1 Տնային տնտեսության առջև ծառացած խնդիրները . . . . . 86
10.2 Տնային տնտեսությունների վարկեր . . . . . 91

**Բաժին 11. Եզրակացություններ և առաջարկություններ** . . . . . 108
11.1 Եզրակացություններ . . . . . 108

**Հավելված** . . . . . 115

## Հապավումներ

| | |
|---|---|
| ԱՎԾ | Ազգային վիճակագրական ծառայություն |
| ԱԵ | Աշխատող երեխաներ |
| ԱՀ | Աշխատուժի հետազոտություն |
| ԱՀՀ | Ազգային հաշիվների համակարգ |
| ԱՄՆ | Ամերիկայի Միացյալ Նահանգներ |
| ԱՄԿ | Աշխատանքի միջազգային կազմակերպություն |
| ԵԱԱՀ | Երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՆԱ | Համախառն ներքին արդյունք |
| ՀՏ | Հաշվային տեղամաս |
| ՄԱԿ | Միացյալ ազգերի կազմակերպություն |
| ՎԱ | Վնասակար աշխատանք |
| ՏԳՏԴ | Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ |
| ԶԴ | Զբաղմունքների դասակարգիչ |
| ՏԳ | Տնտեսական գործունեություն |
| ՏՏ | Տնային տնտեսություն |
| ՏՏԿԱՀ | Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն |

## Պայմանական նշաններ

| | |
|---|---|
| փոքր է կես միավորից | 0.0 |
| երևույթը բացակայում է | |
| տվյալները բացակայում են | ... |

**Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքների միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:**

# Հիմնական արդյունքներ

**Աղյուսակ 1.** ԵԱԱՀ հիմնական արդյունքներ, Հայաստան, **2015**

| | Ցուցանիշի անվանումը | Ընդամենը | Տղա | Աղջիկ |
|---|---|---|---|---|
| 1 | **517 տարեկան** բնակչության թվաքանակը, հազ. մարդ | | | |
| 1a | **մշտական բնակչություն** (ներառյալ` < 1 տարի բացակայողներ) | **459.9** | **245.3** | **214.6** |
| 1b | **առկա** բնակչությունն ըստ տարիքային խմբերի | **459.2** | **244.8** | **214.4** |
| | 5-11 տ. | 250.9 | 133.9 | 117.0 |
| | 12-15 տ. | 134.8 | 72.0 | 62.8 |
| | 16-17 տ. | 73.5 | 38.9 | 34.6 |
| 1c | **առկա** բնակչությունն ըստ բնակավայրի տեսակի | | | |
| | **Ընդամենը** | **459.2** | **244.8** | **214.4** |
| | Քաղաք | 253.2 | 132.7 | 120.5 |
| | Գյուղ | 205.9 | 112.1 | 93.8 |
| 2 | **Առկա բնակչությունից**` հարցմանը մասնակցած երեխաներ, հազ. մարդ | | | |
| | **Հարցմանը մասնակցած** երեխաներն ըստ տարիքային խմբերի | **453.4** | **241.3** | **212.1** |
| | 5-11 տ. | 247.8 | 132.0 | 115.8 |
| | 12-15 տ. | 133.0 | 71.0 | 62.0 |
| | 16-17 տ. | 72.6 | 38.3 | 34.2 |
| 2a | **Հարցմանը մասնակցած** երեխաներն ըստ բնակավայրի տեսակի | | | |
| | **Ընդամենը** | **453.4** | **241.3** | **212.1** |
| | Քաղաք | 247.5 | 129.2 | 118.2 |
| | Գյուղ | 205.9 | 112.1 | 93.8 |
| 3 | **Դպրոց / նախադպրոց հաճախող** (ընթացիկ ուս. տարում) **երեխաների թվաքանակը / ընդգրկվածությունը, հազ. Մարդ** | | | |
| | **Ընդամենը** | **430.4** | **228.7** | **201.7** |
| | 5-11 տ. | 233.2 | 125.7 | 107.5 |
| | 12-15 տ. | 131.7 | 70.1 | 61.6 |
| | 16-17 տ. | 65.5 | 33.0 | 32.5 |
| 4 | **Դպրոց / նախադպրոց** (ընթացիկ ուս. տարում) **չհաճախող երեխաների թվաքանակը, հազ. Մարդ** | | | |
| | **Ընդամենը** | **23.0** | **12.6** | **10.4** |
| | 5-11 տ. | 14.6 | 6.3 | 8.3 |
| | 12-15 տ. | 1.3 | 0.9 | 0.4 |
| | 16-17 տ. | 7.1 | 5.4 | 1.7 |
| 5 | **Երբևէ դպրոց / նախադպրոց չհաճախած երեխաների թվաքանակը, հազ. մարդ** | | | |
| | **Ընդամենը** | **13.4** | **6.1** | **7.4** |
| | 5-11 տ. | 13.4[1] | 6.0 | 7.4 |
| | 12-15 տ. | 0.1 | 0.1 | 0.0 |
| | 16-17 տ. | ... | ... | ... |
| 6 | **Դպրոց / նախադպրոց հաճախող երեխաների մասնաբաժինը, %** | | | |
| | **Ընդամենը** | **94.9** | **94.8** | **95.1** |
| | 5-11 տ. | 94.1 | 95.2 | 92.8 |
| | 12-15 տ. | 99.0 | 98.7 | 99.4 |
| | 16-17 տ. | 90.2 | 86.2 | 95.0 |

1 97.8%- ը մինչև 7 տ. երեխաներն են, ովքեր հետազոտությանը նախորդած 12 ամիսների ընթացքում չեն հաճախել նախադպրոցական հաստատություն կամ դպրոց:

| | Ցուցանիշի անվանումը | Ընդամենը | Տղա | Աղջիկ |
|---|---|---|---|---|
| 7 | 5-17 տ. երեխաների տնտեսական ակտիվության ընթացիկ կարգավիճակը, հազ. մարդ | | | |
| | **Չաշխատող երեխաներ** | **401.4** | **206.4** | **195.0** |
| | *նրանցից՝ գործազուրկ* | 0.5 | 0.3 | 0.2 |
| | **Աշխատող (զբաղված) երեխաներ** | **52.0** | **34.9** | **17.1** |
| | *նրանցից՝ ներգրավված.* | | | |
| | **արգելված համարվող աշխատանքում** | **39.3** | **27.4** | **12.0** |
| | *նրանցից՝ ներգրավված.* | | | |
| | վնասակար աշխատանքում | 31.2 | 22.5 | 8.7 |
| | արգելված այլ աշխատանքում | 8.1 | 4.8 | 3.3 |
| 8 | Աշխատող (զբաղված) երեխաների թվաքանակը, հազ. մարդ | | | |
| | **Ընդամենը** | **52.0** | **34.9** | **17.1** |
| | 5-11 տ. | 11.3 | 7.1 | 4.1 |
| | 12-15 տ. | 20.8 | 13.6 | 7.2 |
| | 16-17 տ. | 19.9 | 14.2 | 5.7 |
| 9 | Տնտեսական ակտիվության մակարդակը, % նույն տարիքի բնակչության մեջ | | | |
| | **Total** | **11.6** | **14.6** | **8.2** |
| | 5-11 տ. | 4.6 | 5.4 | 3.6 |
| | 12-15 տ. | 15.7 | 19.2 | 11.8 |
| | 16-17 տ. | 27.7 | 37.6 | 16.7 |
| 10 | 10[2]-17տ. աշխատող երեխաներն ըստ զբաղվածության կարգավիճակի, հազ. մարդ | | | |
| | **Ընդամենը** | **46.7** | **31.8** | **14.9** |
| | Վարձու աշխատող | 2.0 | 1.7 | 0.3 |
| | Ինքնազբաղված | 9.2 | 6.9 | 2.3 |
| | Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ | 35.5 | 23.1 | 12.3 |
| | Այլ | 0.1 | 0 | 0.1 |
| 11 | 517 տ. երեխաների թվաքանակն ըստ գործունեության ոլորտների 1 նիշի դասակարգման, հազ. մարդ | | | |
| | **Ընդամենը** | **52.0** | **34.9** | **17.1** |
| | Գյուղատնտեսություն, անտառատնտեսություն և ձկնորսություն | 47.0 | 31.1 | 15.8 |
| | Հանքագործական արդյունաբերություն | ... | ... | ... |
| | Մշակող արդյունաբերություն | 0.7 | 0.6 | 0.1 |
| | Էլեկտրականություն, գազ, ջուր | 0.1 | 0.1 | ... |
| | Շինարարություն | 0.4 | 0.4 | ... |
| | Մանրածախ և մեծածախ առևտուր, նորոգում | 1.7 | 1.4 | 0.3 |
| | Փոխադրումներ և պահեստային տնտեսություն | 0.0 | ... | 0.0 |
| | Կացության և հանրային սննդի կազմակերպում | 0.2 | 0.1 | 0.1 |
| | Տեղեկատվություն և կապ | ... | ... | ... |
| | Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն | ... | ... | ... |
| | Վարչարարական և օժանդակ գործունեություն | ... | ... | ... |
| | Պետական կառավարում և պաշտպանություն | ... | ... | ... |
| | Կրթություն | 0.0 | 0.0 | ... |
| | Մշակույթ, զվարճություններ և հանգիստ | 0.0 | ... | 0.0 |
| | Սպասարկման այլ ծառայություններ | 0.3 | 0.2 | 0.1 |
| | ՏՏ գործունեություն որպես գործատու, ՏՏում ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար | 1.6 | 1.0 | 0.6 |

2 5-9 տարեկան երեխաները զբաղվածության կարգավիճակի վերաբերյալ հարցին չեն պատասխանել:

| | Ցուցանիշի անվանումը | Ընդամենը | Տղա | Աղջիկ |
|---|---|---|---|---|
| 12 | **517 տ. երեխաների թվաքանակն ըստ փաստացի աշխատած միջին շաբաթական ժամերի, հազ. Մարդ** | | | |
| | **Ընդամենը** | **52.0** | **34.9** | **17.1** |
| | 1  14 ժամ | 37.0 | 23.6 | 13.3 |
| | 15  29 ժամ | 11.7 | 8.4 | 3.3 |
| | 30  42 ժամ | 2.2 | 1.8 | 0.4 |
| | 43 > ժամ | 1.2 | 1.1 | 0.1 |
| 13 | **517 տ. երեխաների փաստացի աշխատած միջին շաբաթական ժամերը, %** | | | |
| | **Ընդամենը** | **100** | **100** | **100** |
| | 1  14 ժամ | 71.1 | 67.7 | 78.1 |
| | 15  29 ժամ | 22.4 | 24.0 | 19.2 |
| | 30  42 ժամ | 4.2 | 5.1 | 2.4 |
| | 43 > ժամ | 2.2 | 3.1 | 0.3 |
| 14 | **517 տ. վարձու աշխատողների աշխատավարձի վճարման ձևերը, %** | | | |
| | **Ընդամենը** | **100** | **100** | **100** |
| | Գործավարձ | 12.5 | 14.5 | ... |
| | Ժամավարձ | 1.0 | 1.2 | ... |
| | Օրական | 8.8 | 10.2 | ... |
| | Շաբաթական | 58.3 | 56.3 | 71.3 |
| | Աշխատանքն ավարտելուց հետո | 19.3 | 17.8 | 28.7 |
| 15 | **517 տ. երեխաներն ըստ աշխատելու հիմնական պատճառների, %** | | | |
| | **Ընդամենը** | **100** | **100** | **100** |
| | Վաստակել ընտանեկան եկամուտը | 1.3 | 1.8 | 0.2 |
| | Ավելացնել ընտանեկան եկամուտը | 2.0 | 2.6 | 0.9 |
| | Օգնել վճարել ընտանիքի պարտքը | 2.3 | 2.5 | 1.9 |
| | Օգնել ընտանեկան բիզնեսում / Գ/Տում | 84.2 | 82.5 | 87.9 |
| | Ունենալ սեփական գումար | 1.7 | 2.1 | 0.8 |
| | Ձեռք բերել հմտություններ / մասնագիտական փորձ | 4.7 | 4.1 | 5.9 |
| | Սովորելը ոչ մի օգուտ չունի ապագայի համար | 0.3 | 0.4 | 0.0 |
| | Տարածքում ուս. հաստատություն չկա /հեռու է | ... | ... | ... |
| | Ի վիճակի չեմ հոգալ ուսման հետ կապված ծախսերը | 0.4 | 0.2 | 0.9 |
| | Հետաքրքրված չեմ ուսմամբ | 1.9 | 2.4 | 0.9 |
| | Պարտադրում են աշխատել | 0.3 | 0.4 | ... |
| | Ժամանակավորապես փոխարինում եմ | 0.1 | 0.2 | ... |
| | Այլ | 0.9 | 1.0 | 0.6 |
| 16 | **517 տ. երեխաները, ովքեր վերջին 1 տարվա ընթացքում ստացել են վնասվածք՝ կապված աշխատանքի հետ** | | | |
| | **Ընդամենը, հազ. մար** | **6.2** | **4.5** | **1.7** |
| | **Ընդամենը, %** | **100** | **100** | **100** |
| | Մակերեսային վնասվածք / բաց վերք | 6.2 | 7.6 | 2.8 |
| | Կոտրվածք, հոդախախտում/քերծվածք, այրվածք / ցրտահարություն | 5.1 | 5.1 | 5.0 |
| | Շնչառական, տեսողական, լսողական, մաշկային, մարսողական խնդիրներ | 85.6 | 86.2 | 83.9 |
| | Այլ | 3.1 | 1.1 | 8.2 |

| Ցուցանիշի անվանումը | | Ընդամենը | Տղա | Աղջիկ |
|---|---|---|---|---|
| 17 | **517 տ. երեխաները, ովքեր աշխատել են վնասակար աշխատանքային պայմաններում կամ կրել են ծանր բեռներ[3]** | | | |
| | *այդ թվում`* | | | |
| | **Տեղափոխել են ծանր բեռներ[4], հազ. մարդ** | 17.2 | 14.3 | 2.9 |
| | 5-11 տ. | 2.0 | 1.2 | 0.8 |
| | 12-15 տ. | 6.6 | 5.2 | 1.4 |
| | 16-17 տ. | 8.6 | 7.8 | 0.8 |
| | **Աշխատել են վնասակար պայմաններում** | | | |
| | **Ընդամենը, հազ. Մարդ** | **23.6** | **16.5** | **7.1** |
| | **Ընդամենը, %** | **100** | **100** | **100** |
| | Փոշի, գոլորշի | 46.5 | 42.5 | 56.0 |
| | Կրակ, գազ | 2.0 | 0.4 | 5.7 |
| | Բարձր ձայն, վիբրացիա | 1.8 | 1.7 | 2.1 |
| | Ծայրահեղ ցուրտ, շոգ | 10.7 | 10.0 | 12.4 |
| | Վտանգավոր գործիքներ (դանակ, կացին և այլն) | 24.1 | 30.1 | 10.2 |
| | Աշխատանք բարձրության վրա | 8.2 | 7.6 | 9.6 |
| | Ոչ բավարար օդափոխություն | 2.4 | 2.8 | 1.4 |
| | Քիմիկատներ | 3.4 | 3.8 | 2.5 |
| | Այլ | 0.9 | 1.1 | 0.1 |

3 Նույն երեխան կարող էր նշել աշխատանքի վնասակարության մեկից ավելի գործոններ:

4 Տվյալները հիմնված են իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ երեխաների սուբյեկտիվ ընկալման, այլ ոչ թե օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմաների *(օրինակ` աղմուկի չափ` դեցիբելներով և այլն) խախտումների բացահայտումների վրա (տե՛ս Հավելված 1-ում C38-C43 հարցերը):*

**Գծապատկեր 1.** 5-17 տարեկան երեխաների աշխատանքի գնահատման ընդհանուր շրջանակ 2015թ.



## Բաժին 1.
# Ներածություն

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ), ՄԱԿ-ի «Երեխայի իրավունք-ների մասին» (հաստատված՝ 1993թ.), ԱՄԿ «Նվազագույն տարիքի մասին» No. 138 (հաստատված՝ 2006թ.) և «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» No. 182 (հաստատված՝ 2006թ.) կոնվենցիաներով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների իրագործման շրջանակում, 2015թ. Աշխատանքի միջազգային կազմակերպության օժանդակությամբ իրականացրել է երեխայի աշխատանքի ազգային հետազոտությունը:

Երեխայի աշխատանքի ազգային հետազոտությունը ներառել է երկրի ողջ տարածքից ընտրված 6.520 տնային տնտեսություններում բնակվող 517 տարեկան երեխաներին:

Հետազոտության հարցաթերթը ներկայացվել է կարծիքի ՀՀ վեց շահառու պետական լիազոր մարմինների և երկու սոցիալական գործընկերների (Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա և Հայաստանի գործատուների հանրապետական միություն):

Հետազոտությունը հնարավորություն է տվել տեղեկատվություն հավաքագրել երեխաների տնտեսական ակտիվության, սոցիալական կարգավիճակի և կենսապայմանների, զբաղվածության, աշխատանքային գործունեության բնույթի, նրանց աշխատանքի և աշխատանքային պայմանների, գործունեության ոլորտների և զբաղմունքների շրջանակի, տնային տնտեսությունում կենցաղային գործերով երեխաների զբաղվածության, աշխատանքկրթություն, աշխատանքառողջություն փոխազդեցության վերաբերյալ: Ի թիվս վերոնշյալի, հետազոտության շնորհիվ հնարավոր է դարձել Հայաստանում առաջին անգամ վիճակագրորեն չափելի դարձնել երեխայի արգելված համարվող աշխատանքն իր տարատեսակ բնութագրիչներով, գնահատել վնասակար աշխատանքներում երեխաների ներգրավվածությունը՝ Աշխատանքի վիճակագիրների 18րդ միջազգային համաժողովի (ԱՄԿ, 2008) կողմից ընդունած «Երեխայի արգելված աշխատանքի վիճակագրության վերաբերյալ» բանաձևերի դրույթներին և երաշխավորություններին համապատասխան:

Հետազոտության արդյունքները հնարավորություն կտան ոչ միայն լրացնել աշխատաշուկայում երեխաների մասնակցության վերաբերյալ վիճակագրական թարմ տեղեկատվության պակասը, հարստացնել Հայաստանի աշխատանքի շուկայի վիճակագրությունը, այլ նաև հստակեցնել երեխաների տնտեսական ակտիվության փաստացի իրավիճակը վերոնշյալ կոնվենցիաների պահանջների համատեքստում:

Լիահույս ենք, որ հետազոտության արդյունքները կնպաստեն երեխայի աշխատանքի վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացմանը, կարող են օգտակար լինել քաղաքական որոշումներ կայացնող ատյանների և հետազոտողների, ինչպես նաև երեխաների պաշտպանության և մշտադիտարկման ազգային ծրագրերի համար:

ՀՀ ԱՎԾ-ն ապահովել է հետազոտության գործիքների (հարցաթերթ, ընտրանք և այլն), մեթոդաբանության տեղայնացման, դաշտային աշխատանքների կազմակերպման, հավաքագրված տվյալների ստուգաճշտման, մուտքագրման, ծածկագրման և անվանազերծված ամփոփ արդյունքների ստացման և գլխավոր համակցության նկատմամբ տվյալների տարածման աշխատանքները:

Ծրագրի ֆինանսական և վարչական կառավարումն իրականացվել է «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» (ՄԶՄԿ) ՀԿ կողմից:

Հետազոտությունը և սույն զեկույցի հրատարակումը ֆինանսավորվել է ԱՄՆ կողմից ֆինանսավորվող ԱՄԿ «Երեխայի արգելված աշխատանքի գնահատման և քաղաքականության մշակման գլոբալ հետազոտություն» (MAP) ծրագրի միջոցներով: Հետազոտության արդյունքում հավաքագրվել է ծավալուն տեղեկատվություն և մեկ զեկույցի շրջանակում բոլոր հարցերին անդրադառնալ, անշուշտ, հնարավոր չէ: Այս առումով՝ հետազոտության անվանազերծված տվյալների բազան (շտեմարանը), զետեղվել է ՀՀ ԱՎԾ կայքէջում, առցանց հասանելի է http://armstat.am/am/?nid=642 հասցեում և կարող է օգտագործվել հետագա և ավելի նեղ մասնագիտական հետազոտությունների համար:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն իր երախտիքի խոսքն է հղում՝

- Միացյալ Նահանգների Աշխատանքի Դեպարտամենտին Ծրագիրը ողջ ծավալով ֆինանսավորելու համար.
- ԱՄԿ-ին՝ Ծրագրի գլոբալ կառավարման և մեթոդաբանական աջակցության համար.
- ԱՄԿ-ից՝ պարոն Բիջոյ Ռայչաուդհուրին և Ֆեդերիկո Բլանկո Ալլաիսին՝ հետազոտության նախապատրաստման, իրականացման և զեկույցի մշակման ընթացքում ցուցաբերած անգնահատելի օժանդակության համար.
- ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի անդամ Գագիկ Գևորգյանին, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լուսինե Քալանթարյանին, նույն բաժնի առաջատար մասնագետ Ջեմմա Ավոյանին, ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների պետերին, հետազոտության դաշտային աշխատանքները և տվյալների մշակումն իրականացրած անձնակազմին.
- տնային տնտեսություններին՝ հետազոտությանը մասնակցության համար.
- ՄՋՄԿ աշխատանքային խմբին.
- բոլոր նրանց, ում համատեղ ջանքերով ապահովվել է հետազոտության բարեհաջող իրականացումը և զեկույցի պատրաստումը:

Ծրագրի արդյունավետ իրականացմանն էապես օժանդակել է նաև ԱՄԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ենթատարածաշրջանային գրասենյակի Հայաստանում ազգային համակարգող Նունե Հովհաննիսյանը:

**Ստեփան Մնացականյան**

Հայաստանի Հանրապետության
Ազգային վիճակագրական
ծառայության նախագահ

**Բաժին 2.**

# Երկրի նկարագիրը

## 2.1 Ժողովրդագրական կազմը

Ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող մշտական բնակչության թվաքանակի ընթացիկ հաշվառման արդյունքների, ՀՀ մշտական բնակչությունը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 3 010.6 հազար մարդ` 2014թ. տարեսկզբի համեմատ նվա-զելով 6.5 հազար մարդով կամ 0.2%-ով: Նույն ժամանակահատվածում քաղաքային բնակչության տեսակարար կշիռը կազմել է 63.3%, իսկ գյուղականինը` 36.7%: Բնակչության 47.8 %-ը կազմել է արական, իսկ 52.2%-ը` իգական սեռի բնակչությունը: Բնակչության միջին տարիքը, 2015թ.-ի տարեսկզբի դրությամբ, կազմել է 35.9 տարի, արական սեռի համար` 34.1, իգականի համար` 37.6 տարի:

Համաձայն ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքների, 5-17 տարեկան բնակչության թվաքանակը կազմել է 488 535 մարդ (ընդամենը բնակչության 16.2%-ը), որոնց գերակշիռ մասը` 59.5%-ը (290 833 մարդ), եղել է քաղաքաբնակ և 40.5%-ը (197 702 մարդ)` գյուղաբնակ: 5-17 տարեկան բնակչության 53%-ը կամ 259 685 մարդ կազմել են արական սեռի երեխաները և 47%-ը կամ 229 850 մարդ` իգական սեռի երեխաները:

**Աղյուսակ 2.1.1** ՀՀ մշտական բնակչության բաշխումն ըստ սեռի, տարիքի և բնակավայրի 2011թ. մարդահամարի արդյունքներով

| | Ընդամենը բնակչություն | | Քաղաք | | Գյուղ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանակ, հազ. մարդ | % | Թվաքանակ, հազ. մարդ | % | Թվաքանակ, հազ. մարդ | % |
| **Ընդամենը** | **3018. 9** | **100** | **1911.3** | **100** | **1107.6** | **100** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | | |
| 0 - 4 | 207.6 | 6.9 | 127.7 | 6.7 | 79.9 | 7.2 |
| 5 - 17 | 488.5 | 16.2 | 290.8 | 15.2 | 197.7 | 17.9 |
| 18 - 64 | 2005.6 | 66.4 | 1285.4 | 67.3 | 720.2 | 65 |
| 65 + | 317.1 | 10.5 | 207.4 | 10.8 | 109.8 | 9.9 |
| **ՏՂԱՄԱՐԴ** | | | | | | |
| **Ընդամենը** | **1448.1** | **100** | **895.4** | **100** | **552.7** | **100** |
| 0 - 4 | 110.6 | 7.6 | 67.5 | 7.5 | 43.1 | 7.8 |
| 5 - 17 | 258.7 | 17.9 | 152.7 | 17.1 | 106.0 | 19.2 |
| 18 - 64 | 951.4 | 65.7 | 591.2 | 66 | 360.1 | 65.2 |
| 65 + | 127.4 | 8.8 | 83.9 | 9.4 | 43.5 | 7.9 |
| **ԿԻՆ** | | | | | | |
| **Ընդամենը** | **1570.8** | **100** | **1015.9** | **100** | **554.9** | **100** |
| 0 - 4 | 97.0 | 6.2 | 60.2 | 5.9 | 36.8 | 6.6 |
| 5 - 17 | 229.9 | 14.6 | 138.1 | 13.6 | 91.7 | 16.5 |
| 18 - 64 | 1054.2 | 67.1 | 694.2 | 68.3 | 360.0 | 64.9 |
| 65 + | 189.7 | 12.1 | 123.4 | 12.1 | 66.3 | 11.9 |

Աղբյուրը` ՀՀ ԱՎԾ, Մարդահամար 2011

ՀՀ 2011 մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ ստացված տվյալների համաձայն, ՀՀ մշտական բնակչության սեռատարիքային կազմում տեղի են ունեցել աննշան փոփոխություններ՝ պայմանավորված բնակչության բնական և մեխանիկական շարժի ոչ բարենպաստ դինամիկայով:

**Աղյուսակ 2.1.2** ՀՀ մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակի բաշխումն ըստ սեռի և տարիքային խմբերի, 2015թ.

| | Ընդամենը բնակչություն | | Տղամարդ | | Կին | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանակ, հազ. մարդ | % | Թվաքանակ, հազ. մարդ | % | Թվաքանակ, հազ. մարդ | % |
| **Ընդամենը** | **3004.6** | **100** | **1434.1** | **100** | **1570.5** | **100** |
| **ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ** | | | | | | |
| 0 - 4 | 209.3 | 7.0 | 111.3 | 7.8 | 97.9 | 6.2 |
| 5 - 11 | 274.8 | 9.1 | 146.7 | 10.2 | 128.1 | 8.2 |
| 12 - 15 | 136.1 | 4.5 | 72.8 | 5.1 | 63.3 | 4.0 |
| 16 - 17 | 71.0 | 2.4 | 37.6 | 2.6 | 33.4 | 2.1 |
| **Ընդամենը 5 -17 տար.** | **481.9** | **16.0** | **257.2** | **17.9** | **224.8** | **14.3** |
| 18-64 | 1987.7 | 66.2 | 936.6 | 65.3 | 1051.0 | 66.9 |
| 65 + | 325.7 | 10.8 | 129.0 | 9.0 | 196.8 | 12.5 |

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ընթացիկ հաշվառում

Երկու աղյուսակների տվյալների համադրումը ցույց է տալիս, որ հետմարդահամարային շրջանում սույն հետազոտության համար թիրախային համարող 5-17 տարիքային խմբում մշտական բնակչության թվաքանակը կրճատվել է մոտ 6.6 հազար մարդով, ինչն էական ազդեցություն չի ունեցել այս տարիքային խմբի կառուցվածքային համամասնությունների վրա (փոփոխությունները եղել են տասնորդական տոկոսային կետերի չափով):

**Բնակչության բնական շարժը**. 2015թ. հունվար-դեկտեմբերին արձանագրվել է 41 815 ծնված՝ 2014թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազելով 2.8%-ով: Ծնելիության ընդհանուր գործակիցը 1 000 բնակչի հաշվով կազմել 13.9 ‰՝ 2014թ. համեմատ նվազելով 0.4 պրոմիլային կետով:

**Պտղաբերության** (ծնելիության գումարային) գործակիցը՝ ծնունակ տարիքի (15-49 տարեկան) 1 կնոջ հաշվով 2014թ. կազմել է 1.651 միավոր, ինչը զգալիորեն ցածր է բնակչության պարզ վերարտադրության համար անհրաժեշտ 2.150 ցուցանիշից: Մոր միջին տարիքը առաջին երեխայի ծննդյան պահին՝ 24.3 տարեկան:

Կյանքի սպասվող միջին տևողությունը՝ ծննդյան պահից, 2014թ.-ին տղամարդ-կանց համար կազմել է 71.8 տարի, կանանց համար՝78.1 տարի: Ցուցանիշը գրեթե նույնական է քաղաքային և գյուղական բնակչության համար:

Հայաստանի ժողովրդագրական վիճակի հիմնախնդիրներից է բնակչության ծերացումը[4], որը բնութագրող ցուցանիշը 2015թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ-ում կազմել է 10.7%:

2015թ. արձանագրվել է մահացության 27 835 դեպք: 2014թ. համեմատ, մահվան դեպքերն աճել են 0.4 %-ով, իսկ մահացության ընդհանուր գործակիցը՝ 0.1 պրոմիլային կետով:

2015թ. նախորդ տարվա համեմատ արձանագրվել է 0-1 տարեկան երեխաների մահվան դեպքերի նվազում՝ 1.6%-ով, իսկ մանկական մահացության գործակիցը, 1000 կենդանի ծնվածի հաշվով, պահպանվել է նախորդ տարվա մակարդակի վրա և կազմել է 8.8‰: 2015թ. հանրապետությունում արձանագրվել է 0- 4 տարեկան երեխաների մահվան 435 դեպք, որի կառուցվածքում մինչև 1 տարեկան երեխաների մահացության դեպքերը կազմել են 85.1%:

4 Ըստ ՄԱԿ-ի կողմից սահմանված ժողովրդագրական ծերացման սանդղակի, երկրի բնակչությունը համարվում է ծերացող, եթե 65 և բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը կազմում է բնակչության 7%-ից ավելին:

Եթե մանկական մահացության գործակիցը շարունակաբար կրճատվել է նախորդ տարիների համեմատ, ապա մայրական մահացության գործակիցը դրսևորել է անկանոն վարք: Հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և ետծննդյան ժամանակահատվա-ծում, 2015թ. գրանցվել է մայրական մահացության 6 դեպք և մայրական մահացության գործակիցը` 100 000 կենդանի ծնվածի հաշվով, կազմել է 14.3 միավոր:

2015թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի 66.9%-ը կազմել է աշխատունակ տարիքի բնակչությունը (16-62 տարեկան), 20.5%-ը` աշխատունակ տարիքից ցածր (0-15 տարեկան), իսկ 12.6%-ը` աշխատունակ տարիքից բարձր (63 և ավելի տարեկան) բնակչությունը: Հանրապետության 1000 աշխատունակ տարիքի բնակչությանը բաժին է ընկել 494 տարեց և անչափահաս (0-15 տարեկան) անձ:

Հանրապետությունում տնային տնտեսությունների գերակշիռ մասի գլխավորը հանդիսացել են տղամարդիկ` 67%, իսկ կին գլխավոր ունեցող տնային տնտեսություն-նե-րի մասնաբաժինը կազմել է` 33% (քաղաքային բնակավայրերում` 35.9%, իսկ գյուղա-կան բնակավայրերում` 27.2%):

**Միգրացիա.** Ըստ 2014թ. ՏՏԿԱՀ արդյունքների, ՀՀ մասնավոր տնային տնտեսությունների 8.9%-ը կամ նրանցում բնակվող 15 և բարձր տարիքի անդամների 10.3%-ը 2011-2014թթ. ներգրավված են եղել արտաքին և ներքին միգրացիոն գործընթացներում: 2014թ. միգրացիայի մնացորդի բացասական ցուցանիշը (միգրացիայի սալդոն) գնահատվել է 21.8 հազար մարդ, որից քաղաքային բնակչությանը` 11.4 հազար մարդ, գյուղական բնակչությանը` 10.4 հազար մարդ:

## 2.2 Երկրի տնտեսության և աշխատանքի շուկայի բնութագրերը

2000-ականների ընթացքում ՀՀ-ում պահպանվել է կայուն տնտեսական աճի վարքագիծ, որի շնորհիվ մինչ 2009թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը Հայաստանը միացավ եկամուտների միջին մակարդակ ունեցող երկրների խմբին: Տնտեսական աճը հանգեցրեց զբաղվածության մակարդակի կայունացմանը, իրական աշխատավարձերի և համախմբված բյուջեից սոցիալական ոլորտներին ուղղվող ծախսերի ավելացմանը: Սակայն, համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով տնտեսությունը սկսեց անկում ապրել 2008թ.-ի չորրորդ եռամսյակից, երբ գրանցվեց 5.9% տնտեսական անկում, իսկ տարեկան ՀՆԱ-ի աճը կազմեց 6.9%` 2007թ. 13.7% երկնիշ աճի դիմաց: Շեշտակի նվազեցին ներդրումները, կրճատվեցին շինարարության ծավալները և 2009թ.-ին գրանցվեց իրական ՀՆԱ-ի 14.1% անկում, որին հաջորդեց դանդաղ վերականգնումը` 2.2% ՀՆԱ հավելած 2010 թ.-ին, 4.7%` 2011թ.-ին: Բավականին զգալի էր 2012թ. ՀՆԱ-ի աճը` 7.2%, սակայն դա դեռևս բավարար չէր հասնելու 2008թ.-ի մակարդակին:

Տնտեսության զարգացման միտումները շարունակվեցին 2013թ.-ին` գրանցվեց 3.3% տնտեսական աճ (հաշվարկված ըստ ԱՀՀ 2008 մեթոդաբանության), որի դանդաղ տեմպը, սակայն, հիմնականում պայմանավորված էր դարձյալ շինարարության ոլորտի անկմամբ: 2014 և 2015թթ. տնտեսական աճը կազմել է, համապատասխանաբար` 3.5% և 3%` պայմանավորված ներքին և արտաքին պահանջարկի դանդաղ աճով, փոխարժեքի արժեզրկմամբ, արտաքին աշխարհից դրամական փոխանցումների կրճատումով և այլն:

**Աղյուսակ 2.2.1** Մակրոտնտեսական ցուցանիշները, 2012-2014թթ..

| | 2012 | 2013 | 2014 |
|---|---|---|---|
| Անվանական ՀՆԱ (մլրդ. ՀՀ դրամ)[5] | 4 266.5 | 4 555.6 | 4 843.2 |
| Անվանական ՀՆԱ (միլիոն ԱՄՆ դոլար) | 10 619.4 | 11 121.3 | 11 644.4 |
| Իրական ՀՆԱ-ի աճ (տարեկան %-ային աճ)2 | ... | 3.3 | 3.5 |
| Իրական ՀՆԱ-ի աճ 2012թ. նկատմամբ (%-ային աճ) | 100.0 | 3.3 | 6.9 |
| ԱՄՆ դոլարի փոխարժեք (ժամանակաշրջանի միջին) | 401.76 | 409.63 | 415.92 |
| Գործազրկության մակարդակ (տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ %) | 17.3 | 16.2 | 17.6 |

| | 2012 | 2013 | 2014 |
|---|---|---|---|
| Միջին ամսական անվանական աշխատավարձ (ՀՀ դրամ) | 140 739 | 146 524 | 158580 |
| Գնաճ (միջին տարեկան) (%-ային աճ) | 2.6 | 5.8 | 3.0 |
| Համախմբված բյուջեի ծախսեր (ՀՆԱ-ի նկատմամբ %) | 24.3 | 25.7 | 26.2 |
| Համախմբված բյուջեի պակասորդ (ՀՆԱ-ի նկատմամբ %) | 1.4 | 1.5 | 1.9 |

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ

**Աշխատանքի շուկա.** Հայաստանի աշխատանքի շուկայի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը յուրաքանչյուր տարի ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվող Աշխատուժի հետազոտությունն է (ԱՀ), որպես ընտրանքային որոշակի մեթոդով ընտրված տնային տնտեսութ-յուն-ների (ՏՏ) վիճակա-գրական ուսում-նա-սիրություն և որի նպատակը երկրի աշխա-տանքի շուկան բնութագրող ցուցանիշների վերաբերյալ համա--պար--փակ տեղեկատ-վության ապահո-վումն է: Հետազոտության մեթոդաբանությունը հիմնականում համապա-տաս-խանում է ԱՄԿ կողմից առաջարկվող սահմանում-ներին ու դրույթներին: Ուսումնասիրվող երևույթների մասշտաբների հնարավորինս ընդգրկման նպատակով **աշխատունակ տարիք** սահմանվել է 15-75 (ներառյալ) տարիքային միջակայքը:

Համաձայն ԱՀ արդյունքների Հայաստանի 15-75 տարեկան բնակչության թվաքանակը (աշխատանքային ռեսուրսները) 2014թ. կազմել է 2.2 մլն. մարդ կամ երկրի առկա բնակչության 75%-ը, որից տնտեսապես ակտիվ է եղել 1.4 մլն-ը (63%)՝ ձևավորելով երկրի աշխատանքի շուկան: 0.8 մլն. տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունն աշխատանքի շուկայում որևէ մասնակցություն չի ունեցել:

1.4 մլն. աշխատուժից **1.2 մլն-ը եղել են զբաղված**, որոնց 77%-ն ունեցել են մշտական աշխատանք: Գյուղատնտեսությունը եղել է զբաղվածություն ապահովող գերակա ոլորտը (35% կամ 395 հազար մարդ), որտեղ աշխատատեղերի 52%-ը եղել են սեզոնային կամ ժամանակավոր, իսկ 19%-ը բաժին է ընկել բնատնտեսությանը (գյուղ. մթերքի արտադրություն բացառապես սեփական տնտեսության սահմաններում սպառման համար): Ոչ գյուղատնտեսական հատվածում աշխատատեղերի մեկ երրորդն ապահովել են կրթության, առողջապահության և պետական կառավարման ոլորտները (246 հազար մարդ): Ըստ այդմ, երկրում 15-75 տարեկան բնակչության զբաղվածության մակարդակը՝ հաշվարկված աշխատանքային ռեսուրսների նկատմամբ, կազմել է 52%: Տղամարդկանց շրջանում զբաղվածության 62% մակարդակը 17%-ային կետով գերազանցել է կանանց համապատասխան ցուցանիշին (45%): Զբաղվածության ամենաբարձր մակարդակը (65%) արձանագրվել է գյուղական բնակավայրերում, որը 20%-ային կետով բարձր է եղել քաղաքային բնակավայրերում զբաղվածության ցուցանիշից (45%)՝ բացառապես պայմանավորված այս կամ այն չափով գյուղատնտեսական գործունեությամբ բնակչության լայնամասշտաբ ներգրավվածությամբ:

Գործազրկության 17.6% մակարդակի պարագայում, գործազուրկ է եղել տնտեսապես ակտիվ տղամարդկանց 15.8%-ը և կանանց՝ 19.5%-ը: Գործազրկության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է ք. Երևանում՝ 27%, քաղաքային բնակավայրերի 25%-ի համեմատ, իսկ գյուղաբնակների շրջանում՝ 7%:

Հայաստանի աշխատանքի շուկայում նշանակալի մասնաբաժին ունի ոչ ֆորմալ զբաղվածությունը, որը գնահատվում է՝ հիմնվելով աշխատատեղերի թվի և ոչ թե աշխատողների թվաքանակի վրա:

Համաձայն 2014թ. ԱՀ արդյունքների, ՀՀ աշխատաշուկայում առկա աշխատատեղերի 50%-ը (կամ 584 հազարը), գնահատվել են ոչ ֆորմալ, որոնց 72%-ը՝ ի հաշիվ սեփական գյուղացիական տնտեսություններում[6] բնակչության զբաղվածության, բաժին է ընկել գյուղատնտեսական ոլորտին, ինչով էլ բացատրվում է քաղաքաբնակների (30%) համեմատ գյուղաբնակների ոչ ֆորմալ զբաղվածության 2.5 անգամ բարձր մակարդակը:

Ոչ գյուղատնտեսական ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը կազմել է 22%, որտեղ, որպես օրինաչափություն, «առաջատար» ոլորտը շինարարությունն է (62%): Ոչ ֆորմալ աշխատատեղերում զբաղվածության կին-տղամարդ հարաբերակցությունը բնորոշվել է նրանով, որ, գյուղատնտեսական ոլորտում զբաղվածության մակարդակը եղել է գրեթե նույնական, այն դեպքում, որ ոչ գյու-

5 Սկսած 2015թ.-ից ՀՆԱ ցուցանիշը ՀՀ ԱՎԾ կողմից հաշվարկվում է համաձայն Ազգային հաշիվների համակարգ 2008 (ԱՀՀ 2008) միջազգային ստանդարտի՝ ըստ որի վերանայվել են նաև 2012-2014թթ. ՀՆԱ ցուցանիշները: Սույն զեկույցում 2013-2014թթ. ՀՆԱ-ի և տնտեսական աճի վերաբերյալ տվյալները հաշվարկված են ըստ ԱՀՀ 2008-ի:

6 Հայաստանում գյուղացիական տնտեսություններում զբաղվածների բացարձակ մեծամասնությունը կազմակերպա-իրավական կարգավիճակ չունեն, ուստի ԱՄԿ մեթոդաբանության համաձայն համարվում են ոչ ֆորմալ տնտեսություններում ոչ ֆորմալ զբաղվածներ:

**Գծապատկեր 2.2.1** 15-29տ. երիտասարդության զբաղվածության և գործազրկության մակարդակներն ըստ սեռի, 2014թ.




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱՀ 2014

դատնտեսականում տղամարդիկ 2 անգամ ավելի հաճախ են զբաղվել չգրանցված աշխատանքային գործունեությամբ (որպես վարձու աշխատող կամ ինքնազբաղված), քան կանայք: Հարկ է նշել նաև, որ 2008թ. ի վեր ՀՀ աշխատաշուկայում ոչ ֆորմալ զբաղվածության մասշտաբներն էական փոփոխությունների չեն ենթարկվել:

## 2.3 Երեխայի աշխատանքի վիճակագրությունը

Երկրում երեխայի աշխատանքի վիճակի վերաբերյալ ընթացիկ և/կամ որոշակի պարբերականությամբ ստացվող տեղեկատվության աղբյուր են հանդիսանում ՀՀ ԱՎԾ կողմից տնային տնտեսություններում ամենամյա պարբերականությամբ իրականացվող ԱՀ-ն և ՏՏԿԱՀ-ն, 5-ամյա պարբերականությամբ (2000, 2005թ., 2010թ., 2015թ.) իրականացվող Հայաստանի ժողովրդագրության և առողջության հետազոտությունը (ՀԺԱՀ), ինչպես նաև միանվագ թեմատիկ հետազոտությունները, որոնք փոքրիշատե լրացրել են երևույթի վերաբերյալ տեղեկատվական բացը կամ ապահովել են այլընտրանքային տեղեկատվությամբ:

Կանոնավոր իրականացվող հետազոտություններից են ԱՀ-ն և ՏՏԿԱՀ-ն, որոնց շրջանակում հետազոտվող վիճակագրական միավորը 15-75 տարեկան բնակչությունն է, ինչը նշանակում է, որ երեխաների աշխատանքային վիճակի վերաբերյալ առկա տեղեկատվությունը սահմանափակվում է 15-17 տարիքային խմբով: Ավելին՝ ընտրանքային համակցության մեջ այդ տարիքային խմբի հարցվողների փոքրաքանակ ընդգրկվածությամբ պայմանավորված, տվյալները չեն ապահովում բավարար ներկայացուցչականություն՝ փաստերի վրա հիմնված վերլուծություն կատարելու համար: Խնդիրը մասամբ լուծվում է աշխատաշուկան բնութագրող հիմնական ցուցանիշները դասական՝ հնգական, 15-19տ. տարիքային խմբով ներկայացմամբ, որը խնդրո առարկայի վերաբերյալ տալիս է որոշակի պատկերացում, թերևս, միայն ըստ սեռի և բնակավայրի տեսակի բաշխվածությամբ: Մյուս կողմից, երկու հետազոտություններն էլ, չլինելով երեխաների խնդիրներն արծարծող հատուկ թիրախավորված հետազոտություններ, չեն ապահովում երեխաների աշխատանքային վիճակի առանձնահատկությունները և դրանց հետ կապված պատճառահետևանքային երևույթները բացահայտող համապարփակ գնահատականներ:

Երեխայի աշխատանքին առնչվող խնդիրների ուսումնասիրության առումով, թերևս, կարելի է առանձնացնել բազմակի շրջափուլերով իրականացված ՀԺԱՀ-ն, որը, չլինելով այդ հարցերով թեմատիկ հատուկ հետազոտություն, ունի զգալի ընդհանրություններ 2015թ. ԵԱՀ-ի հետ, որի շրջանակում ա) հետազոտվել են ՏՏ 5-17 տարեկան երեխաները, բ) հավաքագրվել է տեղեկատվություն երեխայի ընթացիկ (պահային՝ նախորդ մեկ շաբաթվա), և սովորաբար (նախորդ մեկ տարվա ընթացքում) իրականացված աշխատանքային գործունեության, տնային տնտեսությունում / տնային գործերում երեխայի ներգրավվածության, դրա(նց) վրա ծախսված ժամանակահատվածի, կրթության, ուսման մեջ

ընդգրկվածության, կենսապայմանների վերաբերյալ, որոնք ընդհանուր առմամբ պատճառահետևանքային կապերով կարող են ամբողջացնել այն միջավայրը, որտեղ ապրում են աշխատող երեխաները:

Հարկ է նկատի ունենալ, որ 2015թ. իրականացված ՀԺԱՀ-ից ամբողջապես բացառվել է երեխայի աշխատանքի հետ կապված հարցախումբը՝ նույն ժամանակաշրջանում ԵԱԱՀ-ի իրականացմամբ պայմանավորված:

Միանգամյա հետազոտություններից են 2004թ. ՀՀ ԱՎԾ կողմից ՏԱՍԻՍ ծրագրի տեխնիկական աջակցությամբ իրականացված «Աշխատուժը և մանկական զբաղվածությունը Հայաստանում» հետազոտությունը, որի շրջանակում հետազոտվող վիճակագրական միավորը եղել է 7-17 տարեկան բնակչությունը: ԵԱԱՀ-ի հետ հարցերի ընդգրկվածության և հարցազրույցի իրականացման տեխնիկայի ընդհանրություններով հանդերձ, 2004թ. հետազոտությունը զգալիորեն տարբերվում է ընտրանքի չափի և ընտրանքի ձևավորման մեթոդաբանության առումով:

Միանգամյա մյուս հետազոտությունը 2008թ. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (UNICEF) կողմից հիմնադրված «Հարմոնիկ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիա ՀԿ-ի կողմից իրականացված հետազոտությունն է:

Հատկանշական է, որ նշված բոլոր հետազոտությունների տվյալներն ապահովում են համադրելիության շատ սահմանափակ հնարավորություն՝ պայմանավորված ընտրանքային և հետազոտության մեթոդաբանության տարբերություններով, հետազոտության մասնակից բնակչության խմբով, տրված հարցերի բովանդակությամբ, ծավալով, դիտարկվող ժամանակահատվածով և որ ամենակարևորն է՝ երեխայի աշխատանքի և արգելված աշխատանքի գնահատման չափորոշիչներով:

Թեպետ նշված բազմաթիվ տարբերություններին, նախորդ բոլոր հետազոտությունների ամենաընդհանրական գնահատականներով Հայաստանում երեխաների 4-5%-ը ներգրավված է եղել աշխատանքային գործունեության մեջ՝ տղաների բացարձակ մեծամասնությամբ, իսկ գյուղատնտեսությունը եղել է զբաղվածության հիմնական ոլորտը:

## 2.4 Աղքատություն և անհավասարություն

Տնտեսական ճգնաժամի հետևանքով Հայաստանի տնտեսության անկումը հանգեցրեց աղքատության մակարդակի աճին, ինչը տնտեսական հետագա աճի շնորհիվ դադարեց 2010-2011թթ.: 2012թ.-ին արձանագրված տնտեսության 7.2% աճը նպաստեց աղքատության մակարդակի ոչ մեծ կրճատմանը, իսկ 2014թ.-ին տնտեսության աճի արդյունքում աղքատության մակարդակը նախորդ տարիների համեմատ նվազեց 2 տոկոսային կետով՝ կազմելով 30%, այսինքն երկրի տաս բնակչից երեքի ամսական սպառումը 40 264 ՀՀ դրամ աղքատության վերին գծից ցածր է եղել: 2014թ.-ին մշտական բնակչության միջին տարեկան ցուցանիշի հաշվով աղքատների ընդհանուր թվաքանակը կազմել է շուրջ 900 հազար մարդ, որոնց 37%-ը եղել են շատ աղքատ (ներառյալ ծայրահեղ աղքատները), նրանցից 21%-ն էլ կամ 70 հազար մարդ՝ ծայրահեղ աղքատ: Աղքատության խորությունը 2014թ.-ի համար գնահատվել է 4.5%, իսկ աղքատության սրությունը՝ 1.3%:

Աղքատությունը 2014թ.-ին չի տարբերվել ըստ քաղաքային (30.0%) և գյուղական բնակավայրերի (29.9%): Այդուհանդերձ, Երևանում (25.%) և երկրի այլ քաղաքներում (35.1%) գրանցվել է աղքատության մակարդակի զգալի տարբերություններ:

**Աղյուսակ 2.4.1** Աղքատության հիմնական ցուցանիշները, 2014թ. %

| Բնակավայր | Ծայրահեղ աղքատ | Շատ աղքատ | Աղքատ | %-ը աղքատ բնակչության մեջ | Աղքատության խորություն | Աղքատության սրություն |
|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | **2.3** | **10.9** | **30.0** | **100** | **4.5** | **1.3** |
| Քաղաք | 2.4 | 11.2 | 30.0 | 63.6 | 4.5 | 1.3 |
| ք. Երևան | 2.0 | 9.0 | 25.2 | 27.3 | 3.6 | 1.0 |
| այլ քաղաքներ | 2.9 | 13.6 | 35.1 | 36.3 | 5.5 | 1.6 |
| Գյուղ | 2.0 | 10.4 | 29.9 | 36.4 | 4.5 | 1.2 |

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՏԿԱՀ 2014

Բոլոր տարիքային խմբերում երեխաների (0-17 տարեկան) աղքատության մակարդակը բնակչության այլ տարիքային խմբերի համեմատ բարձր է:

**Table 2.4.2** Երեխաների աղքատության ցուցանիշներն ըստ սեռի և տարիքային խմբերի, 2014թ., %

| | Ծայրահեղ աղքատ | Աղքատ | Աղքատ բնակչության մեջ, % | Ընդամենը բնակչության մեջ, % |
|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | **2.3** | **30.0** | **100** | **100** |
| **ՍԵՌԸ** | | | | |
| Աղջիկ | 2.2 | 29.9 | 45.2 | 45.3 |
| Տղա | 2.3 | 30.0 | 54.8 | 54.7 |
| **ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ** | | | | |
| 0-5 | 3.6 | 34.4 | 9.9 | 8.6 |
| 6-9 | 2.9 | 34.0 | 4.3 | 3.8 |
| 10-14 | 3.1 | 31.6 | 6.6 | 6.2 |
| 15-17 | 3.7 | 34.8 | 4.3 | 3.7 |

ՀՀ ԱՎԾ, ՏՏԿԱՀ 2014

Երեխաներն ավելի խոցելի են և՛ ընդհանուր, և՛ ծայրահեղ աղքատության ռիսկի նկատմամբ: 2014թ.-ի տվյալները ցույց են տալիս մանկական աղքատության չնչին տարբերություններ ըստ սեռի՝ աղքատ է աղջիկների 33.5%-ը և տղաների՝34.4%-ը (բոլոր երեխաների 34.0%-ը), ըստ բնակավայրի տեսակի՝ քաղաքաբնակ երեխաների 33.8%-ը և գյուղաբնակների՝ 34.4%-ը: Քաղաքաբնակ երեխաների ծայրահեղ աղքատության ցուցանիշը գնահատվել է 3.2%, իսկ գյուղաբնակներինը՝ 3.3%:

**Երեխաների աղքատ լինելու հավանականությունը մեծանում է հետևյալ ռիսկերի դասակարգմամբ.**

**Բազմանդամ ընտանիքների երեխաներ.** Մինչև 18 տարեկան երեք կամ ավելի երեխա ունեցող ընտանիքներում աղքատ է երեխաների 45.8%-ը (բոլոր երեխաների մեջ 34.0%-ի համեմատ), իսկ մեծ ընտանիքներում ծայրահեղ աղքատ է երեխաների 5.3%-ը (ընդհանուրի մեջ 3.3 %-ի համեմատ):

**Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններում բնակվող երեխաներ.** Երեխաների ընդհանուր թվաքանակի մոտ մեկ քառորդը (24.0%) ապրում է կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններում, որոնց 37.8%-ն աղքատ է, իսկ 4.6%-ը՝ ծայրահեղ աղքատ, իսկ տղամարդու գլխավորությամբ տնային տնտեսություններում ապրող երեխաների շրջանում, համապատասխանաբար՝ 33.5 և 3.0%:

**Տնային տնտեսության գլխավորի կրթության մակարդակ.** Այն տնային տնտեսություններում, որոնց գլխավորը կրթություն չունի կամ ունի տարրական կրթություն երեխաների աղքատության մակարդակը կազմում է՝ 50.2%, ոչ լրիվ միջնակարգ կրթություն՝ 47.9%, միջնակարգ կրթություն՝ 39.8%, միջին մասնագիտական կամ թերի բարձրագույն կրթություն՝ 31.2%, բարձրագույն կրթություն՝ 15.3%:

**Տնային տնտեսության գլխավորի զբաղվածությունը.** Այն տնային տնտեսությունների երեխաների շրջանում, որոնց գլխավորն աշխատում է, աղքատությունը կազմում է 29.3%՝ չաշխատողների 40.8%-ի համեմատ: Բոլոր երեխաների 41.1%-ը ապրում է տնային տնտեսություններում, որի գլխավորը չի աշխատում:

**Տնային տնտեսության 19-60 տարեկան չափահաս անդամների զբաղվածություն չունենալը.** Աղքատու-թյան ռիսկն ամենաբարձրն է այն երեխաների շրջանում, որոնց տնային տնտեսություններում 19-60 տարեկան չափահաս անդամներից ոչ մեկը չի աշխատում (50.3%): Ծայրահեղ աղքատության ռիսկն ամենացածրն է այն տնային տնտեսությունների երեխաների շրջանում, որոնց անդամներից աշխատանք ունեն ոչ միայն աշխատանքային տարիքի չափահաս անդամները, այլև աշխատանքային տարիքից ցածր և բարձր տարիքի անդամները (1.5%):

2014թ. ըստ սպառման ագրեգատի և ամբողջական եկամուտների ցուցանիշների, անհավասարությունն աճել է: Սպառման անհավասարությունն ըստ Ջինիի գործակցի 2008թ.-ի 0.242-ի համեմատ 2014թ.-ին ավելացել է՝ կազմելով 0.277: Անհավասարությունն ավելացել է նաև ըստ ամբողջական եկամուտների՝ 2014թ.-ին կազմելով 0.373՝ 2008թ.-ի 0.339-ի համեմատ:

## Բաժին 3.
# Հետազոտության մեթոդաբանությունը

### 3.1 Հետազոտության շրջանակը

2015 թ. ՀՀ-ում իրականացված Երեխայի աշխատանքի ազգային հետազոտության շրջանակը ներառում է երկրի ողջ տարածքից ընտրված (ընտրանքային համակցության մեջ ներառված) տնային տնտեսություններում բնակվող 5-17 տարեկան երեխաներին: Հետազոտությունը նպատակ ունի ապահովել հնարավորինս ամբողջական և արժանահավատ ազգային տվյալներ երեխաների տնտեսական ակտիվության, սոցիալական կարգավիճակի և կենսապայմանների, զբաղվածության, գործունեության բնույթի (եկամտաբեր գործունեություն, տնային ծառայություններ, միայն ուսում, միայն աշխատանք կամ դրանց համատեղում), նրանց աշխատանքի և աշխատանքային պայմանների, գործունեության ոլորտների և զբաղմունքների շրջանակի, աշխատանք-կրթություն փոխազդեցության, ինչպես նաև վիճակագրորեն չափելի դարձնել վնասակար և վտանգավոր աշխատանքներում երեխաների ներգրավվածությունը:

### 3.2 Հետազոտության հարցաթերթը

Երեխայի աշխատանքի ազգային հետազոտության ժամանակ հարցումն իրականացվել է միաժամանակ մեծահասակների և երեխաների շրջանում: Ըստ այդմ, հարցաթերթը բաղկացած է եղել 3 մասից և 11 բաժիններից.

- **ՄԱՍ I. Չափահասների հարցաթերթ**
  - Բաժին 1. Տնային տնտեսության 5 և բարձր տարիքի անդամների կրթական մակարդակը
  - Բաժին 2. Հետազոտվող շաբաթվա ընթացքում տնային տնտեսության 5 և բարձր տարիքի անդամների տնտեսական ակտիվության կարգավիճակը
  - Բաժին 3. Վերջին 12 ամիսների ընթացքում տնային տնտեսության 5 և բարձր տարիքի անդամների տնտեսական ակտիվության կարգավիճակը
  - Բաժին 4. Երեխաների գործունեությունը տնային տնտեսությունում
  - Բաժին 5. Ծնողների/խնամակալների վերաբերմունքն աշխատող 5-17 տարեկան երեխաների նկատմամբ
- **ՄԱՍ II. Տնային տնտեսության բնութագիրը**
  - Բաժին 6. Կացարանային ապահովվածություն և կենցաղային բնութագրեր
  - Բաժին 7. Տնային տնտեսության սոցիալ-տնտեսական վիճակը
- **ՄԱՍ III. Երեխայի հարցաթերթ**
  - Բաժին 8. Տնային տնտեսության 5-17 տարեկան երեխաների կրթական մակարդակը
  - Բաժին 9. Տնային տնտեսության 5-17 տարեկան երեխաների տնտեսական ակտիվության ընթացիկ կարգավիճակը
  - Բաժին 10. Աշխատող երեխաների (5-17 տարեկան) առողջությունը և անվտանգությունը
  - Բաժին 11. Երեխաների (5-17 տարեկան) գործունեությունը տնային տնտեսությունում

Ընդ որում, ստանդարտ հարցերի մի զգալի խումբ՝ անմիջականորեն կապված երեխայի աշխատանքի, աշխատանքային պայմանների, կրթության, տնային գործերում ներգրավվածության հետ, ներառված է եղել միաժամանակ հարցաթերթի թե՛ չափահասների, թե՛ երեխաների համար նախատեսված մասերում: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տվել ստանալ հնարավորս ամբողջական տեղեկատվություն տվյալ տնային տնտեսությունում երեխայի տնտեսական ակտիվության կարգավիճակի, աշխատանքային ու կրթական պայմանների վերաբերյալ:

## 3.3 Ընտրանքի ձևավորում և իրականացում

Հետազոտության ընտրանքը մշակվել է 2011 թվականի ՀՀ մարդահամարի արդյունքում ձևավոր-ված տնային տնտեսությունների հասցեների տվյալների շտեմարանի հիման վրա:

Հետազոտության ընտրանքի ալգորիթմը կառուցվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի վարչատա-րածքային բաժանումը 10 մարզերի և քաղաք Երևանի: Մարզերից յուրաքանչյուրում ըստ գյուղական և քաղաքային բնակավայրերի ձևավորվել է 2 շերտ (stratum), բոլոր մարզերը միասին՝ 20 շերտ: Մայ-րաքաղաք Երևանը դիտարկվել է որպես առանձին շերտ: Արդյունքում, երեխայի աշխատանքի ազգա-յին հետազոտության շրջանակում ձևավորվել է 21 շերտ: Յուրաքանչյուր շերտում ընտրանքի չափը որոշելու համար հիմք են ընդունվել ՀՀ 2011թ. մարդահամարի տվյալները, այսինքն՝ 5-17 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսությունների (ՏՏ) քանակը:

Հետազոտության ընտրանքի չափը կազմել է 6 520 տնային տնտեսություն (326 մարդա-համա-րա-յին հաշվային տեղամաս), որից քաղաքային և գյուղական բնակավայրերում, համապատասխանա-բար՝ 3 520 և 3 000 տնային տնտեսություն:

### Աղյուսակ 3.3.1 Ընտրանքի բաշխումը

| Մարզ | 5-17 տ. երեխա-ներ ունեցող ՏՏ քանակը, ընդամենը | Ընտրանքի բաշխում | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ընդամենը | | քաղաքային | | գյուղական | |
| | | ՀՏ | ՏՏ | ՀՏ | ՏՏ | ՀՏ | ՏՏ |
| **Ընդամենը ՀՀ** | **296 097** | **326** | **6 520** | **176** | **3520** | **150** | **3 000** |
| Երևան | 100 032 | 46 | 920 | 46 | 920 | - | - |
| Արագածոտն | 13 341 | 23 | 460 | 8 | 160 | 15 | 300 |
| Արարատ | 25 644 | 33 | 660 | 13 | 260 | 20 | 400 |
| Արմավիր | 26 970 | 34 | 680 | 14 | 280 | 20 | 400 |
| Գեղարքունիք | 23 326 | 31 | 620 | 12 | 240 | 19 | 380 |
| Լոռի | 23 790 | 31 | 620 | 17 | 340 | 14 | 280 |
| Կոտայք | 25 675 | 33 | 660 | 17 | 340 | 16 | 320 |
| Շիրակ | 25 156 | 33 | 660 | 18 | 360 | 15 | 300 |
| Սյունիք | 14 110 | 24 | 480 | 14 | 280 | 10 | 200 |
| Վայոց ձոր | 5 202 | 14 | 280 | 6 | 120 | 8 | 160 |
| Տավուշ | 12 851 | 24 | 480 | 11 | 220 | 13 | 260 |

Հետազոտության համար ձևավորվել է երկաստիճան ստրատիֆիկացված (շերտավորված) ընտ-րանք՝ 1) մարդահամարային հաշվային տեղամասերի (ՀՏ) ընտրանք, 2) ընտրված ՀՏ-երից՝ տնային տնտեսությունների ընտրանք:

1) Յուրաքանչյուր շերտում հաշվային տեղամասերն ընտրվել են իրենցում առկա ՏՏ-ների քանակին համապատասխան հավանականությամբ: Այս փուլում օգտագործվել է **պար-բերական** ընտրանքի (systematic sampling) մեթոդը: Կատարվել է ընտրված հաշվային տեղամասերի բոլոր տնային տնտեսությունների ցուցակագրում, որից հետո յուրաքանչ-յուր ՀՏ-ի համար ձևավորվել է 5-17 տարեկան երեխա ունեցող ՏՏ-ների հասցեների բա-զա:
2) Երկրորդ փուլում **պատահական** ընտրանքի մեթոդով յուրաքանչյուր ՀՏ-ի 5-17 տարե-կան երեխա ունեցող ՏՏ-ներից ընտրվել է 20 տնային տնտեսություն:

## 3.4 Հետազոտության կշիռներ և պատասխանելիության մակարդակ

Կշիռը հաշվարկվել է յուրաքանչյուր հաշվային տեղամասի համար և այն նույնն է տրված հաշվային տեղամասի բոլոր տնային տնտեսությունների համար: Կշիռները հաշվարկելիս հաշվի է առնվել ընտրանքային միավորի` SS-ի ընտրվելու հավանականությունը, ինչպես նաև ընտրանքում ընկած, սակայն տարբեր պատճառներով չհետազոտված SS-ների մասնաբաժինը (non-response rate) և ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառման տվյալները, որոնց հետ սույն հետազոտության տվյալները ճշգրտվել են:

Հաշվարկման գործընթացը ձևավորվել է հետևյալ քայլերից`

1. Կշիռների հաշվարկում.
2. Կշիռների ճշգրտում, հաշվի առնելով չհետազոտված SS-ները.
3. Կշիռների ճշգրտում` հայտնի ցուցանիշների հիման վրա:

### Աղյուսակ 3.4.1 Կշիռների հաշվարկում

**Օրինակ.**

| Ստրատայում ընտրված ՀS քանակը | Ընդամենը SS քանակը ստրատայում | SS քանակը ՀS-ում | 5-17տ. երեխա ունեցող SS քանակը ՀS-ում | Ընտրված SS քանակը | Հետազոտված SS քանակը |
|---|---|---|---|---|---|
| (m) | (H) | (h) | (N) | (n) | (nr) |
| 46 | 271 125 | 100 | 27 | 20 | 17 |

**Քայլ 1. Կշիռների հաշվարկում**

Կշիռը (w) հաշվարկվել է հետևյալ բանաձևով`

$$w = 1/p$$

p-ն տրված հաշվային տեղամասում (ՀS) SS-ի ընտրվելու հավանականությունն է:

Հաշվային տեղամասի ընտրվելու հավանականությունը հաշվարկվել է հետևյալ բանաձևով`

$$p1 = m\,h / H$$

Ընտրված հաշվային տեղամասից SS-ի ընտրվելու պայմանական հավանականությունը հաշվարկվել է հետևյալ բանաձևով`

$$p2 = n / N:$$

Տնային տնտեսության ընտրվելու ամբողջական հավանականությունը`

$$p = p1\,p2:$$

**Քայլ 2. Կշիռների ճշգրտումը` հաշվի առնելով չհետազոտված SS-ները**

Այս քայլի անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ընտրանքային համակցության մեջ հայտնված ոչ բոլոր SS-ներն են հետազոտվել: Հետազոտված SS-ների մասնաբաժինը (response rate) որոշվել է հետևյալ բանաձևով`

$$r = n_r / n, \text{ որտեղ}$$

r-ը SS-ների պատասխանելիության / հետազոտությանը մասնակցության մակարդակն է: Օգտվելով աղյուսակ 2-ի արժեքներից, կստացվի` r = 17 / 20:

Նոր կշիռները հաշվարկվել են հետևյալ բանաձևով` $w' = w / r$:

**Քայլ 3. Կշիռների ճշգրտումը ` հայտնի ցուցանիշների հիման վրա**

Նախորդ քայլում հաշվարկված կշիռները ճշգրտվել են, որպեսզի համապատասխանեն օժանդակ (տե՛ս աղյուսակը` ստորև) փոփոխականների ագրեգատներին: Ճշգրտման արդյունքում ստացվել են

այնպիսի կշիռներ, որոնց կիրառումն օժանդակ փոփոխականների նկատմամբ ապահովել է բնակչության ցուցանիշների հայտնի արժեքներ՝ հիմնված 2015թ. բնակչության թվաքանակի և կազմի ընթացիկ հաշվառման արդյունքների վրա:

Ճշտգրտումը հիմնվել է հետևյալ օժանդակ 6 փոփոխականների վրա:

| 5-11 տարեկան տղաների թվաքանակը | 12-15 տարեկան տղաների թվաքանակը | 16-17 տարեկան տղաների թվաքանակը | 5-11 տարեկան աղջիկների թվաքանակը | 12-15 տարեկան աղջիկների թվաքանակը | 16-17 տարեկան աղջիկների թվաքանակը |
|---|---|---|---|---|---|

**Ցուցանիշների գնահատման եղանակը.** Ընտրանքի տվյալների հիման վրա ցուցանիշները գնահատելու համար օգտագործվել է հետևյալ բանաձևը.

$$x = \sum_{j=1}^{N}\sum_{i=1}^{m_j}\sum_{h=1}^{n_i} w_i x_{ih}$$

$x_{ih}$-ը՝ տնային տնտեսության վերաբերյալ հավաքագրված տվյալն է,

$w_i$-ը՝ i-րդ հաշվային տեղամասի կշիռն է,

N-ը շերտերի (strata) ընդհանուր քանակն է,

$m_j$-ը j-րդ շերտից ընտրանքի մեջ ներառված հաշվային տեղամասերի քանակն է,

$n_i$-ն i-րդ հաշվային տեղամասից ընտրված տնային տնտեսությունների քանակն է:

**ԵԱԱՀ տվյալներն օգտագործելիս, հարկ է նկատի ունենալ, որ հետազոտության արդյունքները տարածվել են ոչ թե ՀՀ ողջ բնակչության նկատմամբ, այլ ներկայացնում են միայն 5-17 տարեկան առնվազն մեկ երեխա ունեցող տնային տնտեսություններում բնակվող բնակչությունը:**

## 3.5 Փորձնական հետազոտություն

Մինչ ԵԱԱՀ-ի մեկնարկը, 2015 թվականի սեպտեմբեր ամսին Արարատի և Գեղարքունիքի մարզերում իրականացվել է փորձնական հետազոտություն: Ընդհանուր առմամբ, հետազոտվել է 120 տնային տնտեսություն (Արարատի մարզում՝ 80, Գեղարքունիքի մարզում՝ 40 տնային տնտեսություն)՝ ընտրված մարզերի ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում:

Փորձնական հետազոտության իրականացման նպատակն էր.

- Գնահատել ընտրանքի ձևավորման մեթոդաբանության արդյունավետությունը,
- Գնահատել հարցազրուցավարների և ռեսպոնդենտների կողմից հարցաթերթի հարցերը ընկալելու և դրանց միջև տրամաբանական կապերը պահպանելու ունակությունը,
- Գնահատել հետազոտությանը մասնակցելու տնային տնտեսությունների պատրաստակամությունը և հարցմանը մասնակցելուց հրաժարվելու դեպքերի տեսակարար կշիռը,
- Չափել հարցաթերթի լրացման ժամանակը,
- Բացահայտել հարցաթերթի լրացման հետ կապված խնդիրները և այլն:

Փորձնական հետազոտությունը ցույց տվեց, որ.

- Բնակչության ակտիվ մասնակցություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է իրազեկել բնակչությանը՝ տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքում հեղինակություն ունեցող անհատների միջոցով,
- Դաշտային աշխատանքների իրականացման համար ընտրել կամ նախապատվությունը

տալ տվյալ տարածքին ծանոթ, առավել փորձառու հաշվարարներին, ովքեր ծանոթ են միջավայրին, մարզի և համայնքի սոցիալ-տնտեսական վիճակին, հեղինակություն և վստահություն են վայելում իրենց բնակավայրում և տիրապետում են մարդկանց հետ հաղորդակցվելու հմտություններին:

- Հաշվի առնելով տարբեր մարզերում տնտեսական գործունեության ոլորտների առանձնահատկությունները, բնակլիմայական և աշխարհագրական պայմանները, հիմնական հետազոտության արդյունավետ իրականացման համար հնարավորինս ճիշտ ընտրել հետազոտվող ժամանակաշրջանը՝ հետազոտվող ՏՏ-ների անդամներին տանը գտնելու նպատակով և այլն:

Փորձնական հետազոտությունը ցույց տվեց նաև, որ ԵԱԱՀ իրականացման համար մշակվել է «գործունակ», երկրի առանձնահատկությունների առումով տեղայնացված, հնարավորինս պարզ ձևակերպումներով, չափահասների և երեխաների համար հիմնականում ընկալելի հարցեր պարունակող, հաճախ հանդիպող կամ դժվար համարվող դեպքերի օրինակներով համալրված հարցաթերթ:

## 3.6 Հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացնող անձնակազմի ուսուցում և դաշտային աշխատանքներ

Երեխայի աշխատանքի ազգային հետազոտությամբ նախատեսված դաշտային աշխատանքներն ամբողջությամբ և արդյունավետ իրականացնելու համար Ծրագրի աշխատանքային պլանով նախատեսված յուրաքանչյուր փուլից առաջ հետազոտության անձնակազմի համար կազմակերպվել են ուսուցողական դասընթացներ:

Մինչ Ծրագրի աշխատանքների մեկնարկը, 2015թ. մայիսի 26-27-ին ԱՄԿ փորձագետները երկօրյա ուսուցողական դասընթացի ընթացքում հետազոտության անձնակազմին և հետազոտության արդյունքների հիմնական շահառուներին՝ պետական կառավարման մարմիններին, սոցիալական գործընկերներին, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին (մոտ 25 մարդ), ներկայացրեցին ԵԱԱՀ իրականացման իրավական հիմքերը, միջազգային կոնվենցիաներն ու հայեցակարգերը, մեթոդաբանությունը, նպատակն ու խնդիրները: Միաժամանակ, դասընթացի մասնակիցների հետ քննարկվեցին հետազոտության հարցաթերթը, վիճակագրական հաշվառման և ազգային օրենսդրությունների առանձնահատկությունները, հետազոտության ընտրանքի ձևավորման և դաշտային աշխատանքների իրականացման ժամանակ հնարավոր խոչընդոտները և դրանց հաղթահարման ուղիները:

Հետազոտության ընտրանքի մշակման համար անհրաժեշտ տնային տնտեսությունների ցուցակագրումն իրականացնելու նպատակով 2015թ. հուլիսի 1-2-ը կազմակերպվել է երկօրյա ուսուցողական դասընթաց, որին մասնակցել է ք. Երևանից և մարզերից ընտրված 30 հրահանգավորող և հաշվարար: Ուսուցողական դասընթացի նպատակն էր Ծրագրի այս փուլի դաշտային աշխատանքներն իրականացնող անձնակազմին փոխանցել տեսական և պրակտիկ գիտելիքներ 5-17 տարեկան նվազագույնը մեկ երեխա ունեցող տնային տնտեսությունների ցուցակագրումն իրականացնելու համար: Դասընթացի մասնակիցներին ներկայացվել է Ցուցակագրման հարցաթերթը և ձեռնարկը, որը մանրամասն տեղեկատվություն է պարունակում ցուցակագրման խնդիրների, իրականացման գործիքների, հարցազրույցի կանոնների և ընտրանքի վերաբերյալ: Դասընթացի ժամանակ տրված տեսական գիտելիքների յուրացման նպատակով մասնակիցներին ներկայացվել են նաև պրակտիկ օրինակներ, կազմակերպվել են քննարկումներ և կատարվել են փորձնական վարժություններ: Առանձնակի ուշադրություն է դարձվել այն հանգամանքին, որ տնային տնտեսությունների հասցեների հիմքը 2011թ. մարդահամարի հասցեների շտեմարանն է, ինչը ենթադրում է հասցեների անհամապատասխանության դեպքեր:

Երրորդ ուսուցողական դասընթացը կազմակերպվել է 2015թ. սեպտեմբերի 4-ին ՀՀ ԱՎԾ գլխավոր գրասենյակում փորձնական հետազոտության դաշտային աշխատանքների մեկնարկից առաջ: Փորձնական հետազոտության աշխատանքային խմբի հետ կազմակերպվել է հետազոտության իրականացման և հարցաթերթի լրացման կարգի վերաբերյալ ուսուցում:

Հետազոտության հիմնական դաշտային աշխատանքերից առաջ հոկտեմբերի 8-12-ը կազմակերպվել եռօրյա ուսուցողական դասընթաց մայրաքաղաք Երևանից և 10 մարզերից ընտրված 55 հոգուց բաղկացած անձնակազմի համար: Հաշվի առնելով ԵԱԱՀ այս փուլի կարևորությունը, արծարծվող թեմայի զգայունությունը, դաշտային աշխատանքների անձնակազմի ընտրության ժամանակ նախապատվությունը տրվել է առավել փորձառու և հմուտ հրահանգավորողներին և հաշվարարներին, ովքեր աշխատանքի շուկայի և աշխատուժի հետազոտությունների մասնակցության հարուստ փորձ ունեին, ծանոթ էին միջավայրին, հեղինակություն և վստահություն էին վայելում իրենց մարզերում և տիրապետում էին մարդկանց հետ հաջողությամբ հաղորդակցվելու հմտություններին:

Մասնակիցներին ներկայացվել է Ծրագրի նպատակը, կարևորությունը և հետազոտությունից ակնկալվող արդյունքները: Հանգամանորեն քննարկվել և մեկնաբանվել են հարցաթերթի բոլոր հարցերը և լրացման ձեռնարկը` հատուկ ուշադրություն դարձնելով դժվարըմբռնելի հարցերին և բաց պատասխաններով հարցերին տրվելիք հավանական պատասխաններին կամ դրանք ընկալելու դժվարություններին, ինչպես նաև հարցերի միջև տրամաբանական կապերը պահպանելու անհրաժեշտությանը: Հաշվարարներին հանգամանորեն ներկայացվել և մեկնաբանվել են նրանց աշխատանքի հիմնական կանոնները, հարցազրույցի ընթացակարգը, հարցումների ժամանակ էթիկայի նորմերին հետևելու անհրաժեշտությունը, հարցերը հնչեցնելու, պատասխանները գրանցելու, ռեսպոնդենտների կողմից տրված հարցերին պատասխանելու կանոններն ու ընթացակարգը: Հրահանգավորողներին ներկայացվել են դաշտային աշխատանքների իրականացման ընթացքը կազմակերպելու և վերահսկելու ընթացակարգը, հաշվարարների արծանագրած խնդիրներին արագ արձագանքելու և նրանց հետ հետադարձ կապն ապահովելու անհրաժեշտությունը: Առանձնակի ուշադրություն է դարձվել տնային տնտեսություններին մոտիվացնելու և հարցումներին նրանց մասնակցությունը ապահովելու խնդրին: Դաշտային աշխատանքներն իրականացվել են 48 օրվա ընթացքում` 2015թ. հոկտեմբերի 15-ից դեկտեմբերի 15-ը:

## 3.7 Տվյալների մշակում

Դաշտային աշխատանքներին զուգահեռ իրականացվել է լրացված հարցաթերթերի քանակական և տրամաբանական ստուգումը, ծածկագրումն ու մուտքագրումը տվյալների շտեմարան:

Այդ նպատակով մինչ տեղերից լրացված հարցաթերթերի ստացումը, ՀՀ ԱՎԾ կենտրոնական գրասենյակում կազմակերպվել է ուսուցողական դասընթաց տվյալները մշակող անձնակազմի համար, որի ընթացքում նրանց փոխանցվել է անհրաժեշտ գիտելիքներ լրացված հարցաթերթերում ներառված տեղեկատվությունը ստուգելու, սխալները ուղղելու և կոդավորումն իրականացնելու համար:

Մեկ այլ ուսուցողական դասընթաց կազմակերպվեց տվյալներ մուտքագրող անձնակազմի համար, որի ընթացքում նրանց ներկայացվեց հարցաթերթը, մուտքագրման ծրագրային փաթեթը: Փորձնական լրացված հարցաթերթերի օգնությամբ նրանք ծանոթացան տվյալների մուտքագրման ծրագրային փաթեթի հետ աշխատելու հմտություններին:

Տվյալների մուտքագրումից հետո իրականացվել են տվյալների շտեմարանի մաքրման, սխալների բացահայտման, ցուցակագրման աշխատանքները, որից հետո կազմակերպվել է ելքային աղյուսակների ստացումը:

## Բաժին 4.

# Հայեցակարգեր և սահմանումներ

### 4.1 Աշխատանքի միջազգային ստանդարտներ

Երեխայի իրավունքների պաշտպանության և նրանց աշխատանքին վերաբերող միջազգային ստանդարտները սահմանված են ՄԱԿ-ի և Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) մի շարք կոնվենցիաներով, մասնավորապես՝ «Երեխայի իրավունքների մասին» 1989 ընդունված ՄԱԿ-ի կոնվենցիան (Հայաստանը վավերացրել է 1993թ.), ԱՄԿ-ի «Նվազագույն տարիքի մասին», 1973 (No. 138) և «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» 1999 (No. 182) կոնվենցիաները: Հայաստանի Հանրապետությունը ԱՄԿ անդամ է 1992թ.-ից, իսկ նշված Կոնվենցիաները վավերացրել է 2006թ.:

ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի հոդված 1-ը սահմանում է, որ երեխա է համարվում մինչև 18 տարեկան յուրաքանչյուր մարդկային էակ, հոդված 32-ում ամրագրվում է տնտեսական շահագործումից և երեխայի առողջության համար վտանգավոր հանդիսացող, կրթություն ստանալուն, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր և սոցիալական զարգացմանը խոչընդոտող ցանկացած աշխատանք կատարելուց երեխայի պաշտպանված լինելու իրավունքը: Նույն հոդվածի համաձայն, մասնակից երկրները, առաջնորդվելով այլ միջազգային ստանդարտներով, պարտավորվում են.

ա) սահմանել երեխայի աշխատանքի նվազագույն տարիք,

բ) սահմանել աշխատանքային օրվա տևողությանը և աշխատանքի պայմաններին ներկայացվող անհրաժեշտ պահանջներ,

գ) նախատեսել համապատասխան պատժամիջոցներ երեխայի իրավունքները խախտելու դեպքում:

Հոդված 33-ով մասնակից երկրները պարտավորվում են պաշտպանել երեխաներին թմրամիջոցների արտադրությունում և առևտրում ներգրավումից, իսկ հոդված 34-ով՝ պաշտպանել երեխաներին սեռական շահագործումից և այլն:

ԱՄԿ-ի 1973թ. ընդունված «Նվազագույն տարիքի մասին» No. 138 կոնվենցիան պարունակում է դրույթներ և պարտավորություններ մասնակից երկրների համար երեխայի նվազագույն աշխատանքային տարիք սահմանելու վերաբերյալ: Մասնավորապես, հոդված 2-ի դրույթների համաձայն, նվազագույն աշխատանքային տարիքը չպետք է ցածր լինի պարտադիր դպրոցական կրթություն ստանալու տարիքից: Այս պահանջից բացառություն ընդունելի է այն երկրների համար, որոնց տնտեսությունը և կրթական համակարգը թույլ են զարգացած և աշխատանքային տարիք կարող է սահմանվել 14 տարեկանը:

Հոդված 3-ը սահմանում է հաջորդ կարևորագույն պահանջը. այն աշխատանքների դեպքում, որոնք իրենց բնույթով կարող են վնաս հասցնել դեռահասի առողջությանը, անվտանգությանը և բարոյականությանը, նվազագույն տարիքը չպետք է ցածր լինի 18 տարեկանից: Ազգային օրենսդրությունը կարող է սահմանել 16 տարեկանից ցածր նվազագույն աշխատանքային տարիք այն դեպքերում, եթե դեռահասի առողջությունը, անվտանգությունը և բարոյականությունը լիովին պաշտպանված է և նրանք ստացել են հատուկ մասնագիտական կրթություն:

Հոդված 5-ը, թեև մասնակից երկրներին տալիս է Կոնվենցիայի դրույթները ոչ ամբողջությամբ կիրառելու հնարավորություն, այնուհանդերձ Կոնվենցիայի դրույթների կիրառումը պարտադիր է համարում այն աշխատանքների համար, որոնք իրականացվում են հանքագործական և վերամշակող արդյունաբերությունում, շինարարությունում, էլեկտրականության, գազի և ջրի մատակարարման ծառայություններում, սանիտարա-տեխնիկական ծառայություններում, տրանսպորտում, պահեստներում և կապի ծառայություններում, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունում և շուկայում իրացման նպատակով արտադրանք թողարկող գյուղատնտեսական կազմակերպություններում, բացառությամբ ընտանեկան և փոքր կազմակերպությունների:

Կոնվենցիայի դրույթներն առանձին դեպքերում պարունակում են նվազագույն տարիքի սահմանման ճկուն պայմաններ, ինչպես օրինակ՝ 13-15 տարեկան (զարգացող երկրների դեպքում հնարավոր է նաև 12-14 տարեկան) երեխաներին թույլատրվում է ներգրավել թեթև աշխատանքներում, որոնք.

ա) չեն վնասում երեխայի առողջությանն ու զարգացմանը,

բ) չեն խոչընդոտում ուսումնական հաստատություն հաճախելուն և այլն:

ԱՄԿ-ի 1999թ. ընդունված «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» (No. 182) կոնվենցիան սահմանում է երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը, ինչպես նաև երեխաներին այդպիսի աշխատանքներ կատարելուց կամ դրանցում ներգրավվելուց պաշտպանելու երկրների կառավարությունների և համապատասխան կառույցների պարտավորությունները: Կոնվենցիայի հոդված 3-ի համաձայն «երեխայի աշխատանքի վատթարագույն ձև» եզրույթը ներառում է.

ա) երեխայի ստրկության բոլոր ձևերը, երեխաների առևտուրը, պարտքի դիմաց ճորտատիրական կախվածությունը, երեխաների ներգրավվումը ստիպողական կամ պարտադիր աշխատանքներում, երեխաների օգտագործումը ռազմական կոնֆլիկտների ժամանակ,

բ) երեխաների օգտագործումը, ներգրավումը կամ առաջարկը զբաղվելու մարմնավաճառությամբ պոռնոգրաֆիկ բնույթի արտադրանք, ֆիլմեր կամ ներկայացումներ թողարկելու նպատակով,

գ) երեխաների օգտագործումը, ներգրավվումը կամ առաջարկը թմրաբիզնեսում անօրինական գործունեությամբ զբաղվելու նպատակով, մասնավորապես թմրամիջոցների արտադրությունում և առևտրում,

դ) աշխատանքի բոլոր այն տեսակները, որոնք իրենց բնույթով կամ պայմաններով կարող են վնասել երեխայի առողջությանը, անվտանգությանը և բարոյականությանը (նմանատիպ աշխատանքները համարվում են «վտանգավոր աշխատանքներ»):

Ստորև ներկայացվում է նաև ԱՄԿ թիվ 138 կոնվենցիայի շրջանակում սահմանված երեխայի աշխատանքի հայեցակարգը, ըստ որի երեխայի զբաղվածության համար սահմանվել են տարբեր նվազագույն տարիքային շեմեր՝ ընդհանուր նվազագույն տարիք, վնասակար աշխատանքի նվազագույն տարիք և թեթև աշխատանքի նվազագույն տարիք:

**Աղյուսակ 4.1.1** Զբաղվածության նվազագույն տարիքն ըստ ԱՄԿ թիվ 138 կոնվենցիայի

| Զբաղվածության նվազագույն տարիք | Յուրաքանչյուր երկրի համար կիրառելի նվազագույն տարիք | Նվազագույն տարիք - բացառություններ զարգացող երկրների համար |
|---|---|---|
| **Ընդհանուր** նվազագույն տարիք (հոդված 2) | 15 տարեկանից ոչ ցածր | 14 տարեկանից ոչ ցածր |
| **Վնասակար** աշխատանքների համար սահմանվող նվազագույն տարիք (հոդված 3) | 18 տարեկանից ոչ ցածր | 16 տարեկանից ոչ ցածր. առողջությունը, բարոյականությունը և անվտանգությունը պետք է երաշխավորվեն |
| **Թեթև աշխատանքի** համար սահմանվող նվազագույն տարիք (հոդված 7) | 13-14 տարեկան | 12-13 տարեկան |

Երեխայի աշխատանքի վիճակագրական գնահատման վերաբերյալ միջազգային մեթոդաբանությունը (ստանդարտները, հայեցակարգերը, սահմանումները և այլն) ներկայացված են Բաժին 4.3.2-ում:

## 4.2 Ազգային օրենսդրություն

Հայաստանում երեխայի իրավունքներն ու երեխաների աշխատանքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Սահմանադրությամբ և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով», ՀՀ միջազգային պայմանագրերով, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշումներով և այլ ենթաօրենսդրական ակտերով:

## 4.2.1 Երեխաներ

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի առաջին հոդվածը սահմանում է, որ «Երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ»: Սույն հետազոտության համատեքստում կարևորվում է, որ օրենքի 7- րդ հոդվածը ամրագրում է յուրաքանչյուր երեխայի առողջության պահպանման և ամրապնդման իրավունքը: Օրենքի 9-րդ հոդվածով երեխան պաշտպանված է ցանկացած տեսակի բռնությունից, մասնավորապես երեխաների շահագործման առումով կարևոր է, որ «Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավումից, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից և նրա իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից»:

Երեխայի կրթություն ստանալու իրավունքի ամրագրման հետ միաժամանակ Օրենքի 19-րդ հոդվածում ձևակերպված են երեխայի աշխատելու իրավունքի պայմանները. «Յուրաքանչյուր երեխա ունի իր տարիքային հնարավորություններին, զարգացման առանձնահատկություններին և ունակություններին համապատասխան մասնագիտություն ստանալու, օրենքով չարգելված աշխատանքային գործունեություն ծավալելու իրավունքը:

Երեխայի հետ աշխատանքային պայմանագիր կարող է կնքվել նրա 16 տարին լրանալուց հետո, բացառությամբ ժամկետային աշխատանքային պայմանագրերի: Մինչև 16 տարեկան երեխաները կարող են ընդունվել ժամանակավոր աշխատանքի՝ ծնողներից մեկի (որդեգրողի) կամ հոգաբարձուի (խնամակալի) և խնամակալության և հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնությամբ, եթե դա չի խանգարում նրանց ուսուցման գործընթացին:

Երեխան ունի աշխատանքի արտոնյալ պայմանների իրավունք: Երեխայի աշխատանքի ընդունման առանձնահատկությունները, արտոնությունները և պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով:

Արգելվում է երեխային ներգրավել ալկոհոլային խմիչքների, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի, ծխախոտի, էրոտիկա և սարսափ բովանդակող գրականության և տեսաերիզների արտադրության, օգտագործման կամ իրացման մեջ, ինչպես նաև այնպիսի աշխատանքներում, որոնք կարող են վնասել նրա առողջությանը, ֆիզիկական և մտավոր զարգացմանը, խոչընդոտել կրթություն ստանալուն»:

## 4.2.2 Երեխայի աշխատանք

Համաձայն «ՀՀ աշխատանքային օրենսգրքի», աշխատող են համարվում ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող 14-16 տարեկան անձինք, ընդ որում միայն նրանց առողջությանը, անվտանգությանը, կրթությանը և բարոյականությանը չվնասող ժամանակավոր աշխատանքներում: Ըստ այդմ, աշխատանքի ընդունման ժամանակ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկում պահանջվում է նաև տեղեկանք առողջական վիճակի մասին (սանիտարական գրքույկ) մինչև տասնութ տարեկան քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագիր կնքելու ժամանակ:

Մինչև տասնչորս տարեկան անձինք կարող են ընդգրկվել կինեմատոգրաֆիայի, մարզական, թատերական և համերգային կազմակերպություններում, կրկեսում, հեռուստատեսությունում և ռադիոյում ստեղծագործությունների ստեղծմանը (ստեղծագործական աշխատանք) և (կամ) կատարմանը՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնության դեպքում, որը չպետք է վնասի նրանց առողջությանն ու բարոյականությանը, ինչպես նաև չպետք է խոչընդոտի կրթությանն ու անվտանգությանը:

Հայաստանի ազգային օրենսդրությունը, հիմք ընդունելով միջազգային ստանդարտները, նույն կերպ սահմանել է մինչև 18 տարեկան երեխայի աշխատելու պայմանները՝ հաշվի առնելով աշխատաժամանակի կրճատ տևողությունն ըստ տարիքային խմբերի.

1) մինչև յոթ տարեկան երեխաների համար՝ օրական մինչև երկու ժամ, սակայն շաբաթվա ընթացքում ոչ ավելի, քան չորս ժամ.
2) յոթից մինչև տասներկու տարեկան երեխաների համար՝ օրական մինչև երեք ժամ, սակայն շաբաթվա ընթացքում ոչ ավելի, քան վեց ժամ.
3) տասներկուսից մինչև տասնչորս տարեկան երեխաների համար՝ օրական մինչև չորս ժամ, սակայն շաբաթվա ընթացքում ոչ ավելի, քան տասներկու ժամ.
4) տասնչորսից մինչև տասնվեց տարեկան աշխատողների համար՝ շաբաթական մինչև 24 ժամ.
5) տասնվեցից մինչև տասնութ տարեկանների համար՝ շաբաթական մինչև 36 ժամ:

### 4.2.3 Վնասակար աշխատանքներ

Յուրաքանչյուր երկիր սահմանում է մինչև 18 տարեկան երեխաների համար արգելված վնասակար, վտանգավոր աշխատանքների ցանկ, որը հաստատվում է սոցիալական գործընկերների համաձայնությամբ: Նմանապես՝ ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը արգելում է երեխաների ներգրավումը այնպիսի աշխատանքներում, որոնք բացասական ազդեցություն կարող են ունենալ նրանց առողջության և բարոյականության վրա . «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում մինչև տասնութ տարեկան անձանց ներգրավելն արգելվում է»:

«Ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը» սահմանված է ՀՀ կառավարության՝ 29 դեկտեմբերի 2005 թվականի N 2308-Ն «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» որոշմամբ:

Երեխաների համար վնասակար համարվող աշխատանքների հիմնական պայմաններն են.

- Երեխաների աշխատանքը վնասակար համարվող տնտեսական գործունեությունում (արտադրությունում), որտեղ ցանկացած աշխատանք համարվում է վնասակար, օրինակ՝ շինարարություն, հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում: Այս խմբում ներառվում են նաև երեխաների գիշերային հերթափոխով աշխատանքը, տանը կամ կազմակերպությունում հերթապահության ներգրավումը և միայնակ գործունեության ուղարկելը, ինչն արգելված է օրենքով (ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդվածներ 148, 149 և 209):
- Երեխաների աշխատանքը ՀՀ կառավարության որոշմամբ մինչև 18 տարեկան երեխաների համար վնասակար համարվող աշխատանքներում և վնասակար աշխատանքային պայմաններում.
  - Քիմիական գործոնների ազդեցության ներքո վնասակար աշխատանքներ,
  - Ֆիզիկական գործոնների ազդեցության ներքո վնասակար աշխատանքներ,
  - Կենսաբանական գործոնների ազդեցության ներքո վնասակար աշխատանքներ,
  - Արդյունաբերական աերոզոլների ազդեցության ներքո վնասակար աշխատանքներ,
  - Մինչև 18 տարեկան անձանց համար ծանր աշխատանքները՝ ֆիզիկական ծանրաբեռնվածություն (ծանրություն, հեռավորություն, կանգնած մնալու տևողություն և այլն),
  - Զգայական, հուզական, լարվածության և ռիսկի գործոնների հետ կապված աշխատանքներ:
- Երեխաների ներգրավումը ոչ վնասակար համարվող գործունեության տեսակներում, որտեղ աշխատանքը սահմանված չէ որպես վնասակար, բայց երեխաները աշխատում են յուրաքանչյուր տարիքային խմբի համար սահմանված կարճատև աշխատաժամանակից ավել երկար ժամանակ:
- Վտանգավոր գործիքներով, սարքավորումներով և տեխնիկայով իրականացվող աշխատանքները:

## 4.3 Հետազոտության շրջանակում օգտագործված հայեցակարգեր և սահմանումներ

**Սույն բաժնում ամփոփված են միջազգային հայեցակարգերը, ստանդարտներն ու ազգային օրենսդրությամբ սահմանվող բոլոր այն չափորոշիչները, որոնք օգտագործվել են սույն հետազոտության շրջանակում՝ երեխայի աշխատանքի վիճակագրական գնահատման համար:**

### 4.3.1 Արտադրական և ոչ արտադրական գործունեություն

ՄԱԿ-ի Ազգային հաշիվների համակարգի մեթոդաբանությունը /ԱՀՀ 2008/ սահմանում է արտադրական և ոչ արտադրական գործունեության տեսակները: Համաձայն ԱՀՀ մեթոդաբանության, տնային տնտեսության ներսում սեփական սպառման համար նախատեսված բոլոր ծառայությունների արտադրությունը համարվում է ոչ արտադրական գործունեություն: Սա ներառում է սեփական տնային տնտեսության համար տնային տնտեսության անդամների կողմից անվճար իրականացվող գործունեությունը,

օրինակ՝ կացարանի պահպանումը և կարգավորումը՝ ներառյալ փոքր նորոգումները, մաքրումը, տանն օգտագործվող կենցաղային իրերի նորոգումը, այդ թվում նաև տնային տնտեսության կողմից օգտագործվող մեքենաների, ուտելիքի պատրաստումը և մատուցումը, երեխաների դաստիարակումը, երեխաների և (կամ) հիվանդ, հաշմանդամ կամ ծեր անդամների խնամքը, ընտանիքի անդամների տեղափոխումը և այլն:

**Գծապատկեր 4.3.1** Գործունեությունների դասակարգումն ըստ ԱՀՀ-ի




**Տնային տնտեսությունը** առանձին բնակելի միավորում կամ դրա մի մասում, կամ մի քանի շինություններում բնակվող ֆիզիկական անձն է, համատեղ բնակվող երկու և ավելի անձինք են, ովքեր իրենց կենսական կարիքներն ապահովում են ընդհանուր տնտեսություն վարելով՝ ամբողջությամբ կամ մասամբ միավորելով իրենց միջոցները:

**Աշխատանքի զբաղվածություն** է համարվում ցանկացած տնտեսական գործունեություն, որն իրականացվում է վճարովի սկզբունքով՝ դրամային կամ բնաիրային տեսքով, ցանկացած հաստատու-

թյունում, տնտեսությունում կամ մասնավոր տանը կամ՝ առանց վարձատրության՝ շահույթ հետապնդող ընտանեկան բիզնեսում: Միաժամանակ, զբաղվածություն է համարվում նաև հետազոտվող ժամանակահատվածում բացառապես տնային տնտեսության վերջնական սպառման համար իրականացված գործունեությունը (այգեգործություն, բանջարաբուծություն, ընտանի կենդանիների աճեցում և խնամք, ձկնորսություն, սեփական տան, բիզնեսում կապիտալ շինարարություն և այլն), եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տվյալ տնտեսության սպառման մեջ:

**Զբաղվածություն չի համարվում** տնտե-սա-կան գործունեություն չդիտվող (օրինակ՝ մուրացկանություն, գողություն) և եկամուտ ստանալու նպատակ չհետապնդող կամավոր աշխատանքը՝ այլ տնային տնտեսությունների կամ կազմակերպությունների համար կատարվող չվարձատրվող աշխատանքը, սեփական տան, բնակարանի մասնակի շինարարությունը կամ վերանորոգումը, տնային աշխատանքը:

**Զբաղված է** համարվում անձն, ով հետազոտվող շաբաթում ունեցել է վարձու կամ ոչ վարձու աշխատանք, անկախ այն հանգամանքից՝ աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր կամ սեզոնային, միանգամյա կամ պատահական, նույնիսկ, եթե այդ աշխատանքի վրա հետազոտվող շաբաթում ծախսվել է ընդամենը մեկ ժամ: Զբաղված են համարվում նաև տարբեր պատճառներով ժամանակավորապես աշխատանքից բացակայողները:

**Ընտանիքի չվարձատրվող անդամ.** Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամն անձն է, ով աշխատում է ընտանիքի կամ ՏՏ անդամին (ազգականին, բարեկամին) պատկանող ընտանեկան կազմակերպությունում (տնտեսությունում) օժանդակելու, օգնելու նպատակով և չի ստանում դրամական և (կամ) բնահրային փոխհատուցում:

**Աշխատանք փնտրող երեխա.** 10-17 տարեկան այն երեխաներն են, ովքեր հետազոտությանը նախորդող չորս շաբաթվա ընթացքում չեն ունեցել աշխատանք և փնտրել են:

**Տնտեսապես ակտիվ բնակչություն.** Տնտեսապես ակտիվ բնակչության (աշխա-տուժի) մեջ ներառվում են զբաղվածները և գործա-զուրկ-ները, ովքեր դիտարկվող ժամանա-կաշրջանում աշխատանքի շուկա-յում ապահովում են աշխատուժի առաջարկը՝ ապրանքների և

**Կենցաղային, տնային գործեր / ծառայություններ.** անհատական ծառայություններ են, որոնք երեխան իրականացնում է սեփական տնային տնտեսությունում և դրանք չեն դիտվում որպես տնտեսական գործունեություն և եկամուտ ստանալու նպատակ չեն հետապնդում: Տնային ծառայություններից են կերակուրի պատրաստումը, լվացքը, արդուկը, առօրյա գնումները, ընտանիքի կրտսեր և հիվանդ անդամների խնամքը, տան մաքրումը, սեփական ուժերով բնակարանի թեթև վերանորոգումը, ՏՏ-ին պատկանող սարքերի և կենցաղային իրերի նորոգումը և այլն:

## 4.3.2 Երեխայի աշխատանքի գնահատման շրջանակը

### Երեխաներ

ԱՄԿ «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» 1999թ. թիվ 182 Կոնվենցիայով և ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» Կոնվենցիայով **երեխա է համարվում մինչև 18 տարեկան յուրաքանչյուր անձ**:

Սույն հետազոտության շրջանակում երեխայի աշխատանքի ուսումնասիրության համար թիրախային բնակչությունը 5-17 տարեկան երեխաներն են կամ՝ «երեխա» եզրույթը վերաբերում է հետազոտված տնային տնտեսությունների 5-17 տարեկան անդամներին: Ընդ որում, **երեխայի թեթև, վնասակար, արգելված աշխատանքների շրջանակները սահմանելու տեսանկյունից առանցքային նշանակություն ունի այդ համակցության տրոհումը հետևյալ երեք տարիքային խմբերում՝ 5-11 տարեկան, 12-15 տարեկան և 16-17 տարեկան:** Նման դասակարգման համար հիմք են հանդիսացել միջազգային ստանդարտները, այլ երկրների փորձը և ազգային օրենսդրության պահանջները:

### Երեխայի զբաղվածություն  Աշխատող երեխա

**Աշխատող** են համարվում արտադրական գործունեության շրջանակում՝ շուկայում իրացնելու կամ սեփական սպառման նպատակով ապրանքների և ծառայությունների արտադրության մեջ ներգրավված երեխաները: Արտադրական գործունեության շրջանակը սահմանված է ՄԱԿ-ի Ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ) հիման վրա (Գծապատկեր 4.3.1):

Սույն հետազոտության շրջանակում տեղեկատվություն է հավաքագրվել երեխաների կողմից իրականացված ինչպես շուկայական, այնպես էլ ոչ շուկայական տնտեսական գործունեության տեսակների վերաբերյալ (օրինակ՝ կացարանի վերանորոգում, տնային տնտեսության կարիքների համար ջուր կրել, վառելափայտ հավաքել և այլն), որի բացառումը կհանգեցներ աշխատանքային գործունեության

մեջ երեխաների ներգրավվածության վերաբերյալ տվյալների թերագնահատման: Միաժամանակ, «աշխատող երեխաներ» սահմանումը, ինչպես և նախատեսված է ԱՀՀ-ով, բացառում է բոլոր այն երեխաներին, որոնց զբաղվածության շրջանակը սահմանափակված է ոչ արտադրական գործունեությամբ՝ չվճարվող տնային և անձնական ծառայություններով, որոնք իրացվում են տվյալ տնային տնտեսության սահմաններում (Գծապատկեր 4.3.1):

Հետազոտության շրջանակում աշխատող կամ զբաղված համարվելու համար երեխան նվազագույնը մեկ ժամ պետք է ներգրավված լիներ նշված տնտեսական գործունեություններից որևէ մեկում՝ հարցմանը նախորդած շաբաթվա որևէ օրվա ընթացքում: Այն երեխաները, ովքեր սովորաբար ներգրավված են եղել որևէ գործունեությունում, բայց հարցման պահին որևէ պատճառով (հիվանդություն, վատ եղանակ, արձակուրդ և այլն) ժամանակավորապես չեն աշխատել, նույնպես համարվել են զբաղված:

**Հետազոտվող ժամանակահատվածը** եղել է հարցմանը նախորդած 7 օրերի ընթացքում աշխատանքի նվազագույնը մեկ ժամը, ինչը բնութագրում է երեխայի ընթացիկ զբաղվածությունը: Երեխաների տնտեսական ակտիվությունը հետազոտվել է նաև **նախորդ 12 ամիսները** ընդգրկող ժամանակահատվածի կտրվածքով՝ բնութագրելով *երեխայի սովորաբար զբաղվածությունը*, որի նպատակն է հնարավորինս ամբողջական պատկերացում կազմել երեխայի զբաղվածության պայմանների վերաբերյալ, գնահատել դրանց ազդեցությունը երեխայի կրթության, առողջության և ազատ ժամանակի օգտագործման վրա:

**Սույն հետազոտությամբ սահմանվել է երեխայի աշխատանքի և դրա ձևերի ընդհանուր շրջանակը՝ տարբերակված ըստ վնասակար համարվող աշխատանքների, աշխատանքի պայմանների և գործոնների՝ հիմնվելով Աշխատանքի վիճակագիրների 13-րդ, 18-րդ միջազգային կոնֆերանսների (13th, 18th ICLS) երաշխավորությունների (բանաձևերի), միջազգային այլ կոնվենցիաների և ազգային օրենսդրության համապատասխան դրույթների վրա:**

**Գծապատկեր 4.3.2** Երեխայի աշխատանքի գնահատման շրջանակը
ԱՄԿ. Երեխայի աշխատանքի վիճակագիրների 18-րդ միջազգային կոնֆերանսի երաշխավորություններ



### 4.3.3 Երեխայի արգելված համարվող աշխատանք

**«Երեխայի արգելված համարվող աշխատանքը»** (այսուհետ՝ «երեխայի արգելված աշխատանք») **վերաբերում է երեխաների զբաղվածությանը բոլոր այն աշխատանքներում, որոնք ֆիզիկապես, սոցիալապես, բարոյապես կամ մտավոր զարգացման տեսանկյունից համարվում են վնասակար կամ վտանգավոր և խոչընդոտում են երեխայի դպրոց հաճախելիությանը:**

**Թեև երեխայի արգելված աշխատանքի միասնական իրավական սահմանում գոյություն չունի, այնուհանդերձ, միջազգային կոնվենցիաներով նախատեսված է սահմանափակումների / պայմանների ծկուն շրջանակ, որը կարող է հիմք հանդիսանալ ազգային օրենսդրությունների համար՝ հստակեցնելու երեխայի աշխատանքի իրավական սահմանները:**

#### Երեխայի արգելված աշխատանք

Աշխատանքի վիճակագիրների 18-րդ միջազգային կոնֆերանսի (ԱՄԿ, 2008) դրույթներին համապատասխան, «երեխայի արգելված աշխատանք» հասկացությունը սահմանվում և օգտագործվում է երևույթը վիճակագրորեն չափելի, գնահատելի դարձնելու նպատակով և ներառում է 5-17 տարեկան բոլոր այն երեխաներին, ովքեր դիտարկվող ժամանակահատվածում ներգրավված են եղել զբաղվածության ստորև ներկայացված ձևերից որևէ մեկում.

- Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևեր (Worst forms of child labour other than hazardous work).
- Վնասակար աշխատանքներ (Hazardous works).
- Երեխայի արգելված աշխատանքի այլ ձևեր (Other forms of child labour).

Բոլոր այն աշխատանքները, որոնք դուրս են երեխայի արգելված աշխատանքի սահմանումից, համարվում են **«երեխայի արգելված չհամարվող աշխատանք** կամ՝ երեխայի չարգելված աշխատանք»:

#### ▸ Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևեր՝ բացի վնասակար աշխատանքից

Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն ու գնահատումը դուրս է եղել սույն հետազոտության շրջանակից՝ տնային տնտեսությունների հետազոտությունների ստանդարտ մեթոդաբանության շրջանակում դրա վերաբերյալ տվյալների հավաքագրման օբյեկտիվ դժվարություններով պայմանավորված:

#### ▸ Երեխայի վնասակար աշխատանք

Վնասակար աշխատանքը երեխաների կողմից կատարվող աշխատանքի ցանկացած այն տեսակն է տնտեսական գործունեության որոշակի ոլորտում կամ զբաղմունքի տեսակում, որն իր բնույթից ելնելով կարող է հանգեցնել երեխայի առողջության, անվտանգության կամ բարոյականության հնարավոր որևէ վնասի, հետևաբար նաև՝ հանգեցնել երեխաների ֆիզիկական, հոգեբանական կամ նույնիսկ սեռական բռնության: Նման աշխատանքների տեսակներ են, օրինակ, աշխատանքը շինարարությունում, հանքագործական արդյունաբերությունում, ընդերքում, ջրի տակ, վտանգավոր բարձունքից կամ սահմանափակ տարածքներում, վտանգավոր մեքենաների, սարքավորումների կամ գործիքների հետ, աշխատանքը կապված ծանր բեռների բեռնաթափման կամ տեղափոխման հետ, աշխատանքն անառողջ միջավայրում, որտեղ կարող են լինել երեխաների համար վտանգավոր նյութեր, թույլատրելի նորման գերազանցող ջերմաստիճան, աղմուկ, վիբրացիա և այլն, որոնք վնասակար են երեխայի առողջության համար կամ աշխատանքն առանձնապես դժվար պայմաններում՝ երկար տևողությամբ աշխատանքը կամ գիշերային հերթափոխով աշխատանքը, միայնակ գործուղումները կամ աշխատանքը, որտեղ երեխան անհիմն ձևով սահմանափակվում է գործատուի տարածքում:

Ստորև ներկայացված է երեխայի աշխատանքի գնահատման շրջանակն **ըստ աշխատանքի վնասակարության բաղադրիչների**՝ համաձայն միջազգային մեթոդաբանության: Աշխատանքի վնասակարության բաղադրիչներն են.

- Զբաղմունքի վնասակար տեսակները, որոնց դասակարգման հիմքը Զբաղմունքների տեսակների միջազգային դասակարգչի (ISCO-88) հետ նույնական ազգային դասակարգիչն է (կոդավորումը՝ 3 նիշով).
- Գործունեության վնասակար ոլորտները, որոնց դասակարգման հիմքը Տնտեսական գործունեության տեսակների միջազգային դասակարգչի (NACE Rev.2) հետ նույնական ազգ-

ային դասակարգիչն է (կոդավորումը՝ 4 նիշով).

- Աշխատանքի վնասակար պայմանները, գործոնները, միջավայրը.
- Աշխատանքի տևողության թույլատրելի շեմին գերազանցող վնասակար (երկարատև) աշխատաժամերը:

**Գծապատկեր 4.3.3** Երեխայի արգելված աշխատանքի գնահատման ընդհանուր շրջանակ. (ԱՄԿ. Երեխայի աշխատանքի վիճակագիրների 18-րդ միջազգային կոնֆերանսի երաշխավորություններ)




Ստորև ներկայացված են երեխայի վնասակար աշխատանքի գնահատման չափորոշիչները /ալգորիթմները համաձայն ՀՀ օրենսդրության և միջազգային մեթոդաբանության և դրանց ինտեգրված տարբերակի՝ կիրառված ԵԱԱՀ շրջանակում:

## Գծապատկեր 4.3.4 Երեխայի վնասակար աշխատանքի չափորոշիչները. ՀՀ օրենսդրություն

| Փոփոխական | Հարցի h/h-ն հարցաթերթում | Երեխայի տարիք | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 0 - 6 | 7 - 11 | 2 - 13. | 4 - 15 | 16 -17 |
| Շաբաթական աշխատած ժամեր | C 22 | >= 4 | > = 6 | > = 12 | >= 24 | > = 36 |
| Գործունեության ոլորտ | C 20 | Հստակ դասակարգում առկա չէ | | | | |
| Զբաղմունքի տեսակ | C 19 | Հստակ դասակարգում առկա չէ | | | | |
| Աշխատանքի պայմաններ (գործոններ) | C 39 - 40 | - Ֆիզիկական ծանրաբեռնվածություն՝ տեղային, ընդհանուր (ծանրություն, հեռավորություն, կանգնած մնալու տևողություն) | | | | |
| | C 23 | - Գիշերային, հերթափոխային աշխատանք, միայնակ գործուղում | | | | |
| | C 43 | - Քիմիական (քրոմ, ծծումբ, սիլիցիում, ֆտալաթթու, բրոմ և այլն),<br>- Ֆիզիկական (էլեկտրամագնիսական դաշտ, իոնացնող ճառագայթում և այլն)<br>- Կենսաբանական (վիրուսային, բակտերիալ, սնկային և մակաբուծային)<br>- Արդյունաբերական աերոզոլներ<br>- Զգայական, հուզական, լարվածություն և ռիսկ | | | | |

## Գծապատկեր 4.3.5 Երեխայի վնասակար աշխատանքի չափորոշիչները. ԵԱՀՀ

ԱՄԿ

ԵԱՀՀ

| Փոփոխական | # of the Qin the questionnaire | Երեխայի տարիք | | |
|---|---|---|---|---|
| | | 5 - 11 | 12 - 14 (12 - 15)* | 15 - 17 (16 - 17)* |
| Շաբաթական աշխատած ժամեր | C 22 | | > 14 hours | >= 43 hours |
| Գործունեության ոլորտ | C 20 | | Հանքարդյունաբերություն, շինարարություն | |
| Զբաղմունքի տեսակ | C 19 | ԱՐԳԵԼՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ | Զբաղմունքի կոդ =711 \| =713 \| =741 \| =820 \| =959 \| =953 \| =931 \| =939 \| =591 \| =532 \| =624 \| =629 \| =641 \| =649 \| =781 \| =628 \| (>=721 &<=732) \| =749 | |
| Աշխատանքի պայմաններ | C 43 | | Փոշի, կրակ, գազ, վտանգավոր գործիք, քիմիկատ, պայթուցիկ նյութ, չափազանց մութ /ցուրտ/ շոգ, վիբրացիա և այլն | |

ՀՀ օրենսդրություն

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ծանրություն և հեռավորություն | C 39 - 40 | ԱՐԳԵԼՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ | > = 15 կգ և > = 5մ | |

* Միջազգային մեթոդաբանությամբ նախատեսված 12-14 և 15-17 տարիքային խմբերի փոխարեն ԵԱՀՀ շրջանակում սահմանվել են 12-15 և 15-17 տարիքային խմբերը:

### ▸ Երեխայի արգելված աշխատանքի այլ ձևեր

Այն աշխատանքը, որի տևողությունը (աշխատաժամերը) գերազանցել է երեխայի տարիքի համար սահմանված աշխատաժամերի թույլատրելի շեմը (չի համարվել ԹԵԹԵՎ աշխատանք, տե'ս Գծապատկեր 4.3.3)՝ բացասաբար անդրադառնալով երեխայի առողջության, կրթության և ընդհանուր զարգացման վրա, դասվել է երեխայի արգելված աշխատանքի այլ ձևերում:

### ▸ Չվճարվող վնասակար տնային գործեր և/կամ ծառայություններ

Երեխայի արգելված աշխատանքի տեսակներից կարող են համարվել նաև չվճարվող և ըստ որոշակի չափանիշների (սահմանված դ190 երաշխավորություններով) վնասակար համարվող տնային գործերը, ծառայությունները, եթե դրանք ընդգրկված են ԱՅՀ արտադրական գործունեության ազգային շրջանակի մեջ: **Սույն հետազոտության շրջանակում սեփական տնտեսությունում երեխայի կողմից իրականացված տնային գործերը, ծառայությունները, դրանց վրա ծախսված ժամանակից և վնասակարության աստիճանից անկախ, չեն համարվել տնտեսական գործունեությամբ երեխայի զբաղվածություն, հետևաբար նաև՝ արգելված աշխատանք,** թեև դրանց վերաբերյալ տվյալներ հավաքագրվել են:

## Բաժին 5.

# Երեխաների կողմից կատարվող աշխատանքների հիմնական բնութագրիչները

Զեկույցի այս բաժնում ներկայացված են 2015թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացված Երեխայի աշխատանքի ազգային հետազոտության արդյունքները՝ հիմնականում կապված 5-17 տարեկան երեխաների ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և այլ բնութագրիչների հետ: Այն ընդգրկում է տվյալներ երեխաների թվաքանակի, կրթության մեջ ընթացիկ ընդգրկվածության, հաճախելիության, զբաղվածության, աշխատած ժամերի քանակի, աշխատանքային պայմանների, երեխաների կողմից կատարվող տնային աշխատանքների և այլ բնութագրիչների վերաբերյալ:

## 5.1 Երեխաների ներգրավվածությունը տնտեսական գործունեությունում

Համածային հետազոտության արդյունքների, հարցմանը մասնակցած 5-17 տարեկան 453.4 հազար երեխաներից հետազոտվող ժամանակաշրջանում (հարցմանը նախորդած վերջին շաբաթվա ընթացքում) ընթացիկ զբաղվածություն ունեցել են 52.0 հազար երեխա կամ նույն տարիքային խմբի հարցված բոլոր երեխաների 11.5%-ը: Ընդ որում, զբաղված են եղել աղջիկների 8.1%-ը (17.1 հազար երեխա) և տղաների 14.5%-ը (34.9 հազար երեխա): Ըստ տարիքային խմբերի բաշխվածության, զբաղված է եղել 5-11 տարեկան երեխաների 4.6%-ը, 12-15 տարեկանների 15.6%-ը, 16-17 տարեկանների 27.4%-ը: Բոլոր տարիքային խմբերում տղաներն ավելի հաճախ են զբաղվել տնտեսական գործունեությամբ (միջինը՝ 2 անգամ), քան աղջիկները:

**Աղյուսակ 5.1.1** Զբաղված երեխաների բաշխումն ըստ սեռի և տարիքային խմբերի, հազար մարդ

| | Տղա | | Աղջիկ | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենը երեխաներից | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենը երեխաներից | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենը երեխաներից |
| | **Ընթացիկ (վերջին շաբաթվա ընթացքում) զբաղվածություն ունեցող երեխաներ** | | | | | |
| **Ընդամենը** | **34.9** | **14.5** | **17.1** | **8.1** | **52.0** | **11.5** |
| 5-11 | 7.1 | 5.4 | 4.1 | 3.5 | 11.3 | 4.6 |
| 12-15 | 13.6 | 19.2 | 7.2 | 11.6 | 20.8 | 15.6 |
| 16-17 | 14.2 | 37.1 | 5.7 | 16.7 | 19.9 | 27.4 |
| | **Սովորաբար (վերջին 12 ամսվա ընթացքում) զբաղվածություն ունեցող երեխաներ** | | | | | |
| **Ընդամենը** | **42.8** | **17.7** | **21.4** | **10.1** | **64.2** | **14.2** |
| 5-11 | 8.2 | 6.2 | 4.6 | 4.0 | 12.8 | 5.2 |
| 12-15 | 17.5 | 24.6 | 8.7 | 14.0 | 26.2 | 19.7 |
| 16-17 | 17.1 | 44.6 | 8.2 | 24.0 | 25.2 | 34.7 |

Երեխաների զբաղվածությունն ըստ սեռի դիտարկելիս կարող ենք արձանագրել, որ նրանց գերակշիռ մասը եղել են տղաներ՝ 67.2%, որտեղ ըստ տարիքային խմբերի՝ տղաների տեսակարար կշիռը տատանվել է 63%-71% միջակայքում:

**Գծապատկեր 5.1.1** **Ընթացիկ զբաղվածություն ունեցող երեխաների սեռային բաշխումը**




Հետաքրքիր է այն, որ սովորաբար (վերջին 12 ամսվա ընթացքում) զբաղվածություն ունեցել են 5-17 տարեկան երեխաների 14.2%-ը, ինչը 2.7%-ային կետով ավելին է ընթացիկ զբաղվածություն ունեցողներից այն պարզ պատճառով, որ հետազոտվող ժամանակաշրջանը եղել է ուշ աշունը, երբ սեզոնային աշխատանքները մոտենում են ավարտին: Զբաղված են եղել 5-17 տարեկան աղջիկների 10.1%-ը և տղաների՝ 17.7%-ը:

Հետազոտությանը նախորդած շաբաթվա ընթացքում զբաղված երեխաների 95.2%-ը զբաղված է եղել նաև ողջ տարվա ընթացքում: Տարվա ընթացքում զբաղված երեխաների սեռային բաշխվածությունը գրեթե չի տարբերվել ընթացիկ զբաղվածության կառուցվածքից՝ տղաների տեսակարար կշիռը կազմել է 66.7%, աղջիկներինը՝ 33.3%:

**Գծապատկեր 5.1.2** **Սովորաբար զբաղվածություն ունեցող երեխաների սեռային բաշխումը, %**




Հետազոտությանը նախորդած շաբաթվա ընթացքում տնտեսական գործունեությամբ զբաղվել են քաղաքաբնակ երեխաների 2.5%-ը կամ 6.1 հազար երեխա (տղաների 3.6%-ը և աղջիկների 1.2%-ը) և գյուղաբնակ երեխաների 22.3%-ը կամ 45.8 հազար երեխա (տղաների 27%-ը և աղջիկների 16.6%-ը): Ըստ սեռի դիտարկելիս, քաղաքային բնակավայրերում աշխատող երեխաների 77%-ը կազմել են տղաները, գյուղաբնակ տղաների 65.9%-ի համեմատ:

Ուշագրավ է այն, որ թե՛ տղաների, թե՛ աղջիկների դեպքում տարիքի աճմանը զուգահեռ արձանագրվել է զբաղվածության մակարդակի աճ: Օրինակ, 5-11 տարեկան աղջիկների զբաղվածության մակարդակը կազմել է 3.5%, 12-15 տարեկաններինը՝ 11.7%, իսկ 16-17 տարեկան աղջիկներինը՝ 16.6%:

**Գծապատկեր 5.1.3** Ընթացիկ զբաղվածություն ունեցող երեխաների սեռային բաշխումը




Հիմնականում զբաղված են եղել գյուղաբնակ երեխաները (88%), տղաների՝ 86.5%-ը և աղջիկների՝ 91.2%-ը:

**Գծապատկեր 5.1.4** Ընթացիկ զբաղվածություն ունեցող երեխաների սեռային բաշխումն ըստ սեռի և տարիքային խմբերի, %




Ըստ բնակավայրի տեսակի, սեռատարիքային համամասնությունները գրեթե նույնական են եղել նաև վերջին 12 ամիսներին զբաղված երեխաների դեպքում:

Տվյալները ցույց են տալիս, որ հարցված երեխաների 27.2%-ը վերջին 12 ամիսներին եղել են զբաղված գյուղական բնակավայրերում՝ քաղաքային բնակավայրերի 3.3% զբաղվածության համեմատ:

Աղյուսակ 5.1.2 Զբաղված երեխաներն ըստ սեռատարիքային խմբերի, բնակության վայրի

| | Ընթացիկ (վերջին շաբաթվա ընթացքում) զբաղվածություն ունեցող երեխաներ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Տղա | | Աղջիկ | | Ընդամենը | |
| | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենը երեխաներից | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենը երեխաներից | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենը երեխաներից |
| | Քաղաք | | | | | |
| **Ընդամենը** | **4.7** | **3.6** | **1.4** | **1.2** | **6.1** | **2.5** |
| 5-11 | 0.7 | 0.9 | 0.2 | 0.3 | 0.9 | 0.6 |
| 12-15 | 1.8 | 4.8 | 0.7 | 2.0 | 2.4 | 3.3 |
| 16-17 | 2.2 | 13.8 | 0.6 | 3.6 | 2.8 | 8.6 |
| | Գյուղ | | | | | |
| **Ընդամենը** | **30.2** | **27.0** | **15.6** | **16.6** | **45.8** | **22.2** |
| 5-11 | 6.4 | 11.3 | 3.9 | 7.8 | 10.3 | 9.7 |
| 12-15 | 11.8 | 35.7 | 6.6 | 24.8 | 18.4 | 30.8 |
| 16-17 | 12.0 | 53.5 | 5.1 | 29.2 | 17.1 | 42.9 |
| | Սովորաբար (վերջին 12 ամսվա ընթացքում) զբաղվածություն ունեցող երեխաներ | | | | | |
| | Քաղաք | | | | | |
| **Ընդամենը** | **5.9** | **4.6** | **2.2** | **1.9** | **8.2** | **3.3** |
| 5-11 | 0.9 | 1.2 | 0.3 | 0.5 | 1.2 | 0.8 |
| 12-15 | 2.2 | 5.8 | 0.9 | 2.5 | 3.1 | 4.2 |
| 16-17 | 2.9 | 18.2 | 1.1 | 6.6 | 3.9 | 11.9 |
| | Գյուղ | | | | | |
| **Ընդամենը** | **36.9** | **32.9** | **19.1** | **20.4** | **56.0** | **27.2** |
| 5-11 | 7.4 | 13.1 | 4.3 | 8.6 | 11.6 | 10.9 |
| 12-15 | 15.3 | 46.2 | 7.8 | 29.3 | 23.1 | 38.7 |
| 16-17 | 14.2 | 63.3 | 7.1 | 40.7 | 21.3 | 53.4 |

Ինչպես երևում է աղյուսակից, աղջիկներն առավել քիչ են հակված տնտեսական գործունեության մեջ ներգրավվելուն, քան տղաները (տարբերությունը՝ 4.6%), ինչն առավել նկատելի է գյուղական բնակավայրերում:

## 5.2 Երեխաների գործունեության բնութագրիչները

5-17 տարեկան երեխաների գերակշիռ մասը՝ 84.3%-ը, միայն հաճախել է դպրոց, ընդ որում քաղաքային և գյուղական բնակավայրերում ցուցանիշների տարբերությունը կազմել է մոտ 23 տոկոսային կետ (քաղաքում՝ 94.6%, գյուղում՝ 71.9%), ինչը պայմանավորված է մյուս բաղադրիչների մասով առկա տարբերություններով: Մասնավորապես, եթե 5-17 տարեկան երեխաների 10.6%-ը դպրոց հաճախելու հետ միասին նաև աշխատել է, ապա քաղաքային բնակավայրերում այդ ցուցանիշը կազմել է

2.2%, իսկ գյուղում՝ 20.7%: Բոլոր երեխաների 0.8%-ը միայն աշխատել է, ինչը քաղաքում և գյուղում կազմել է համապատասխանաբար՝ 0.3% և 1.5%: Երեխաների 4.2%-ը չի հաճախել դպրոց և չի զբաղվել որևէ տնտեսական գործունեությամբ (քաղաքում՝ 2.9% և գյուղում՝ 5.8%):

**Աղյուսակ 5.2.1** Երեխաներն ըստ գործունեության կարգավիճակի, սեռատարիքային խմբերի և բնակության վայրի

| | Տղա | | Աղջիկ | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | N., 1000 children | % of total children | N., 1000 children | % of total children | N., 1000 children | % of total children |
| **Ընդամենը** | **241.3** | **100** | **212.1** | **100** | **453.4** | **100** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | | |
| Միայն աշխատող | 3.3 | 1.4 | 0.4 | 0.2 | 3.7 | 0.8 |
| Միայն սովորող | 197.2 | 81.7 | 185.0 | 87.3 | 382.2 | 84.3 |
| Աշխատող և սովորող | 31.6 | 13.1 | 16.7 | 7.9 | 48.2 | 10.6 |
| Չաշխատող և չսովորող | 9.2 | 3.8 | 10.0 | 4.7 | 19.2 | 4.2 |
| **ՔԱՂԱՔ** | | | | | | |
| **Ընդամենը** | **129.2** | **100** | **118.2** | **100** | **247.5** | **100** |
| Միայն աշխատող | 0.5 | 0.4 | 0.1 | 0.1 | 0.6 | 0.3 |
| Միայն սովորող | 120.6 | 93.3 | 113.5 | 96.0 | 234.1 | 94.6 |
| Աշխատող և սովորող | 4.2 | 3.2 | 1.4 | 1.2 | 5.5 | 2.2 |
| Չաշխատող և չսովորող | 4.0 | 3.1 | 3.3 | 2.8 | 7.3 | 2.9 |
| **ԳՅՈՒՂ** | | | | | | |
| **Ընդամենը** | **112.0** | **100** | **93.8** | **100** | **205.9** | **100** |
| Միայն աշխատող | 2.8 | 2.5 | 0.3 | 0.4 | 3.1 | 1.5 |
| Միայն սովորող | 76.6 | 68.3 | 71.5 | 76.3 | 148.1 | 71.9 |
| Աշխատող և սովորող | 27.4 | 24.5 | 15.3 | 16.3 | 42.7 | 20.7 |
| Չաշխատող և չսովորող | 5.3 | 4.7 | 6.7 | 7.1 | 12.0 | 5.8 |
| **5 - 11 տարեկան** | | | | | | |
| **Ընդամենը** | **132.0** | **100** | **115.8** | **100** | **247.8** | **100** |
| Միայն աշխատող | 0.1 | 0.1 | 0.0 | 0.0 | 0.1 | 0.0 |
| Միայն սովորող | 118.6 | 89.9 | 103.4 | 89.3 | 222.0 | 89.6 |
| Աշխատող և սովորող | 7.0 | 5.3 | 4.1 | 3.6 | 11.2 | 4.5 |
| Չաշխատող և չսովորող | 6.3 | 4.7 | 8.3 | 7.2 | 14.6 | 5.9 |
| **12 - 15 տարեկան** | | | | | | |
| **Ընդամենը** | **71.0** | **100** | **62.0** | **100** | **133.0** | **100** |
| Միայն աշխատող | 0.1 | 0.2 | 0.0 | 0.0 | 0.1 | 0.1 |
| Միայն սովորող | 56.7 | 79.8 | 54.4 | 87.7 | 111.1 | 83.5 |
| Աշխատող և սովորող | 13.4 | 18.9 | 7.2 | 11.7 | 20.7 | 15.5 |
| Չաշխատող և չսովորող | 0.7 | 1.0 | 0.4 | 0.6 | 1.1 | 0.8 |
| **16 - 17 տարեկան** | | | | | | |
| **Ընդամենը** | **38.3** | **100** | **34.2** | **100** | **72.6** | **100** |
| Միայն աշխատող | 3.1 | 8.1 | 0.4 | 1.2 | 3.5 | 4.9 |
| Միայն սովորող | 21.9 | 57.1 | 27.3 | 79.6 | 49.1 | 67.7 |
| Աշխատող և սովորող | 11.1 | 28.9 | 5.3 | 15.4 | 16.4 | 22.6 |
| Չաշխատող և չսովորող | 2.3 | 5.9 | 1.3 | 3.8 | 3.5 | 4.9 |

## Գծապատկեր 5.2.1 Երեխաների զբաղվածության կարգավիճակն ըստ սեռի և բնակության վայրի, %




Միայն աշխատող և աշխատող ու դպրոց հաճախող երեխաների 83.8%-ը և 88.6%-ը, համապատասխանաբար, եղել են գյուղաբնակները: Գյուղում են բնակվել միայն աշխատող տղաների 84.6%-ը և միաժամանակ աշխատող և սովորող տղաների 86.7%-ը: Միայն աշխատող աղջիկների 75%-ը և միաժամանակ սովորող ու աշխատող աղջիկների 91.6%-ը բնակվել են գյուղում: Ըստ բնակավայրի տեսակի և սեռի դիտարկելիս, տվյալները ցույց են տալիս, որ ցուցանիշների միջև տարբերությունները համեմատաբար ավելի փոքր են չաշխատող և չսովորող երեխաների դեպքում: Քաղաքում է բնակվել չաշխատող և դպրոց չհաճախող երեխաների 41%-ը, գյուղում՝ 59%-ը, նույն խմբի տղաների 42.4%-ը բնակվել է քաղաքում, 57.6%-ը՝ գյուղում, իսկ աղջիկների դեպքում տարբերությունը մի փոքր ավելի մեծ է՝ 33% քաղաքում և 67% գյուղում:

Երկու կարևոր իրողություն կարելի է փաստել. նախ, որևէ տնտեսական գործունեությամբ զբաղվելու ավելի մեծ հաճախականությունը և, երկրորդ՝ բնակավայրի տեսակի առանձնահատկությունները, գործունեության տեսակի բովանդակությունն ու սեզոնայնությունը պայմանավորել են գյուղական վայրերում երեխաների զբաղվածության ավելի բարձր մակարդակ՝ քաղաքների համեմատ:

## Գծապատկեր 5.2.2 Երեխաների զբաղվածության կարգավիճակն ըստ սեռի, տարիքային խմբերի



Թերևս, նույն գործոնները որոշիչ ազդեցություն են ունեցել նաև ըստ տարիքային խմբերի և սեռի երեխաների գործունեության կարգավիճակի վրա: Չի աշխատել և չի սովորել 19.2 հազար երեխա, որոնց մոտ 75.8%-ը եղել են 5-11 տարեկան, 18.4%-ը՝ 16-17 տարեկան և 5.8%-ը՝ 12-15 տարեկան երեխաները: Բնականաբար, ըստ տարիքային խմբերի այսպիսի համամասնությունը պայմանավորված է 5-6 տարեկանների դեռևս դպրոց չհաճախելու և փոքր տարիքի պատճառով չաշխատելու, 16-17 տարեկանների դեպքում՝ կրթությունը ավարտելու և աշխատանք չունենալու, իսկ 12-15 տարեկանների դեպքում կրթությունից դուրս մնալու հետ: Միայն աշխատող 3.7 հազար երեխաների 94.0%-ը կազմել են 16-17 տարիքային խմբի երեխաները, իսկ և՛ աշխատող, և՛ սովորող 48.2 հազար երեխաների կառուցվածքում 42.9%-ը կազմել են 12-15 տարեկան և 33.9%-ը՝ 16-17 տարեկան երեխաները:

## 5.3 Երեխաների կողմից կատարվող տնային գործեր / ծառայություններ

Ըստ հետազոտության արդյունքների տնային գործերում այս կամ այն չափով ներգրավված են եղել ընդհանուր առմամբ 172.8 հազար երեխա կամ 5-17 տարեկան բոլոր երեխաների 38.1%-ը, որոնց 61.4%-ը եղել են քաղաքաբնակ և 38.6%-ը՝ գյուղաբնակ: Ինչպես և ենթադրվում էր, ի տարբերություն աշխատանքային գործունեությամբ զբաղվածության, գործունեության այս ձևում 1.7 անգամով գերակշռել են աղջիկները՝ կազմելով տնային գործերով զբաղվածների 63%-ը, քաղաքում՝ 61%-ը և գյուղում 65%-ը:

**Աղյուսակ 5.3.1** Տնային գործերով զբաղված երեխաների բաշխումն ըստ սեռի, տարիքային խմբերի և բնակության վայրի, հազար երեխա

| | Քաղաք | | Գյուղ | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենը երեխաներից | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենը երեխաներից | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենը երեխաներից |
| **Ընդամենը** | **106.1** | **42.9** | **66.6** | **32.3** | **172.7** | **38.1** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | | |
| **5-11** | **36.9** | **26.1** | **12.9** | **12.1** | **49.8** | **20.1** |
| 12-15 | 44.8 | 61.1 | 28.3 | 47.4 | 73.1 | 55.0 |
| 16-17 | 24.4 | 74.6 | 25.5 | 64.0 | 49.9 | 68.8 |
| **ՏՂԱ** | | | | | | |
| **Ընդամենը** | **41.0** | **31.7** | **23.1** | **20.6** | **64.1** | **26.6** |
| 5-11 | 14.3 | 19.0 | 3.3 | 5.8 | 17.6 | 13.3 |
| 12-15 | 16.7 | 44.1 | 9.3 | 28.1 | 26.0 | 36.6 |
| 16-17 | 10.0 | 62.8 | 10.5 | 46.8 | 20.5 | 53.5 |
| **ԱՂՋԻԿ** | | | | | | |
| **Ընդամենը** | **65.1** | **55.1** | **43.5** | **46.4** | **108.6** | **51.2** |
| 5-11 | 22.6 | 34.2 | 9.6 | 19.3 | 32.2 | 27.8 |
| 12-15 | 28.1 | 79.3 | 18.9 | 71.0 | 47.0 | 75.8 |
| 16-17 | 14.4 | 85.8 | 15 | 85.9 | 29.4 | 85.9 |

Ինչպես և ակնկալվում էր, երեխայի տարիքի և տնային գործերում մասնակցության աստիճանի միջև արձանագրվել է ուղղակի կապ: Այսպես, տնային գործերով զբաղվել են 16-17 տարեկան երեխա-

ների 68.8%-ը, 12-15 տարեկանների` 55%-ը և 5-11 տարեկանների` 20.1%-ը: Նույն ցուցանիշն ըստ երեխայի սեռի և բնակության վայրի տրոհելիս պարզվում է, որ տնային գործերում ներգրավվածության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է քաղաքաբնակ երեխաների շրջանում` 42.9%, գյուղում բնակվող երեխաների 32.3%-ի համեմատ: Աղջիկներն ավելի քան երկու անգամ հաճախ, քան տղաները կատարել են տնային/կենցաղային չվճարվող գործեր (51.2%):

**Աղյուսակ 5.3.2** Տնային գործերով զբաղված երեխաների բաշխումն ըստ սեռի, տարիքային խմբերի և շաբաթական աշխատած ժամերի, հազար երեխա

| | 1-7 ժամ | 7 - 14 ժամ | 14-24 ժամ | 24 > ժամ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | **62.2** | **28.1** | **8.6** | **1.1** | **100** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | |
| 5 - 11 | 73.4 | 19.6 | 6.5 | 0.5 | 100 |
| 12 - 15 | 61.5 | 28.7 | 8.3 | 1.5 | 100 |
| 16 - 17 | 49.6 | 37.8 | 11.6 | 1.0 | 100 |
| **ՏՂԱ** | | | | | |
| **Ընդամենը** | **67.0** | **25.0** | **7.1** | **0.9** | **100** |
| 5 - 11 | 73.5 | 18.9 | 7.4 | 0.3 | 100 |
| 12 - 15 | 65.7 | 26.6 | 6.2 | 1.5 | 100 |
| 16 - 17 | 61.8 | 29.4 | 8.1 | 0.7 | 100 |
| **ԱՂՋԻԿ** | | | | | |
| **Ընդամենը** | **59.3** | **30.0** | **9.5** | **1.1** | **100** |
| 5 - 11 | 73.3 | 20.1 | 6.0 | 0.7 | 100 |
| 12 - 15 | 58.9 | 30.0 | 9.7 | 1.5 | 100 |
| 16 - 17 | 41.6 | 43.3 | 13.9 | 1.2 | 100 |
| **ՔԱՂԱՔ** | | | | | |
| **Ընդամենը** | **67.0** | **25.8** | **6.4** | **0.8** | **100** |
| 5 - 11 | 76.1 | 17.4 | 5.8 | 0.7 | 100 |
| 12 - 15 | 63.9 | 28.4 | 6.5 | 1.3 | 100 |
| 16 - 17 | 56.4 | 36.2 | 7.3 | 0.1 | 100 |
| **ԳՅՈՒՂ** | | | | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **54.1** | **32.1** | **12.4** | **1.4** | **100** |
| 5 - 11 | 65.3 | 26.2 | 8.6 | 0.0 | 100 |
| 12 - 15 | 57.7 | 29.2 | 11.4 | 1.8 | 100 |
| 16 - 17 | 42.9 | 39.3 | 15.9 | 1.9 | 100 |

Հիմնվելով ծախսված միջին շաբաթական ժամերի վրա, կարելի է փաստել, որ առավել մեծ մասնաբաժին են ունեցել համեմատաբար քիչ ծանրաբեռնվածություն ունեցող երեխաները. տնային գործերով զբաղված երեխաների 62.2%-ը շաբաթվա ընթացքում միջին հաշվով ծախսել են մինչև 7 ժամ:

# Բաժին 6.

# Աշխատող երեխաների բնութագրիչները

Երեխաների զբաղվածությունն ուսումնասիրելու նպատակով հետազոտության մեջ հաշվի են առնվել այն գործունեությունները, որոնք իրականացվել են երեխաների կողմից՝ դրամական կամ բնաիրային վարձատրությամբ: Հետազոտության մեթոդաբանությունից ելնելով, աշխատանք է դիտվել նաև ընտանեկան բիզնեսում կամ գյուղացիական տնտեսությունում / ֆերմայում իրականացված աշխատանքը:

Այս բաժնում ներկայացվել են աշխատող երեխաների բնութագրիչները, մասնավորապես նրանց գործունեության ոլորտը, զբաղմունքի տեսակը, զբաղվածության կարգավիճակը և այլն:

## 6.1 Երեխաների զբաղվածությունն ըստ գործունեության տեսակի

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգման համար հիմք է ընդունվել Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը՝ ապահովելով նաև տվյալների միջազգային համադրելիությունը:

Ըստ հետազոտության արդյունքների, զբաղված երեխաներն առավելապես ընդգրկված են եղել գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն ոլորտում՝ 90.4%՝ հիմնականում ներգրավված լինելով բերքահավաքի աշխատանքներում որպես ընտանիքի օգնող անդամ, զբաղվել են խոշոր եղջերավոր անասունների խնամքով, արածեցմամբ և խառը՝ անասնապահական և բուսաբուծության գյուղատնտեսական գործունեությամբ: Առևտուր, նորոգում, փոխադրում,

**Աղյուսակ 6.1.1** 5-17 տարեկան երեխաների զբաղվածությունն ըստ տնտեսական գործունեության տեսակի, սեռի և տարիքային խմբերի

| | 5-11 տար. | | 12-15 տար. | | 16-17 տար. | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանա, 1000 երեխա | % | Թվաքանա, 1000 երեխա | % | Թվաքանա, 1000 երեխա | % | Թվաքանա, 1000 երեխա | % |
| **Ընդամենը** | **11.3** | **100** | **20.8** | **100** | **19.9** | **100** | **52.0** | **100** |
| **Տնտեսական գործունեության տեսակներ՝ խոշորացված խմբերով** | | | | | | | | |
| Գյուղատնտեսություն | 10.7 | 95.2 | 19.1 | 91.8 | 17.6 | 88.6 | 47.0 | 90.4 |
| Արդյունաբերություն | 0.0 | 0 | 0.1 | 0.5 | 0.7 | 3.3 | 0.7 | 1.4 |
| Շինարարություն | 0.0 | 0 | 0.1 | 0.3 | 0.4 | 2.2 | 0.4 | 0.8 |
| Առևտուր, նորոգում, փոխադրումներ և պահեստային տնտեսություն, կացության և հանրային սննդի կազմակերպում | 0.0 | 0.4 | 1.0 | 4.9 | 0.9 | 4.5 | 1.9 | 3.7 |
| Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում | … | … | … | … | 0.0 | 0.2 | 0.0 | 0.1 |
| Այլ ծառայություններ | 0.5 | 4.3 | 0.5 | 2.5 | 0.2 | 1.2 | 1.9 | 3.7 |
| **Տղա** | | | | | | | | |
| **Ընդամենը** | **7.1** | **100** | **13.6** | **100** | **14.2** | **100** | **34.9** | **100** |
| Գյուղատնտեսություն | 6.7 | 94.5 | 12.4 | 91.2 | 12.3 | 86.7 | 31.1 | 89.2 |
| Արդյունաբերություն | 0.0 | 0 | 0.1 | 0.4 | 0.6 | 4.4 | 0.7 | 2 |
| Շինարարություն | 0.0 | 0 | 0.1 | 0.4 | 0.4 | 3.1 | 0.4 | 1.2 |
| Առևտուր, նորոգում, փոխադրումներ և պահեստային տնտեսություն, կացության և հանրային սննդի կազմակերպում | 0.0 | 0.7 | 0.8 | 5.7 | 0.7 | 4.8 | 1.4 | 4.0 |

| | 5-11 տար. | | 12-15 տար. | | 16-17 տար. | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանակ, 1000 երեխա | % | Թվաքանակ, 1000 երեխա | % | Թվաքանակ, 1000 երեխա | % | Թվաքանակ, 1000 երեխա | % |
| Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում | ... | ... | ... | ... | 0.0 | 0.3 | 0.0 | 0.1 |
| Այլ ծառայություններ | 0.3 | 4.8 | 0.3 | 2.3 | 0.1 | 0.8 | 1.2 | 3.4 |
| **Աղջիկ** | | | | | | | | |
| **Ընդամենը** | **4.1** | **100** | **7.2** | **100** | **5.7** | **100** | **17.1** | **100** |
| Գյուղատնտեսություն | 4.0 | 96.5 | 6.7 | 93.1 | 5.3 | 93.5 | 15.8 | 92.4 |
| Արդյունաբերություն | 0.0 | 0 | 0.1 | 0.8 | 0.0 | 0.7 | 0.1 | 0.6 |
| Շինարարություն | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... |
| Առևտուր, նորոգում, փոխադրումներ և պահեստային տնտեսություն, կացության և հանրային սննդի կազմակերպում | 0.0 | 0 | 0.2 | 3.3 | 0.2 | 3.8 | 0.5 | 2.9 |
| Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... |
| Այլ ծառայություններ | 0.1 | 3.5 | 0.2 | 2.9 | 0.1 | 2 | 0.7 | 4.1 |
| **Քաղաք** | | | | | | | | |
| **Ընդամենը** | **0.9** | **100** | **2.4** | **100** | **2.8** | **100** | **6.1** | **100** |
| Գյուղատնտեսություն | 0.8 | 84.0 | 1.6 | 67.1 | 1.5 | 54.6 | 3.9 | 64.0 |
| Արդյունաբերություն | ... | ... | 0.03 | 1.2 | 0.2 | 6.1 | 0.2 | 4.0 |
| Շինարարություն | ... | ... | ... | ... | 0.1 | 1.8 | 0.2 | 3.7 |
| Առևտուր, նորոգում, փոխադրումներ և պահեստային տնտեսություն, կացության և հանրային սննդի կազմակերպում | ... | ... | ... | ... | 0.2 | 8.3 | 1.2 | 19.3 |
| Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում | 0.0 | 3.7 | 0.5 | 20.5 | 0.5 | 19.6 | 0.0 | 0.6 |
| Այլ ծառայություններ | ... | ... | ... | ... | 0.1 | 3.9 | 0.5 | 8.3 |
| **Գյուղ** | | | | | | | | |
| **Ընդամենը** | **10.3** | **100** | **18.4** | **100** | **17.1** | **100** | **45.8** | **100** |
| Գյուղատնտեսություն | 9.8 | 95.1 | 17.3 | 94.2 | 15.9 | 93.0 | 43.0 | 93.9 |
| Արդյունաբերություն | ... | ... | 0.0 | 0.2 | 0.4 | 2.6 | 0.5 | 1.1 |
| Շինարարություն | ... | ... | ... | ... | 0.2 | 1.1 | 0.2 | 0.4 |
| Առևտուր, նորոգում, փոխադրումներ և պահեստային տնտեսություն, կացության և հանրային սննդի կազմակերպում | 0.0 | 0.3 | 0.5 | 2.6 | 0.1 | 0.6 | 0.7 | 1.5 |
| Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում | ... | ... | ... | ... | 0.0 | 0.2 | ... | ... |
| Այլ ծառայություններ | ... | ... | ... | ... | 0.1 | 0.4 | 1.4 | 3.1 |

պահպանում, կացություն և հանրային սննդի ծառայությունների ոլորտում ներգրավված են եղել աշխատող երեխաների 3.7%-ը՝ հիմնականում զբաղված լինելով սննդամթերքի վաճառքով, սակայն երեխաները զբաղվել են նաև շարժիչային վառելիքի, շինանյութի, դեղորայքի առևտրով, զբաղվել են նաև ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքներով:

Զբաղված տղաների 89.2%-ը և զբաղված աղջիկների 92.4%-ը ներգրավված է եղել գյուղատնտեսության ոլորտում: Քաղաքաբնակ աշխատող երեխաների 64%-ն է զբաղված եղել գյուղատնտեսության ոլորտում և գյուղաբնակ երեխաների՝ 93.9%-ը: Առևտուր, նորոգում, փոխադրումներ և պահեստային տնտեսություն, կացության և հանրային սննդի կազմակերպում ոլորտում զբաղված է եղել քաղաքաբնակ զբաղվածների 19.3%-ը և գյուղաբնակների՝ 1.5%-ը:

## 6.2 Երեխաների զբաղվածությունն ըստ զբաղմունքի տեսակի

Զբաղմունքների խմբերի դասակարգման համար հիմք է ընդունվել Զբաղմունքների դասակարգիչը, որը հնարավորություն է տալիս տվյալները դարձնել համադրելի:

Գյուղատնտեսությունը, լինելով երեխաների զբաղվածության հիմնական ոլորտը, որտեղ երեխաները առավել հաճախ զբաղվել են ժամանակավոր բնույթ կրող գյուղատնտեսական աշխատանքներով, ենթադրում էր որակավորում չպահանջող աշխատանքներում 90% զբաղվածություն (բերք հավաքող, բեռնակիր, սեփական տնտեսությունում օգտագործելու համար ջրի, անտառից վառելափայտի հավաքում, անասունների արածեցում, ցրիչ, առաքիչ, պահակ և այլն): Երեխաների 7.3%-ն իրակա-

**Աղյուսակ 6.2.1** Երեխաներն ըստ զբաղմունքի տեսակի, սեռի, տարիքային խմբերի և բնակության վայրի

| | 5-11 տար. | | 12-15 տար. | | 16-17 տար. | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանա, 1000 երեխա | % | Թվաքանա, 1000 երեխա | % | Թվաքանա, 1000 երեխա | % | Թվաքանա, 1000 երեխա | % |
| **Ընդամենը** | **11.3** | **100** | **20.8** | **100** | **19.9** | **100** | **52.0** | **100** |
| **Զբաղմունքի հիմնական խմբեր** | | | | | | | | |
| Միջին որակավորման (տեխնիկական) մասնագետներ | … | … | … | 0.2 | 0.1 | 0.5 | 0.1 | 0.3 |
| Ծառայությունների և առևտրի ոլորտի աշխատողներ | … | … | 0.6 | 3.0 | 0.6 | 3.0 | 1.2 | 2.4 |
| Որակավորված բանվորական մասնագետներ | … | … | … | … | 3.8 | 19.3 | 3.8 | 7.4 |
| Որակավորում չունեցող աշխատողներ | 11.3 | 100 | 20.1 | 96.8 | 15.3 | 77.1 | 46.7 | 90.0 |
| **Տղա** | | | | | | | | |
| **Ընդամենը** | **7.1** | **100** | **13.6** | **100** | **14.2** | **100** | **34.9** | **100** |
| Միջին որակավորման (տեխնիկական) մասնագետներ | … | … | … | … | … | … | … | … |
| Ծառայության և առևտրի աշխատողներ | … | … | 0.4 | 3.1 | 0.4 | 3.0 | 0.9 | 2.4 |
| Որակավորված բանվորական մասնագետներ | … | … | … | … | 3.4 | 24.3 | 3.4 | 9.9 |
| Որակավորում չունեցող աշխատողներ | 7.1 | 100 | 13.2 | 96.9 | 10.3 | 72.7 | 30.6 | 87.7 |
| **GIRL** | | | | | | | | |
| **Ընդամենը** | **4.1** | **100** | **7.2** | **100** | **5.7** | **100** | **17.1** | **100** |
| Միջին որակավորման (տեխնիկական) մասնագետներ | … | … | 0.0 | 0.5 | 0.1 | 1.9 | 0.1 | 0.8 |
| Ծառայությունների և առևտրի ոլորտի աշխատողներ | … | … | 0.2 | 2.9 | 0.2 | 3.0 | 0.4 | 2.2 |
| Որակավորված բանվորական մասնագետներ | … | … | … | … | 0.4 | 7.1 | 0.4 | 2.4 |

| | 5-11 տար. | | 12-15 տար. | | 16-17 տար. | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանա, 1000 երեխա | % | Թվաքանա, 1000 երեխա | % | Թվաքանա, 1000 երեխա | % | Թվաքանա, 1000 երեխա | % |
| Որակավորում չունեցող աշխատողներ | 4.1 | 100 | 7.0 | 96.7 | 5.0 | 88.1 | 16.1 | 94.6 |
| **Քաղաք** | | | | | | | | |
| **Ընդամենը** | **0.9** | **100** | **2.4** | **100** | **2.8** | **100** | **6.1** | **100** |
| Միջին որակավորման (տեխնիկական) մասնագետներ | ... | ... | ... | 1.3 | 0.1 | 4.5 | 0.2 | 2.6 |
| Ծառայությունների և առևտրի ոլորտի աշխատողներ | … | … | 0.2 | 7.7 | 0.4 | 15.6 | 0.6 | 10.1 |
| Որակավորված բանվորական մասնագետներ | 0.3 | 33.6 | 1.1 | 45.8 | 1.3 | 47.9 | 2.8 | 44.9 |
| Որակավորում չունեցող աշխատողներ | 0.6 | 66.4 | 1.1 | 45.2 | 0.9 | 32 | 2.6 | 42.5 |
| **Գյուղ** | | | | | | | | |
| **Ընդամենը** | **10.3** | **100** | **18.4** | **100** | **17.1** | **100** | **45.8** | **100** |
| Միջին որակավորման (տեխնիկական) մասնագետներ | … | … | … | … | … | … | … | … |
| Ծառայության և առևտրի աշխատողներ | … | … | 0.4 | 2.4 | 0.1 | 0.9 | 0.6 | 1.3 |
| Որակավորված բանվորական մասնագետներ | … | … | … | … | … | 19.0 | 3.3 | 7.1 |
| Որակավորում չունեցող աշխատողներ | 10.3 | 100 | 18.0 | 97.6 | 13.7 | 80.2 | 42.0 | 91.6 |

նացրել են որոշակի հմտություններ պահանջող բանվորական աշխատանքներ (որպես այգեգործ, բանջարաբույծ, հացաթխման, հրուշակեղենի արտադրությունում բանվոր, տրակտորիստ, բեռնատարի վարորդ և այլն), 2.4%-ը եղել են ծառայության և առևտրի ոլորտի աշխատողներ (բենզալցակայանում վառելիքի լիցքավորող, մատուցող, խոհարար, շրջիկ վաճառող) և աշխատող երեխաների ընդամենը 0.3%-ն է կատարել որոշակի մասնագիտական հմտություններ պահանջող աշխատանք (պարուսույց, երաժիշտ, տեխնիկ-դեղագետ):

Ինչպես և ակնկալվում էր, 5-11 տարիքային խմբի զբաղված երեխաներն առավելապես ներգրավված են եղել տարրական՝ որակավորում չպահանջող զբաղմունքներում (72.4%) և, թեև, 27.6%-ն իրականացրել է որևէ հմտություն պահանջող աշխատանք: Որոշակի որակավորում, հմտություն պահանջող աշխատանքներ կատարել է 16-17 տարեկան զբաղված երեխաների 66.3%-ը, և 12-15 տարեկանների՝ 44.3%-ը:

**Գծապատկեր 6.2.1** Երեխաների բաշխումն ըստ զբաղմունքի տեսակի և տարիքային խմբերի, %



Սեռային բաշխմամբ գրեթե նույն միտումներն են պահպանվել տարիքային խմբերի և զբաղմունքների տեսակների միջև: Զբաղված տղաները փոքր-ինչ ավելի հաճախ են ներգրավված եղել ծառայությունների և առևտրի ոլորտում՝ 2.4 %, քան աղջիկները՝ 2.1 %, որն առավելապես դիտվել է քաղաքաբնակ երեխաների շրջանում: Ընդհանուր առմամբ, քաղաքաբնակ զբաղված երեխաների 10.1%-ը ներգրավված է եղել ծառայությունների և առևտրի ոլորտի աշխատանքներում, մինչդեռ գյուղաբնակ երեխաների մոտ այս ցուցանիշը կազմել է ընդամենը 1.3%:

**Գծապատկեր 6.2.2** Զբաղված երեխաների բաշխումն ըստ սեռի և զբաղմունքի տեսակի, %




## 6.3 Զբաղվածության կարգավիճակը

Երեխաների զբաղվածության կարգավիճակն ուսումնասիրվել է երկու տարիքային խմբերում՝ 10-15 և 16-17, այսինքն զբաղվածություն ունեցող 5-9 տարեկան երեխաները զբաղվածության կարգավիճակի վերաբերյալ հարցին չեն պատասխանել: Ըստ այդմ, ինչպես ցույց են տալիս աղյուսակ 6.3.1-ի տվյալները, 10-15 տարեկան տարիքային խմբի երեխաները կազմել են այդ համակցության 57.4%-ը (26.8 հազ. մարդ), իսկ 16-17 տարեկանները՝ 42.6%-ը (19.8 հազ. մարդ):

**Աղյուսակ 6.3.1** Երեխաների զբաղվածության կարգավիճակն ըստ տարիքային խմբերի և սեռի

| | 10-15 տարեկան | | 16-17 տարեկան | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանակ, 1000 երեխա | % | Թվաքանակ, 1000 երեխա | % | Թվաքանակ, 1000 երեխա | % |
| **Ընդամենը** | **26.8** | **100** | **19.9** | **100** | **46.7** | **100** |
| **Զբաղվածության կարգավիճակ** | | | | | | |
| Վարձու աշխատող գրավոր պայմանագրով | … | … | 0.1 | 0.6 | 0.1 | 0.2 |
| Վարձու աշխատող բանավոր համաձայնությամբ | 0.3 | 1.2 | 1.6 | 8.1 | 1.9 | 4.1 |
| Ինքնազբաղված | 4.3 | 16.1 | 4.8 | 24.3 | 9.2 | 19.6 |
| Արտադրական կոոպերատիվի անդամ | 0.1 | 0.2 | 0.0 | 0 | 0.1 | 0.1 |

| | 10-15 տարեկան | | 16-17 տարեկան | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանակ, 1000 երեխա | % | Թվաքանակ, 1000 երեխա | % | Թվաքանակ, 1000 երեխա | % |
| Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ | 22.1 | 82.5 | 13.4 | 67.1 | 35.5 | 76.0 |
| **Տղա** | | | | | | |
| **Ընդամենը** | **17.6** | **100** | **14.2** | **100** | **31.8** | **100** |
| Վարձու աշխատող գրավոր պայմանագրով | … | … | 0.1 | 0.7 | 0.1 | 0.3 |
| Վարձու աշխատող բանավոր համաձայնությամբ | 0.3 | 1.6 | 1.4 | 9.6 | 1.6 | 5.2 |
| Ինքնազբաղված | 2.7 | 15.4 | 4.2 | 29.5 | 6.9 | 21.7 |
| Արտադրական կոոպերատիվի անդամ | … | … | … | … | … | … |
| Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ | 14.6 | 83 | 8.6 | 60.2 | 23.1 | 72.8 |
| **Աղջիկ** | | | | | | |
| **Ընդամենը** | **9.2** | **100** | **5.7** | **100** | **14.9** | **100** |
| Վարձու աշխատող գրավոր պայմանագրով | … | … | … | 0.3 | … | 0.1 |
| Վարձու աշխատող բանավոր համաձայնությամբ | 0.0 | 0.4 | 0.2 | 4.1 | 0.3 | 1.8 |
| Ինքնազբաղված | 1.6 | 17.5 | 0.6 | 11.2 | 2.3 | 15.1 |
| Արտադրական կոոպերատիվի անդամ | 0.1 | 0.6 | … | … | 0.1 | 0.3 |
| Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ | 7.5 | 81.6 | 4.8 | 84.4 | 12.3 | 82.7 |
| **Քաղաք** | | | | | | |
| **Ընդամենը** | **3.0** | **100** | **2.8** | **100** | **5.8** | 100 |
| Վարձու աշխատող գրավոր պայմանագրով | … | … | 0.1 | 4 | 0.1 | 1.9 |
| Վարձու աշխատող բանավոր համաձայնությամբ | 0.2 | 5.6 | 0.7 | 26.7 | 0.9 | 15.6 |
| Ինքնազբաղված | 0.5 | 15.6 | 0.5 | 19.1 | 1.0 | 17.3 |
| Արտադրական կոոպերատիվի անդամ | 0.1 | 1.7 | 0.0 | 0 | 0.1 | 0.9 |
| Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ | 2.4 | 77.2 | 1.4 | 50.2 | 3.7 | 64.3 |
| **Գյուղ** | | | | | | |
| **Ընդամենը** | **23.8** | **100** | **17.1** | **100** | **40.9** | **100** |
| Վարձու աշխատող գրավոր պայմանագրով | … | … | 0.1 | 4.0 | 0.1 | 1.9 |
| Վարձու աշխատող բանավոր համաձայնությամբ | 0.1 | 0.6 | 0.9 | 5.0 | 1.0 | 2.5 |
| Ինքնազբաղված | 3.9 | 16.2 | 4.3 | 25.1 | 8.1 | 19.9 |
| Արտադրական կոոպերատիվի անդամ | … | … | … | … | … | … |
| Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ | 19.8 | 83.2 | 12.0 | 69.9 | 31.7 | 77.6 |

Գրավոր պայմանագրով աշխատող երեխաները կազմել են 0.2%, այն դեպքում, երբ բանավոր համաձայնությամբ աշխատողների տեսակարար կշիռը կազմել է 4.1%: Առավել մեծ տեսակարար կշիռ է գրանցվել առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամների առումով՝ 76.0%: Ինքնազբաղված երեխաների տեսակարար կշիռը կազմել է 19.6%: Տղաների մոտ այդ ցուցանիշը կազմել է 21.7%, իսկ աղջիկների մոտ՝ 15.1%: Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ երեխաները ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն գյուղական բնակավայրերում՝ 77.6%, քաղաքային բնակավայրերի 64.3%-ի համեմատ:

**Գծապատկեր 6.3.1** Երեխաների տոկոսային բաշխումն ըստ զբաղվածության կարգավիճակի




Աղյուսակ 6.3.1-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ինքնազբաղվածների 88%-ը և առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամների 89.3%-ը եղել են գյուղաբնակ երեխաները:

## 6.4 Շաբաթական աշխատանքային ժամերը

Ըստ հետազոտության արդյունքների, երեխաները շաբաթական աշխատել են միջինը 13 ժամ, որից 14.1 ժամ աշխատել են տղաները և 10.8 ժամ՝ աղջիկները: 16-17 տարեկան տարիքային խմբի երեխաները շաբաթական միջինը աշխատել են 16.6 ժամ, 12-15 տարեկանները՝ 11.8 ժամ, իսկ 5-11 տարեկանները՝ 8.7 ժամ:

Արգելված համարվող աշխատանքով զբաղված երեխաները շաբաթական աշխատել են միջինը 14.4 ժամ, որից 5-11 տարեկանները աշխատել են 8.7 ժամ, 12-15 տարեկանները՝ 14.6 ժամ և 16-17 տարեկանները՝ 18.8 ժամ:

**Աղյուսակ 6.4.1** Փաստացի աշխատած միջին շաբաթական ժամերն ըստ տարիքային խմբերի, սեռի և աշխատանքի տեսակի, ժամ

| | Տղա | Աղջիկ | Ընդամենը |
|---|---|---|---|
| **ԱՇԽԱՏՈՂ ԵՐԵԽԱՆԵՐ** | | | |
| **Ընդամենը** | **14.1** | **10.8** | **13** |
| 5-11 | 8.7 | 8.8 | 8.7 |
| 12-15 | 12.4 | 10.7 | 11.8 |
| 16-17 | 18.3 | 12.5 | 16.6 |
| **ԵՐԵԽԱՅԻ ԱՐԳԵԼՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ** | | | |
| **Ընդամենը** | **15.5** | **11.8** | **14.4** |
| 5-11 | 8.7 | 8.8 | 8.7 |
| 12-15 | 15.4 | 12.9 | 14.6 |
| 16-17 | 19.8 | 14.8 | 18.8 |
| **ԵՐԵԽԱՅԻ ՉԱՐԳԵԼՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ** | | | |
| **Ընդամենը** | **8.8** | **8.7** | **8.8** |
| 5-11 | ... | ... | ... |
| 12-15 | 6 | 7.2 | 6.5 |
| 16-17 | 12.7 | 10.2 | 11.5 |

Չարգելված աշխատանքով զբաղված երեխաները շաբաթական աշխատել են միջինը 8.8 ժամ: 16-17 տարեկաններն աշխատել են 11.5 ժամ, իսկ 12-15 տարեկանները՝ 6.5 ժամ: Հետաքրքրական է, որ միայն այս տարիքային խմբում են աղջիկ երեխաներն ավելի երկար աշխատել (1.2 ժամով ավել), քան տղա երեխաները:

**Գծապատկեր 6.4.1** Միջին շաբաթական աշխատանքային ժամերը, ժամ



43 ժամը գերազանցող աշխատանքային շաբաթ է ունեցել 1.2 հազար երեխա, որոնց 16.7%-ը 12-15 տարեկան (հիմնականում՝ տղաներ) և 83.3%-ը՝ 16-17 տարեկան, որոնց 90%-ը՝ տղաներ:

## Աղյուսակ 6.4.2 Երեխաների բաշխումն ըստ փաստացի աշխատած միջին շաբաթական ժամերի սանդղակի, տարիքի, սեռի և բնակության վայրի

| | < 6 ժամ | | 6 - 14 | | 15 - 29 | | 30 - 42 | | 43 >= ժամ | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքա-նակ, 1000 երեխա | % | Թվաքա-նակ, 1000 երեխա | % | Թվաքա-նակ, 1000 երեխա | % | Թվաքա-նակ, 1000 երեխա | % | Թվաքա-նակ, 1000 երեխա | % | Թվաքա-նակ, 1000 երեխա | % |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | | | | | | | | |
| **Ընդ.** | **16.0** | **30.8** | **21.0** | **40.4** | **11.7** | **22.4** | **2.2** | **4.2** | **1.2** | **2.2** | **52.0** | **100** |
| 5 - 11 | 7.5 | 66.9 | 2.5 | 22.2 | 1.1 | 9.7 | 0.1 | 1.2 | 0.0 | 0.0 | 11.3 | 100 |
| 12 - 15 | 5.0 | 24.3 | 9.5 | 45.8 | 5.5 | 26.5 | 0.6 | 2.7 | 0.2 | 0.8 | 20.8 | 100 |
| 16 - 17 | 3.4 | 17.2 | 8.9 | 44.9 | 5.0 | 25.4 | 1.5 | 7.6 | 1.0 | 5.0 | 19.9 | 100 |
| **ՏՂԱ** | | | | | | | | | | | | |
| **Ընդ.** | **10.4** | **29.8** | **13.2** | **38.0** | **8.4** | **24.0** | **1.8** | **5.1** | **1.1** | **3.2** | **34.9** | **100** |
| 5 - 11 | 4.9 | 69.4 | 1.5 | 20.7 | 0.7 | 9.3 | 0.0 | 0.6 | 0.0 | 0.0 | 7.1 | 100 |
| 12 - 15 | 3.1 | 22.9 | 6.1 | 45.2 | 3.8 | 27.7 | 0.4 | 3.1 | 0.2 | 1.2 | 13.6 | 100 |
| 16 - 17 | 2.4 | 16.6 | 5.6 | 39.7 | 4.0 | 27.9 | 1.3 | 9.3 | 0.9 | 6.6 | 14.2 | 100 |
| **ԱՂՋԻԿ** | | | | | | | | | | | | |
| **Ընդ.** | **5.6** | **32.8** | **7.7** | **45.3** | **3.3** | **19.2** | **0.4** | **2.4** | **0.1** | **0.4** | **17.1** | **100** |
| 5 - 11 | 2.6 | 62.6 | 1.0 | 24.8 | 0.4 | 10.4 | 0.1 | 2.2 | 0.0 | 0.0 | 4.1 | 100 |
| 12 - 15 | 1.9 | 26.8 | 3.4 | 47.0 | 1.8 | 24.3 | 0.1 | 1.9 | 0.0 | 0.0 | 7.2 | 100 |
| 16 - 17 | 1.1 | 18.7 | 3.3 | 58.0 | 1.1 | 19.1 | 0.2 | 3.2 | 0.1 | 1.0 | 5.7 | 100 |
| **ՔԱՂԱՔ** | | | | | | | | | | | | |
| **Ընդ.** | **1.5** | **24.0** | **2.6** | **42.8** | **1.2** | **19.8** | **0.4** | **7.2** | **0.4** | **6.2** | **6.1** | **100** |
| 5 - 11 | 0.6 | 58.6 | 0.3 | 31.8 | 0.1 | 9.6 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.9 | 100 |
| 12 - 15 | 0.7 | 27.0 | 1.1 | 45.0 | 0.5 | 22.3 | 0.1 | 2.3 | 0.1 | 3.4 | 2.4 | 100 |
| 16 - 17 | 0.3 | 9.7 | 1.2 | 44.6 | 0.6 | 21.1 | 0.4 | 14.0 | 0.3 | 10.7 | 2.8 | 100 |
| **ԳՅՈՒՂ** | | | | | | | | | | | | |
| **Ընդ.** | **14.5** | **31.7** | **18.3** | **40.0** | **10.4** | **22.8** | **1.7** | **3.8** | **0.8** | **1.7** | **45.8** | **100** |
| 5 - 11 | 7.0 | 67.7 | 2.2 | 21.3 | 1.0 | 9.7 | 0.1 | 1.3 | 0.0 | 0.0 | 10.3 | 100 |
| 12 - 15 | 4.4 | 23.9 | 8.4 | 45.9 | 5.0 | 27.1 | 0.5 | 2.7 | 0.1 | 0.4 | 18.4 | 100 |
| 16 - 17 | 3.1 | 18.4 | 7.7 | 45.0 | 4.5 | 26.0 | 1.1 | 6.5 | 0.7 | 4.1 | 17.1 | 100 |

Շաբաթական 43 ժամից ավել աշխատող գյուղաբնակ երեխաների թվաքանակը մոտ կրկնակի անգամ գերազանցել է քաղաքաբնակ երեխաների նույն ցուցանիշին: Սա պայմանավորված է գյուղաբնակ երեխաների զբաղվածության առավել մեծ տարածվածությամբ և նրանց կողմից առավել հաճախ իրականացվող տնտեսական գործունեության բնույթով և առանձնահատկություններով, ինչպես նաև գյուղական բնակավայրերում խաղերի, սպորտի և զվարճությունների համար պայմանների բացակայությամբ:

## 6.5 Աշխատանք փնտրող երեխաներ

Հետազոտության շրջանակում հնարավոր էր պարզել նաև դիտարկվող ժամանակահատվածում աշխատանք չունեցող, սակայն աշխատանք փնտրող և (կամ) աշխատելու ցանկություն ունեցող 10-17 տարեկան երեխաների թվաքանակը՝ գնահատելու երեխայի աշխատանքի պոտենցիալ առաջարկը:

Համաձայն հետազոտության արդյունքների, աշխատանք փնտրող երեխաների թվաքանակը մեծ չէ: Աշխատանք է փնտրել հարցված 10-17 տարեկան երեխաների 0.1%-ը:

**Աղյուսակ 6.5.1** Աշխատանք փնտրող գործազուրկ երեխաներ, հազար երեխա

| | Տղա | | Աղջիկ | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | Փնտրել են | Չեն փնտրել | Փնտրել են | Չեն փնտրել | Փնտրել են | Չեն փնտրել |
| **Ընդամենը** | **0.3** | **206.1** | **0.2** | **194.8** | **0.5** | **400.9** |
| **ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ** | | | | | | |
| 5-11 (10) | 0.1 | 124.7 | 0.1 | 111.6 | 0.2 | 236.4 |
| 12-15 | 0 | 57.4 | 0.1 | 54.7 | 0.1 | 112.1 |
| 16-17 | 0.2 | 24.0 | 0 | 28.5 | 0.2 | 52.5 |

Աշխատանք փնտրող տղա երեխաների մեծ մասը՝ 70.6%-ը եղել են 16-17 տարիքային խմբում, իսկ աշխատանք փնտրող աղջիկ երեխաների շրջանում այս տարիքային խմբում ոչ մի երեխա չի նշել, որ աշխատանք է փնտրում: Փոխարենը, աշխատանք փնտրող աղջիկների 60.9%-ը եղել են 12-15 տարեկանները: Մտահոգիչ է, որ աշխատանք փնտրող երեխաների 33.6%-ը եղել են 10 տարեկանները, ընդ որում աշխատելու ցանկություն են հայտնել և՛ տղաները, և՛ աղջիկները:

10-17 տարեկան երեխաների շրջանում գործազրկության մակարդակը կազմել է 1%, տղաների դեպքում՝ 0.9% և 1.2%՝ աղջիկների:

## Բաժին 7.

# Երեխայի արգելված աշխատանք և վնասակար աշխատանք

## 7.1 Երեխայի արգելված աշխատանք

Սույն բաժնում ներկայացված են հետազոտության արդյունքները երեխայի արգելված աշխատանքի վերաբերյալ, որոնք գնահատվել են ԵԱԱՀ շրջանակում կիրառված մեթոդաբանության համաձայն` ներկայացված սույն զեկույցի **«4.3.2 Երեխայի աշխատանքի գնահատման շրջանակը»** ենթաբաժնում:

**Արգելված է համարվել** երեխայի զբաղվածությունը բոլոր այն աշխատանքներում, որոնք ֆիզիկապես, սոցիալապես կամ բարոյապես համարվում են վնասակար կամ վտանգավոր, հետևաբար` անցանկալի:

Այսպես, հետազոտված 453.4 հազար երեխաներից 401.4 հազարը կամ 88.5%-ը հետազոտությանը նախորդած շաբաթվա ընթացքում չեն աշխատել, իսկ 52.0 հազար երեխա կամ 5-17 տարեկան երեխաների 11.5 %-ն ունեցել է որևէ տեսակի աշխատանք:

**Աղյուսակ 7.1.1** 5-17 տարեկան երեխաներն ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակի

| | ԱՇԽԱՏՈՂ | | ՉԱՇԽԱՏՈՂ | | ԸՆԴԱՄԵՆԸ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենից | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենից | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենից |
| **Ընդամենը** | **52.0** | **11.5** | **401.4** | **88.5** | **453.4** | **100** |
| **ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ** | | | | | | |
| 5-11 | 11.3 | 4.5 | 236.6 | 95.5 | 247.8 | 100 |
| 12-15 | 20.8 | 15.7 | 112.2 | 84.3 | 133.0 | 100 |
| 16-17 | 19.9 | 27.4 | 52.7 | 72.6 | 72.6 | 100 |
| **ՍԵՌ** | | | | | | |
| Տղա | 34.9 | 14.5 | 206.4 | 85.5 | 241.3 | 100 |
| Աղջիկ | 17.1 | 8.0 | 195.0 | 92.0 | 212.1 | 100 |

Առավել հաճախ զբաղված են եղել 16-17 տարեկանները` կազմելով այդ տարիքային խմբի երեխաների 27.4%-ը: Նրանց հաջորդել են 12-15 տարեկան երեխաները` կազմելով այդ տարիքային խմբի հարցվածների 15.7%-ը և ապա` 5-11 տարեկանները` 4.5%:

Մյուս կողմից` աշխատող երեխաների կազմում առավել մեծ մասնաբաժին են ունեցել 12-15 տարեկանները (40.1%), իսկ համեմատաբար փոքր տեսակարար կշիռ` 5-11 տարեկանները (21.7%): Չաշխատող երեխաների կազմում, ընդհակառակը, գերակշռել են 5-11 տարեկանները` կազմելով չաշխատող երեխաների 58.9%-ը:

**Գծապատկեր 7.1.1** Աշխատող և չաշխատող երեխաների տարիքային կազմը




Աշխատող երեխաների կազմում գերակշռել են տղաները՝ կազմելով 67.2%, համապատասխանաբար, 32.8% են կազմել աղջիկները: Չաշխատող երեխաների 52%-ը եղել են տղա, 48%-ը՝ աղջիկ:

**Գծապատկեր 7.1.2** Աշխատող և չաշխատող երեխաների սեռատարիքային կազմը




## 7.2 Երեխայի արգելված աշխատանքի հիմնական բնութագրիչները

Հետազոտության մեթոդաբանության համաձայն.

- յուրաքանչյուր հարցվող երեխա ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակի դասակարգվել է միմյանց բացառող հետևյալ երեք խմբերի՝ **զբաղված՝ արգելված աշխատանքում, զբաղված՝ չարգելված աշխատանքում, չաշխատող**:
- տվյալները բնութագրում են հարցվողների տնտեսական ակտիվության **ընթացիկ** կարգավիճակը՝ հետազոտվող կարճ ժամանակահատվածի (մեկ շաբաթվա) կտրվածքով:

Համաձայն հետազոտության արդյունքների, չեն աշխատել հետազոտված երեխաների 88.5%-ը, 8.7%-ը (39.3 հազար երեխա) ներգրավված է եղել երեխայի արգելված աշխատանքում և 2.8%-ը (12.7 հազար երեխա)՝ երեխայի չարգելված աշխատանքում:

**Գծապատկեր 7.2.1** Երեխաների դասակարգումն ըստ ակտիվության կարգավիճակի և աշխատանքի տեսակի




**Աղյուսակ 7.2.1** Երեխաների դասակարգումն ըստ ակտիվության կարգավիճակի, աշխատանքի տեսակի, սեռատարիքային կազմի և բնակության վայրի

| | Չաշխատող երեխաներ | | Երեխայի չարգելված աշխատանքում ներգրավվածներ | | Երեխայի արգելված աշխատանքում ներգրավվածներ | | Ընդամենը երեխաներ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենից | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենից | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենից | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենից |
| **Ընդամ.** | **401.4** | **88.5** | **12.7** | **2.8** | **39.3** | **8.7** | **453.4** | **100** |
| **ՍԵՌ** | | | | | | | | |
| Տղա | 206.4 | 85.5 | 7.5 | 3.1 | 27.4 | 11.4 | 241.3 | 100 |
| Աղջիկ | 195.0 | 91.9 | 5.2 | 2.4 | 12.0 | 5.7 | 212.1 | 100 |
| **ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ** | | | | | | | | |
| 5-11 | 236.6 | 95.5 | 0 | 0 | 11.3 | 4.6 | 247.8 | 100 |
| 12-15 | 112.2 | 84.4 | 6.8 | 5.1 | 14.0 | 10.5 | 133.0 | 100 |
| 16-17 | 52.7 | 72.6 | 5.8 | 8.0 | 14.1 | 19.4 | 72.6 | 100 |
| **ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ** | | | | | | | | |
| Քաղաք | 241.3 | 97.6 | 1.3 | 0.5 | 4.8 | 1.9 | 247.5 | 100 |
| Գյուղ | 160.1 | 77.7 | 11.3 | 5.5 | 34.5 | 16.8 | 205.9 | 100 |

Արգելված աշխատանքով առավել հաճախ զբաղված են եղել տղաները, քան աղջիկները (5-17 տարեկան հարցված տղաների 11.4%-ը և աղջիկների 5.7%-ը), 16-17 տարեկանները (19.4%), քան 12-15 (10.5%) կամ 5-11 տարեկանները (4.5%): Նմանապես՝ երեխայի արգելված համարվող աշխատանքում առավելապես ներգրավված են եղել գյուղաբնակ երեխաները՝ կազմելով հարցված գյուղաբնակ երեխաների 16.8%-ը՝ քաղաքաբնակ երեխաների 1.9%-ի համեմատ:

**Գծապատկեր 7.2.2** Երեխաների դասակարգումն ըստ ակտիվության կարգավիճակի, աշխատանքի տեսակի, սեռատարիքային կազմի և բնակության վայրի




Աղյուսակ 7.2.1-ի տվյալների վերլուծությունը վկայում է այն մասին, որ աշխատող, սակայն արգելված չհամարվող աշխատանքներում ներգրավված երեխաների 89%-ը եղել են գյուղաբնակ, 59.1% են կազմել տղաները և 53.5%՝ 12-15 տարեկանները: Մյուս կողմից՝ արգելված աշխատանքով զբաղվածների 87.8%-ը բնակվել են գյուղում և 12.2%-ը՝ քաղաքում:

**Table 7.2.2** Երեխայի արգելված աշխատանքում ներգրավված երեխաներն ըստ սեռատարիքային կազմի

| | ԵՐԵԽԱՅԻ ՖԱՐԳԵԼՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՆԵՐ | | |
|---|---|---|---|
| | Թվաքանակ, 1000 երեխա | Ընդամենը աշխատող երեխաների նկատմամբ. % | Ընդամենը երեխաների նկատմամբ. % |
| **Ընդամենը** | **39.3** | **75.6** | **8.7** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | |
| 5-11 | 11.3 | 100 | 4.6 |
| 12-15 | 14.0 | 67.3 | 10.5 |
| 16-17 | 14.1 | 70.8 | 19.4 |
| **ՏՂԱ** | | | |
| **Ընդամենը** | **27.4** | **78.5** | **11.4** |
| 5-11 | 7.1 | 100 | 5.4 |
| 12-15 | 9.2 | 67.6 | 13.0 |
| 16-17 | 11.1 | 78.2 | 29.0 |
| **ԱՂՋԻԿ** | | | |
| **Ընդամենը** | **12.0** | **70.2** | **5.7** |
| 5-11 | 4.1 | 100 | 3.5 |
| 12-15 | 4.9 | 68.1 | 7.9 |
| 16-17 | 3.0 | 52.6 | 8.8 |

Այսպիսով, ընդհանուր առմամբ երեխայի արգելված աշխատանքում ներգրավված է եղել աշխատող երեխաների 75.6%-ը: Այս ցուցանիշն իր մեջ ներառում է 5-11 տարեկան զբաղված երեխաների 100% ընդգրկվածություն, 12-15 տարեկան զբաղվածների 67.3% և 16-17 տարեկան զբաղվածների 70.8% ընդգրկվածություն: **Ըստ այդմ՝ կարելի է եզրակացնել, որ մինչև 18 տարեկան երեխան, սկսելով աշխատել, մեծ հավանականությամբ կկատարի ազգային օրենսդրությամբ և/կամ միջազգային կոնվենցիաներով արգելված աշխատանք:** Ընդ որում, երեխայի արգելված աշխատանքով զբաղվելու հավանականությունը փոքր-ինչ ավելի մեծ է զբաղված տղաների դեպքում, քան աղջիկների (78.5% և 70.2%):

**Գծապատկեր 7.2.3** Երեխայի արգելված աշխատանքում ներգրավված երեխաների մասնաբաժինն ըստ տարիքային խմբերի, %




**Գծապատկեր 7.2.4** Երեխայի արգելված աշխատանքում ներգրավված երեխաներն ըստ սեռատարիքային կազմի, %




Անշուշտ, հետազոտության արդյունքները վերլուծելիս, շատ կարևոր էր պարզել նաև, թե տնտեսական գործունեության ո՞ր ոլորտում և զբաղմունքի ի՞նչ տեսակով են հատկապես զբաղված եղել արգելված համարվող աշխատանքներում ներգրավված երեխաները: Այսպես, երեխաների 90.1%-ի գործունեության ոլորտը եղել է գյուղատնտեսությունը, զբաղմունքը՝ որակավորում չպահանջող գյուղատնտեսական աշխատանքները (88.7%), որոնք առավելապես իրականացվել են առանց վարձատրության՝ որպես օժանդակություն ընտանեկան գյուղացիական տնտեսությունում (70%):

**Գծապատկեր 7.2.5** Երեխայի արգելված աշխատանքում զբաղվածներն ըստ զբաղվածության կարգավիճակի, %




## 7.3 Երեխաների կողմից իրականացված վնասակար աշխատանքներ

Երեխայի արգելված աշխատանքների շրջանակը հստակ պատկերացնելու առումով առանցքային նշանակություն ունի նրա առանձին բաղադրիչների՝ **վնասակար աշխատանքների և վնասակար չհամարվող այլ արգելված աշխատանքների**, տրոհումը և ուսումնասիրությունը (մեթոդաբանությունը՝ տե՛ս սույն զեկույցի «4.3.3 Երեխայի արգելված համարվող աշխատանք» ենթահատվածում):

Ըստ հետազոտության արդյունքների, վնասակար աշխատանքներում ներգրավված երեխաների թվաքանակը գնահատվել է 31.2 հազար, 22.5 հազարը՝ տղա և 8.7 հազարը՝ աղջիկ, կամ՝ վնասակար աշխատանքներով է զբաղվել երեխայի արգելված աշխատանքում ներգրավվածների 79.4%-ը, տղաների 82.1%-ը և աղջիկների 72.5%-ը:

**Աղյուսակ 7.3.1** Երեխայի արգելված աշխատանքում ներգրավվածներն ըստ աշխատանքի տեսակի, սեռատարիքային կազմի և բնակավայրի

| | Վնասակար աշխատանքում ներգրավված երեխաներ | Այլ արգելված աշխատանքում ներգրավված երեխաներ | | Ընդամենը, երեխայի արգելված աշխատանք |
|---|---|---|---|---|
| | | 5-11 տ. | 12-15 տ. | |
| | | Թվաքանակ, 1000 երեխա | | |
| **Ընդամ.** | **31.2** | **6.3** | **1.8** | **39.3** |
| | | ՍԵՌ | | |
| Տղա | 22.5 | 3.7 | 1.1 | 27.3 |
| Աղջիկ | 8.7 | 2.6 | 0.7 | 12.0 |
| | | ԲՆԱԿԱՎԱՅՐ | | |
| Քաղաք | 4.2 | 0.4 | 0.2 | 4.8 |
| Գյուղ | 27.0 | 5.8 | 1.7 | 34.5 |
| | | ԵՐԵԽԱՅԻ ԱՐԳԵԼՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ, % | | |
| **Ընդամ.** | **79.4** | **16.0** | **4.7** | **100** |
| | | ՍԵՌ | | |
| Տղա | 82.4 | 13.6 | 4.0 | 100 |
| Աղջիկ | 72.5 | 21.7 | 5.8 | 100 |

| | Վնասակար աշխատանքում ներգրավված երեխաներ | Այլ արգելված աշխատանքում ներգրավված երեխաներ | | Ընդամենը, երեխայի արգելված աշխատանք |
|---|---|---|---|---|
| | | 5-11 տ. | 12-15 տ. | |
| **ԲՆԱԿԱՎԱՅՐ** | | | | |
| Քաղաք | 87.5 | 8.3 | 4.2 | 100 |
| Գյուղ | 78.3 | 16.8 | 4.9 | 100 |
| **ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ. %** | | | | |
| **Ընդամ.** | **6.9** | **2.5** | **1.4** | **8.7** |
| **ՍԵՌ** | | | | |
| Տղա | 9.3 | 2.8 | 1.6 | 11.4 |
| Աղջիկ | 4.1 | 2.2 | 1.1 | 5.7 |
| **ԲՆԱԿԱՎԱՅՐ** | | | | |
| Քաղաք | 1.7 | 0.3 | 0.3 | 1.9 |
| Գյուղ | 13.1 | 5.5 | 2.8 | 16.8 |

Ըստ բնակության վայրի, վնասակար աշխատանքներում ներգրավված երեխաների գերակշիռ մասը՝ 86.5%-ը բնակվել են գյուղում, ինչը պայմանավորված է, նախ, գյուղական բնակավայրերում աշխատող երեխաների ավելի մեծ թվաքանակով, այնպես էլ նրանց կողմից կատարված աշխատանքների առանձնահատկություններով: Վնասակար աշխատանքներում ներգրավված երեխաների 72.1%-ը եղել են տղա և 27.9%-ը՝ աղջիկ:

**Գծապատկեր 7.3.1** Վնասակար աշխատանքով զբաղվածների մասնաբաժինը երեխայի արգելված աշխատանքում ըստ սեռի և բնակավայրի տեսակի, %



## 7.3.1 Վնասակար աշխատանքներում ներգրավված երեխաները ըստ տնտեսության ոլորտների / գործունեության տեսակների

Գյուղատնտեսությունը, լինելով 5-17 տարեկան երեխաների զբաղվածության հիմնական ոլորտը, ենթադրում է, որ վնասակար պայմաններում աշխատող երեխաների գերակշիռ մասը (տաս երեխայից ինը) իրենց գործունեությունն իրականացրել է հենց այդ ոլորտում, որը, սակայն, **չի համարվում «վնասակար ոլորտ»**՝ համաձայն կիրառված մեթոդաբանության: Չնայած դրան, **վնասակար համարվող** շինարարության ոլորտում զբաղված է եղել վնասակար պայմաններում աշխատող երեխաների 1.3%-ը, որոնց 60.5%-ն այդ աշխատանքն իրականացրել է սեփական տնտեսությունում՝ մասնակցելով իրենց տան կառուցման կամ կապիտալ վերանորոգման աշխատանքներին՝ որպես ընտանիքի առանց վարձատրության աշխատող անդամ: Վնասակար համարվող մյուս՝ հանքարդյունաբերության ոլորտում երեխայի զբաղվածության որևէ դեպք սույն հետազոտության շրջանակում չի հանդիպել:

Հասկանալի է, որ վնասակար աշխատանքով զբաղված երեխաների 86.5%-ը բնակվել են գյուղում և առավելապես զբաղվել են գյուղատնտեսական աշխատանքներով՝ 94.8%: Վնասակար աշխատանք կատարող քաղաքաբնակ հինգ երեխայից երեքը (61.3%) նույնպես զբաղվել են գյուղատնտեսությամբ, ինչը պայմանավորված է Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերում աշխատատեղերի սակավությամբ, հետևաբար՝ բնակչության ոչ բավարար կենսապայմաններով:

Վնասակար աշխատանքներ կատարող երեխաների 72.1%-ը եղել են տղա, որոնց 88.9%-ը զբաղված է եղել գյուղատնտեսության ոլորտում: Նույն ոլորտում զբաղված է եղել աղջիկների 95.4%-ը:

**Աղյուսակ 7.3.2** Վնասակար աշխատանքում զբաղված երեխաներն ըստ գործունեության ոլորտի, սեռի, տարիքային խմբերի և բնակավայրի, հազար երեխա

| | ՎՆԱՍԱԿԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԶԲԱՂՎԱԾՆԵՐ, 1000 ԵՐԵԽԱ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Տղա | Աղջիկ | 5-11 տ. | 12-15 տ. | 16-17 տ. | Քաղաք | Գյուղ | Ընդամենը |
| **Ընդամենը** | **22.5** | **8.7** | **5.0** | **12.2** | **14.1** | **4.2** | **27.0** | **31.2** |
| Գյուղատնտեսություն | 20.0 | 8.3 | 4.7 | 11.4 | 12.2 | 2.6 | 25.6 | 28.2 |
| Արդյունաբերություն | 0.7 | 0.1 | … | 0.1 | 0.7 | 0.3 | 0.5 | 0.8 |
| Շինարարություն | 0.4 | … | … | … | 0.4 | 0.2 | 0.2 | 0.4 |
| Ծառայություններ | 1.6 | 0.2 | 0.2 | 0.7 | 0.9 | 1.1 | 0.7 | 1.8 |
| % OF TOTAL OF EACH CATEGORY | | | | | | | | |
| **Ընդամենը** | **100** | **100** | **100** | **100** | **100** | **100** | **100** | **100** |
| Գյուղատնտեսություն | 88.9 | 95.4 | 94.0 | 93.4 | 86.5 | 61.9 | 94.8 | 90.4 |
| Արդյունաբերություն | 3.1 | 1.1 | … | 0.8 | 5.0 | 7.1 | 1.9 | 2.6 |
| Շինարարություն | 1.8 | … | … | … | 2.8 | 4.8 | 0.7 | 1.3 |
| Ծառայություններ | 7.1 | 2.3 | 4.0 | 5.7 | 6.4 | 26.2 | 2.6 | 5.8 |

Ըստ տարիքային խմբերի, վնասակար աշխատանքներում ներգրավված են եղել հիմնականում 16-17 և 12-15 տարիքային խմբերի երեխաները, համապատասխանաբար՝ 45.2% և 39.1%: Վնասակար աշխատանքներ կատարող 5-11 տարեկան 5 հազար երեխաների 94%-ը զբաղված է եղել գյուղատնտեսության ոլորտում:

## 7.3.2 Աշխատանքի վնասակար պայմաններ և վնասակար աշխատանքի այլ բնութագրիչներ

Հետազոտության արդյունքների համաձայն, **շաբաթական 43 ժամից ավել** աշխատել է 1.2 հազ. երեխա, որից 86.2%-ը եղել են 16-17 և 13.8%-ը՝ 12-15 տարիքային խմբերում: 12-15 տարեկան տարիքային խմբում վնասակար աշխատանքային ժամերը բացառապես վերաբերել են տղաների աշխատանքին, մինչդեռ 16-17 տարեկան խմբում 5.9%-ը կազմել են աղջիկները:

**Վնասակար զբաղմունք** է ունեցել 0.6 հազ. երեխա, որից 88.4%-ը տղաներ, իսկ 77.2%-ը կազմել են 16-17 տարեկան երեխաները: Մտահոգիչ է այն փաստը, որ երեխաների 3.4%-ը կազմել են 5-11 տարեկան տղաները:

**Վնասակար ոլորտում** է աշխատել 12-15 և 16-17 տարիքային խմբերի 0.4 հազ. տղա երեխա, որոնց 89.3%-ը 16-17 տարեկան:

**Աղյուսակ 7.3.3** Երեխաներն ըստ վնասակար աշխատանքի բնութագրիչների[8]

| | ՎՆԱՍԱԿԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՎ ԶԲԱՂՎԱԾՆԵՐԻ %-ԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՍԵՌԻ | | % ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԽՄԲԻ ԸՆԴԱՄԵՆԻՑ | | |
|---|---|---|---|---|---|
| | Տղա | Աղջիկ | Տղա | Աղջիկ | Ընդամենը |
| **Վնասակար աշխատաժամանակ (>=43)** | | | | | |
| **Ընդամենը** | **94.8** | **5.2** | **100** | **100** | **100** |
| 5 - 11 | … | … | … | … | … |
| 12 - 15 | 100 | 0 | 14.6 | 0.0 | 13.8 |
| 16 - 17 | 94.1 | 5.9 | 85.4 | 100 | 86.2 |
| **Վնասակար զբաղմունք** | | | | | |
| **Ընդամենը** | **88.4** | **11.6** | **100** | **100** | **100** |
| 5 - 11 | 100 | 0.0 | 3.8 | 0.0 | 3.4 |
| 12 - 15 | 73.6 | 26.4 | 16.2 | 44.1 | 19.4 |
| 16 - 17 | 91.6 | 8.4 | 80.0 | 55.9 | 77.2 |
| **Վնասակար ոլորտ** | | | | | |
| **Ընդամենը** | **100** | **…** | **100** | **…** | **100** |
| 5 - 11 | … | … | … | … | … |
| 12 - 15 | 100 | … | 10.7 | … | 10.7 |
| 16-17 | 100 | … | 89.3 | … | 89.3 |
| **Վնասակար աշխատանքային պայմաններ** | | | | | |
| **Ընդամենը** | **69.9** | **30.1** | **100** | **100** | **100** |
| 5 - 11 | 72.8 | 27.2 | 18.4 | 15.9 | 17.6 |
| 12 - 15 | 60.6 | 39.4 | 32.1 | 48.3 | 37.0 |
| 16 - 17 | 76.3 | 23.7 | 49.6 | 35.8 | 45.4 |

8 Նույն երեխան կարող էր նշել աշխատանքի վնասակարության մեկից ավելի գործոններ:

| | ՎՆԱՍԱԿԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԶԲԱՂՎԱԾՆԵՐԻ %-ԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՍԵՌԻ | | % ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԽՄԲԻ ԸՆԴԱՄԵՆԻՑ | | |
|---|---|---|---|---|---|
| | Տղա | Աղջիկ | Տղա | Աղջիկ | Ընդամենը |
| **Ծանր բեռների տեղափոխում** | | | | | |
| **Ընդամենը** | **82.9** | **17.1** | **100** | **100** | **100** |
| 5 - 11 | 61.0 | 39.0 | 8.6 | 26.6 | 11.7 |
| 12 - 15 | 79.1 | 20.9 | 36.4 | 46.8 | 38.2 |
| 16 - 17 | 91.0 | 9.0 | 55.0 | 26.5 | 50.1 |

**Գծապատկեր 7.3.2** Երեխաները[9] ըստ վնասակար աշխատանքի բնութագրիչների




Հարկ է նկատի ունենալ, որ **վնասակար աշխատանքային պայմաններում** աշխատելու, **ծանր բեռներ տեղափոխելու** վերաբերյալ ներկայացված տվյալները հիմնված են իրենց կատարած աշխատանքի վնասակարության կամ ծանրության վերաբերյալ **երեխաների սուբյեկտիվ ընկալման** (տե՛ս հավելված 1-ի C38-C43 հարցերը), այլ ոչ թե օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմաների (օրինակ՝ աղմուկի չափ՝ դեցիբելերով և այլն) խախտումների բացահայտման վրա:

**Վնասակար աշխատանքային** պայմաններում աշխատելու վերաբերյալ նշել են 23.5 հազար երեխա, որոնց 17.6%-ը եղել են 5-11 տարիքային խմբում, 30.2%-ը եղել են աղջիկ:

Ծանր բեռներ (15 կգ և ավելի) տեղափոխող երեխաների աշխատանքի վնասակարությունն արտահայտվում է երեխաների օրգանիզմի հենաշարժիչ համակարգի վրա աշխատանքային պայմանների ունեցած բացասական ազդեցությամբ և օրգանիզմի գործունեությունն ապահովող ֆունկցիոնալ համակարգի (սրտանոթային, շնչառական և այլն) ծանրաբեռնվածությամբ:

Ծանր բեռներ տեղափոխելու վերաբերյալ նշել են 17.2 հազար աշխատող երեխա կամ վնասակար համարվող աշխատանքով զբաղված 5-17 տարեկան երեխաների 55.1%-ը, իսկ ծանրություն տեղափոխելը հիմնականում պայմանավորված է եղել բերքահավաքի աշխատանքներով, ինչով առավել հաճախ զբաղվել են գյուղաբնակ երեխաները:

9 Նույն երեխան կարող էր նշել աշխատանքի վնասակարության մեկից ավելի գործոններ:

Ծանր բեռներ տեղափոխել են վնասակար աշխատանքով զբաղված 5-11 տարեկան երեխաների 11.7%-ը, որոնց 39%-ը եղել են աղջիկներ: Բնականաբար, ծանր բեռ տեղափոխած երեխաների 82.9%-ը եղել են տղաներ՝ հիմնականում 16-17 տարեկան (55%):

Վնասակար աշխատանքով զբաղվածների կազմում վնասակար աշխատանքային պայմաններում առավել հաճախ աշխատել են տղաները՝ կազմելով հարցված 5-17 տարեկան տղաների 6.5%-ը, որոնց հաջորդել են ծանր բեռի տեղափոխած տղաները՝ կազմելով ընդամենը տղաների 5.9%-ը:

## Գծապատկեր 7.3.3 Երեխաների բաշխումն ըստ վնասակար աշխատանքի բնութագրիչների և պայմանների, սեռով



### 7.3.3 Երեխայի վնասակար աշխատանքի շաբաթական ժամերը

Ըստ հետազոտության արդյունքների վնասակար աշխատանք կատարող երեխաները շաբաթական աշխատել են միջինը 16.6 ժամ, որից 16-17 տարեկան երեխաները աշխատել են 19.3 ժամ, 12-15 տարեկանները՝ 14.5 ժամ, իսկ 5-11 տարեկանները՝ 12.5 ժամ: Տղաներն ավելի երկար աշխատանքային շաբաթ են ունեցել 12-17 տարիքային խմբերում, իսկ աղջիկները՝ 5-11 տարիքային խմբում:

**Աղյուսակ 7.3.3.1** Վնասակար աշխատանքներում ներգրավված երեխաների բաշխումն ըստ միջին շաբաթական աշխատանքային ժամերի, ժամ

| | Տղա | Աղջիկ | Ընդամենը |
|---|---|---|---|
| **Ընդամենը** | **17.5** | **14.1** | **16.6** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | |
| 5 - 11 | 11.0 | 15.8 | 12.5 |
| 12 - 15 | 15.6 | 12.5 | 14.5 |
| 16 - 17 | 20.2 | 15.8 | 19.3 |
| **ՔԱՂԱՔ** | | | |
| **Ընդամենը** | **19.4** | **14.3** | **18.5** |
| 5 - 11 | 8.7 | 12.3 | 9.1 |
| 12 - 15 | 18 | 9.3 | 15.9 |
| 16 - 17 | 22.1 | 19.3 | 21.6 |
| **ԳՅՈՒՂ** | | | |
| **Ընդամենը** | **17.2** | **14.0** | **16.3** |
| 5 - 11 | 11.4 | 15.9 | 13 |
| 12 - 15 | 15.2 | 12.8 | 14.3 |
| 16 - 17 | 19.8 | 15.3 | 18.8 |

Քաղաքային բնակավայրերում աշխատող երեխաների աշխատանքային շաբաթն ունեցել է ավելի երկար միջին տևողություն ՝ 18.5 ժամ, քան գյուղական բնակավայրերում՝ 16.3 ժամ, ինչը որոշակիորեն վկայում է քաղաքաբնակ զբաղված երեխաների խոցելիության գործոնի առկայության մասին: Ընդ որում, բոլոր կատեգորիաների համեմատությամբ շաբաթվա ընթացքում առավել երկար ժամեր աշխատել են 16-17 տարեկան քաղաքաբնակ տղաները: Էական տարբերություն է գրանցվել 16-17 տարեկան տարիքային խմբի աղջիկ երեխաների մասով: Այս խմբին պատկանող քաղաքաբնակ աղջիկները միջինում 4 ժամ ավել են աշխատում, քան գյուղաբնակ աղջիկները (շաբաթական 19.3 ժամ՝ 15.3 ժամի համեմատ): Սա այն դեպքում, երբ նույն խմբի տղաների մոտ այս ցուցանիշի տարբերությունը կազմել է ընդամենը 2.6 ժամ (շաբաթական 22.1 ժամ՝ 19.8 ժամի համեմատ):

**Գծապատկեր 7.3.3.1** Վնասակար աշխատանքի միջին շաբաթական ժամերն ըստ երեխաների սեռի, տարիքային խմբի և բնակավայրի, ժամ



# Բաժին 8.
# Կրթական բնութագրիչներ

## 8.1 Երկրում իրականացվող կրթական ծրագրերը

«Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն (հոդված 10) երկրում իրականացվող հանրակրթական հիմնական ծրագրերն են.

- Նախադպրոցական,
- Տարրական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ),
- Հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ),
- Միջնակարգ (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ):

Հայաստանում ընդհանուր կրթությունը սկսվում է 6 տարեկանից և իրականացվում է հանրակրթական ուսումնական հաստատություններում (հոդված 15):

Միջնակարգ կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ 12 տարի ընդհանուր տևողությամբ՝ հետևյալ հաջորդական աստիճաններով.

1) տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ),

2) հիմնական դպրոց (5-9-րդ դասարաններ),

3) ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ):

Միջնակարգ հանրակրթական դպրոցի առաջին երկու աստիճանները կազմում են հիմնական դպրոցը: Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է: Հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելու պահանջը պահպանվում է մինչև սովորողի 16 տարին լրանալը, եթե այն չի բավարարվել ավելի վաղ: 16 տարին լրանալուց հետո սովորողը ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ կարող է թողնել դպրոցը (հոդված 18):

## 8.2 Երեխաների ընթացիկ կրթական աստիճանը

Հետազոտության արդյունքներով 5-17 տարեկան 453.4 հազար երեխաների 94.9%-ը (430.4 հազար երեխա) նշել է կրթական ծրագրի որևէ աստիճանում տվյալ պահին ներգրավված լինելու մասին, որից 39.0%-ը՝ հիմնական միջնակարգ կրթությունում, 33.1%-ը՝ տարրական կրթական աստիճանում, 16.2%-ը՝ ավագ / միջնակարգ դպրոցում: Նախադպրոցական կրթական մակարդակը նշել է երեխաների 6.8%-ը, իսկ արհեստագործական կամ միջին մասնագիտական և բուհական կրթությունը, համապատասխանաբար՝ 3.4% և 1.4%-ը:

Աղյուսակ 8.2.1 5-17տ. երեխաներն ըստ սեռի և ընթացիկ կրթական ծրագրի

| | Տղա | | Աղջիկ | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքա-նակ, 1000 երեխա | % | Թվաքա-նակ, 1000 երեխա | % | Թվաքա-նակ, 1000 երեխա | % |
| **Ընդամենը** | **228.7** | **100** | **201.7** | **100** | **430.4** | **100** |
| **ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՍՏԻՃԱՆ** | | | | | | |
| Նախադպրոցական | 14.8 | 6.5 | 14.6 | 7.3 | 29.5 | 6.8 |
| Տարրական դպրոց | 78.1 | 34.2 | 64.5 | 32.0 | 142.6 | 33.1 |
| Հիմնական դպրոց | 89.4 | 39.1 | 78.5 | 38.9 | 167.9 | 39.0 |
| Միջնակարգ / ավագ դպրոց | 35.3 | 15.5 | 34.5 | 17.1 | 69.8 | 16.2 |
| Արհեստագործական, միջին մասնագիտական կրթություն | 8.4 | 3.7 | 6.3 | 3.1 | 14.7 | 3.4 |
| ԲՈՒՀ | 2.7 | 1.2 | 3.2 | 1.6 | 5.9 | 1.4 |

Բացառությամբ բուհական կրթության, որտեղ 54% են կազմել աղջիկները (տղաները՝ 46%), ընթացիկ կրթական ծրագրերի մյուս բոլոր աստիճաններում ավելի մեծ թիվ են կազմել տղաները՝ միջին հաշվով կազմելով 53% (աղջիկները՝ 47%):

Գծապատկեր 8.2.1 Դպրոց / նախադպրոց հաճախելիության մակարդակն ըստ տարիքային խմբերի, %




## 8.2.1 Երեխաների ընթացիկ հաճախելիությունը դպրոց / նախադպրոցական հաստատություն

Ըստ հետազոտության արդյունքների, 5-17 տարեկան երեխաների ընթացիկ հաճախելիությունն ուսումնական հաստատություններ երկրում բավականին բարձր է՝ 94.9%, որից տղաների ընդգրկվածության մակարդակը կազմել է 94.8% և աղջիկներինը՝ 95.1%:

**Աղյուսակ 8.2.2** Ընթացիկ ուսումնական տարում երեխաների դպրոց / նախադպրոց փաստացի հաճախելիությունն ըստ սեռի, տարիքային խմբերի և բնակավայրի

| | Տղա | | Աղջիկ | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենը երեխաներից | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենը երեխաներից | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենը երեխաներից |
| **Ընդամենը** | **228.7** | **94.8** | **201.7** | **95.1** | **430.4** | **94.9** |
| **ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ** | | | | | | |
| 5 - 11 | 125.7 | 95.2 | 107.5 | 92.8 | 233.2 | 94.1 |
| 12 - 15 | 70.1 | 98.7 | 61.6 | 99.4 | 131.7 | 99.0 |
| 16 - 17 | 33.0 | 86.2 | 32.5 | 95.0 | 65.5 | 90.2 |
| **ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ** | | | | | | |
| Քաղաք | 124.7 | 96.5 | 114.9 | 97.2 | 239.6 | 96.8 |
| Գյուղ | 104.0 | 92.8 | 86.8 | 92.5 | 190.8 | 92.7 |

Ընթացիկ ուս. տարում դպրոց/նախադպրոցական ուսումնական հաստատություն չի հաճախել 5-17 տարեկան երեխաների 5%-ը կամ 23 հազար երեխա, որից 55%-ը` տղա և 45%-ը` աղջիկ: Չհաճախողների 64%-ը եղել են 5-11 տարեկան երեխաները և 31%-ը` 16-17 տարեկանները, ինչը պայմանավորված է 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատություն չհաճախելու, իսկ ավագների դեպքում` միջնակարգ կրթությունը չշարունակելու փաստով:

Ընդ որում, եթե 5-15 տարիքային խմբում դպրոց չհաճախողների սեռերի միջև տարբերությունները փոքր են, ապա 16-17 տարիքային խմբում չհաճախող երեխաների 76.1%-ը եղել են տղաները:

**Աղյուսակ 8.2.3** Դպրոց / նախադպրոց ընթացիկ ուսումնական տարում չհաճախող երեխաներն ըստ սեռի, տարիքային խմբերի և բնակավայրի

| | Տղա | | Աղջիկ | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենը երեխաներից | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենը երեխաներից | Թվաքանակ, 1000 երեխա | % ընդամենը երեխաներից |
| **Ընդամենը** | **12.6** | **5.2** | **10.4** | **4.9** | **23.0** | **5.1** |
| **ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ** | | | | | | |
| 5-11 | 6.3 | 4.8 | 8.3 | 7.2 | 14.6 | 5.9 |
| 12-15 | 0.9 | 1.3 | 0.4 | 0.6 | 1.3 | 0.1 |
| 16-17 | 5.4 | 13.8 | 1.7 | 5.0 | 7.1 | 9.8 |
| **AREA OF RESIDENCE** | | | | | | |
| Քաղաք | 4.5 | 3.5 | 3.3 | 2.8 | 7.9 | 3.2 |
| Գյուղ | 8.1 | 7.2 | 7.1 | 7.6 | 15.1 | 7.3 |

### 8.2.2 Դպրոց / նախադպրոց երբևէ չհաճախած երեխաներ

Համածայն հետազոտության արդյունքների, երբևէ դպրոց /նախադպրոց չի հաճախել 13.4 հազար երեխա կամ հարցված երեխաների 3%-ը: Երբևէ դպրոց /նախադպրոց չհաճախած երեխաների 97.7%-ը եղել են 5-6 տարեկան: 12-17 տարիքային խմբում երբևէ դպրոց չհաճախած երեխաների թվաքանակը եղել է վիճակագրորեն չնչին՝ ոչ ներկայացուցչական մեծություն, այնուամենայնիվ, հիմնական պատճառը եղել է երեխայի հաշմանդամությունը (56%) կամ հիվանդությունը (37.3%):

**Գծապատկեր 8.2.2** Երբևէ դպրոց չհաճախած 5 17 տարեկան երեխաների բաշխումն ըստ չհաճախելու պատճառների, սեռի և բնակավայրի %




### 8.2.3 Երեխաների գրագիտությունը

Հետազոտության մեթոդաբանությամբ գրագիտության ցուցանիշի գնահատման համար հիմք է ընդունվել 5-17 տարեկան երեխայի կողմից որևէ լեզվով, ներառյալ՝ մայրենի, գրելու, կարդալու և կարճ պարզ նախադասություններ կազմելու ունակությունը, ըստ որի գրագետ են համարվել 423.2 հազար երեխա կամ հարցված բոլոր երեխաների 93.3%-ը, իսկ ոչ գրագետ՝ 30.2 հազար երեխա կամ հարցված երեխաների 6.7%-ը:

Ոչ գրագետ 30.2 հազար երեխաների 99.7%-ը եղել են 5-11 տարիքային խմբում, որտեղ բացարձակ մեծամասնություն են կազմել 5-6 տարեկանները, որոնց 61.6%-ն ընթացիկ ուսումնական տարում են սկսել հաճախել դպրոց կամ նախադպրոցական հաստատություն:

**Աղյուսակ 8.2.3** Երեխաների բաշխումն ըստ որևէ լեզվով գրելու, կարդալու և պարզ նախադասություններ կազմելու ունակության, սեռի, տարիքային խմբերի, բնակության վայրի

| | ՏՂԱ | | | | ԱՂՋԻԿ | | | | ԸՆԴԱՄԵՆԸ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գրագետ, 1000 երեխա | % | Ոչ գրագետ, 1000 երեխա | % | Գրագետ, 1000 երեխա | % | Ոչ գրագետ, 1000 երեխա | % | Գրագետ, 1000 երեխա | % | Ոչ գրագետ, 1000 երեխա | % |
| **Ընդամ.** | **225.9** | **93.6** | **15.4** | **6.4** | **197.3** | **93.0** | **14.7** | **6.9** | **423.2** | **93.3** | **30.2** | **6.7** |
| **ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ** | | | | | | | | | | | | |
| 5 - 11 | 116.6 | 88.4 | 15.4 | 11.6 | 101.1 | 87.3 | 14.7 | 12.7 | 217.7 | 87.9 | 30.1 | 12.1 |
| 12 - 15 | 70.9 | 99.9 | 0.1 | 0.1 | 62.0 | 100 | 0.0 | 0 | 132.9 | 100 | 0.1 | 0.0 |
| 16 - 17 | 38.3 | 100 | 0 | 0 | 34.2 | 100 | 0 | 0 | 72.6 | 100 | 0 | 0 |
| **ԲՆԱԿՎԱՅՐ** | | | | | | | | | | | | |
| Քաղաք | 121.9 | 94.3 | 7.4 | 5.7 | 111.8 | 94.6 | 6.5 | 5.4 | 233.7 | 94.4 | 13.8 | 5.6 |
| Գյուղ | 104.0 | 92.8 | 8.1 | 7.2 | 85.6 | 91.2 | 8.3 | 8.8 | 189.6 | 92.1 | 16.3 | 7.9 |

Հետազոտության արդյունքների համաձայն գրագիտության ամենաբարձր մակարդակն (95%) արձանագրվել է Գեղարքունիքի, իսկ ամենացածրը՝ Տավուշի մարզում (95%), որտեղ ոչ դպրոցահասակ՝ 5-6 տարեկան, երեխաների մասնաբաժինը եղել է ամենաբարձրը (տվյալ մարզի հետազոտված երեխաների 20.1%-ը):

**Գծապատկեր 8.2.3** 5-17 տարեկան երեխաների գրագիտության մակարդակը, %



## 8.3 Մասնագիտական դասընթացների և ուսուցողական ծրագրերի մասնակցություն

Ըստ հետազոտության արդյունքների, մասնագիտական և ուսուցողական ծրագրերի է մասնակցել 31.9 հազար երեխա, որից 46.7%-ը՝ տղաներ և 53.3%-ը՝ աղջիկներ: Գյուղական համայնքների մեծ մասում վաղուց չեն գործում նման դասընթացների կազմակերպման կենտրոններ և հաճախ գյուղաբնակ երեխաները այցելում են մոտակա քաղաքում գործող այդպիսի հաստատություններ, ուստի և սպասելի է, որ մասնագիտական և ուսուցողական դասընթացների հաճախող երեխաների 78.1%-ը բնակվել է քաղաքում, իսկ 21.9%-ը՝ գյուղում:

**Աղյուսակ 8.3.1** Երեխաների բաշխումն ըստ մասնագիտական դասընթացների և ուսուցողական ծրագրերի մասնակցության

| | Տղա | | Աղջիկ Ընդամենը | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանակ, 1000 երեխա | % | Թվաքանակ, 1000 երեխա | % | Թվաքանակ, 1000 երեխա | % |
| **Ընդամենը** | **145.7** | **100** | **127.5** | **100** | **273.1** | **100** |
| **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՒՄ** | | | | | | |
| Հաճախել է/ներկայումս հաճախում է | 14.9 | 10.2 | 17.0 | 13.3 | 31.9 | 11.7 |
| Չի հաճախել | 130.8 | 89.8 | 110.5 | 86.7 | 241.3 | 88.3 |
| **ՔԱՂԱՔ** | | | | | | |
| **Ընդամենը** | **73.3** | **100** | **70.3** | **100** | **143.6** | **100** |
| Հաճախել է/ներկայումս հաճախում է | 11.3 | 15.5 | 13.5 | 19.3 | 24.9 | 17.3 |
| Չի հաճախել | 62.0 | 84.6 | 56.8 | 80.8 | 118.8 | 82.7 |
| **ԳՅՈՒՂ** | | | | | | |
| **Ընդամենը** | **72.3** | **100** | **57.2** | **100** | **129.5** | **100** |
| Հաճախել է/ներկայումս հաճախում է | 3.5 | 4.9 | 3.5 | 6.1 | 7.0 | 5.4 |
| Չի հաճախել | 68.8 | 95.1 | 53.7 | 93.9 | 122.5 | 94.6 |

**Գծապատկեր 8.3.1** Մասնագիտական դասընթացների և ուսուցողական ծրագրերի մասնակցություն, %



## 8.4 Երեխաների նախադպրոց/դպրոց հաճախելիությունն ըստ աշխատանքային վիճակի

Հետազոտության արդյունքների համաձայն նախադպրոց / դպրոց հաճախելիության բավական բարձր մակարդակ (95%) է գրանցվել հետազոտված 5-17 տարեկան երեխաների շրջանում` նրանց աշխատելու հանգամանքից, սեռից, տարիքից կամ բնակության վայրից անկախ: Ընդ որում, հաճախելիության մակարդակը գրեթե նույնական է եղել տղա և աղջիկ երեխաների շրջանում` աղջիկների փոքր-ինչ գերազանցությամբ (95.1% և 94.8%): Ըստ տարիքի հատկանիշի, հաճախելիության ամենաբարձր մակարդակ (99%) գրանցվել է 12-15 տարեկան երեխաների շրջանում, ինչը լիովին տրամաբանական է: Ավելին` 7-12 տարիքային խմբի երեխաներն ապահովել են կրթության մեջ ընդգրկվածության 100% մակարդակ (տե՛ս գծապատկեր 8.4.1.2-ը), մինչդեռ կրթության մեջ ընդգրկվածության ամենացածր մակարդակը գրանցվել է նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում (5-6 տարեկաններ): Գյուղաբնակ երեխաներն ունեցել են ուսումնական հաստատություն հաճախելիության ավելի ցածր մակարդակ, քան քաղաքաբնակները (92.5% և 97%):

**Աղյուսակ 8.4.1** Նախադպրոց/դպրոց հաճախելիության մակարդակն ըստ երեխաների աշխատանքային վիճակի և սոցիալ ժողովրդագրական բնութագրերի, %

| | Չաշխատող երեխաներ | Աշխատող երեխաներ | Նրանցից | | Արգելված աշխատանքից` վնասակար աշխատանքով զբաղվածներ | Ընդամենը երեխաներ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | չարգելված աշխատանքով զբաղվածներ | արգելված աշխատանքով զբաղվածներ | | |
| **Ընդամենը** | **95.2** | **92.8** | **96.0** | **91.8** | **89.9** | **94.9** |
| **ՍԵՌ** | | | | | | |
| Տղա | 95.5 | 90.4 | 94.8 | 89.2 | 87.2 | 94.8 |
| Աղջիկ | 94.9 | 97.6 | 97.7 | 97.6 | 96.7 | 95.1 |
| **ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ** | | | | | | |
| 5-11 | 93.8 | 99.3 | 0 | 99.3 | 100 | 94.1 |
| 12-15 | 99.0 | 99.3 | 100 | 98.9 | 98.8 | 99.0 |
| 16-17 | 93.3 | 82.3 | 91.3 | 78.5 | 78.5 | 90.3 |
| **ԲՆԱԿԱՎԱՅՐ** | | | | | | |
| Քաղաք | 97.0 | 89.9 | 94.3 | 88.7 | 87.0 | 96.8 |
| Գյուղ | 92.5 | 93.2 | 96.2 | 92.2 | 90.3 | 92.7 |

Ուսումնական հաստատություն հաճախելիության մակարդակը զգալիորեն տարբերվել է` կախված երեխայի աշխատանքային վիճակից: Հետազոտության արդյունքները վկայում են երեխաների դպրոց հաճախելիության մակարդակի և զբաղվածության միջև ակնհայտ փոխադարձ կապի մասին, ընդ որում` հատկապես արտահայտված` երեխայի արգելված և վնասակար համարվող աշխատանքների առումով: Այսպես, չաշխատող երեխաներն ունեցել են դպրոց հաճախելիության ավելի բարձր մակարդակ, քան աշխատող երեխաները (95.2% և 92.8%): Մյուս կողմից` աշխատող երեխաներից, ում աշխատանքը չի համարվել արգելված, ավելի հաճախ են ընդգրկված եղել կրթության մեջ (96%), քան նրանք, ովքեր իրականացրել են արգելված աշխատանք (91.8%):

**Գծապատկեր 8.4.1.1** Նախադպրոց/դպրոց հաճախելիության մակարդակն ըստ երեխայի աշխատանքային վիճակի, %




**Գծապատկեր 8.4.1.2** Նախադպրոց/դպրոց հաճախելիության մակարդակն ըստ երեխայի աշխատանքային վիճակի և տարիքային խմբի, %




Երեխաների զբաղվածության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Գեղարքունիքի մարզում. հետազոտված 5-17 տարեկան երեխաների գրեթե կեսը ներգրավված են եղել աշխատանքային գործունեության մեջ: Ընդ որում, նրանցից **99%-ն աշխատանքը** և **կրթությունը** համատեղել են: Երեխաների զբաղվածության մակարդակի առումով Գեղարքունիքին հաջորդել է Արագածոտնի մարզը՝ 41%, որտեղ աշխատող երեխաների 0.2%-ն ընդգրկված չեն եղել կրթության մեջ:

Հետազոտված 5-17 տարեկան երեխաների 0.8%-ը աշխատել են և չեն հաճախել դպրոց, որոնց 98.4%-ը եղել են 15-17 տարեկան և առնվազն ավարտել են հիմնական դպրոցը: Ուսումը դադարեցնելու հիմնական պատճառը նշել են կրթությամբ հետաքրքրված չլինելը (38%), 22%-ը՝ ուսման հետ կապված ծախսերը հոգալու անհնարինությունը, 14%-ը նշել է որևէ արհեստ սովորելու ցանկության մասին, իսկ 10%-ն ուսումը դադարեցրել է վճարովի աշխատանք ունենալու պատճառով:

**Գծապատկեր 8.4.1.3** 5-17տ. երեխաների Նախադպրոց/դպրոց հաճախելիությունն ըստ աշխատանքային վիճակի և ՀՀ մարզերի



# Բաժին 9.
# Այլ բնութագրիչներ

## 9.1. Տնային տնտեսության սոցիալ տնտեսական բնութագրիչները

Տնային տնտեսության սոցիալ-տնտեսական բնութագրիչները կարևոր դեր ունեն երեխաների կենսամակարդակի, ուսման և աշխատանքի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից, քանի որ վերջիններիս դրական կամ բացասական փոփոխություններն անմիջականորեն արտացոլվում են տնային տնտեսության և, հատկապես, տվյալ տնային տնտեսությունում ապրող երեխայի տնտեսական և կրթական ակտիվության վրա:

Ստորև ներկայացվող ենթաբաժիններում հիմնականում բացահայտվել են այդ պայմանները՝ տնային տնտեսությունում երեխայի աշխատելու կամ չաշխատելու գործոնի հետ փոխադարձ կապով:

### 9.1.1 Կացարանի տեսակ և սեփականության ձև

Համաձայն ԵԱԱՀ արդյունքների, 5-17 տարեկան երեխա ունեցող 289.9 հազար տնային տնտեսությունների 10%-ը կամ 28.9 հազար տնային տնտեսություններ ունեցել են աշխատող երեխաներ:

Հետազոտված երեխաների 41.0%-ն ապրել է բնակարաններում. բնականաբար գերակշռել են քաղաքաբնակները՝ կազմելով 94.5%: Առանձնատներում են ապրել երեխաների 56.2%-ը՝ որում, բնականաբար, գերակշռել են գյուղաբնակները՝ կազմելով 75%: Երեխաների մնացած 2.8%-ը չեն ունեցել բնակության քիչ թե շատ նորմալ պայմաններ՝ բնակվելով հանրակացարանում կամ վագոն-տնակում և այլն: Այս կատեգորիայում գերակշռել են քաղաքային բնակավայրերում ապրող երեխաները՝ կազմելով 63.5%:

**Աղյուսակ 9.1.1** Երեխաների բաշխումն ըստ տնային տնտեսության կացարանի տեսակի և սեփականության ձևի

| | Քաղաք | | Գյուղ | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանակ, 1000 երեխա | % | Թվաքանակ, 1000 երեխա | % | Թվաքանակ, 1000 երեխա | % |
| **Ընդամենը** | **253.7** | **100** | **206.2** | **100** | **459.9** | **100** |
| **ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՑԱՐԱՆԻ ՏԵՍԱԿԸ** | | | | | | |
| Բնակարան | 175.7 | 71.0 | 10.2 | 5.0 | 185.9 | 41.0 |
| Առանձնատուն | 63.7 | 25.7 | 191.2 | 92.9 | 254.9 | 56.2 |
| Բնակելի տան մաս | 0.9 | 0.4 | 1.2 | 0.6 | 2.0 | 0.5 |
| Շարժական տուն | 0.8 | 0.3 | 1.6 | 0.8 | 2.4 | 0.5 |
| Բնակության համար | | | | | | |
| չնախատեսված ապաստան | … | … | 1.6 | 0.8 | 1.6 | 0.4 |
| Հանրակացարան | 4.7 | 1.9 | 0.1 | 0.0 | 4.8 | 1.1 |
| Խրճիթ | 1.7 | 0.7 | 0.0 | 0.0 | 1.7 | 0.4 |

| | Քաղաք | | Գյուղ | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թվաքանակ, 1000 երեխա | % | Թվաքանակ, 1000 երեխա | % | Թվաքանակ, 1000 երեխա | % |
| **ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ** | | | | | | |
| Տնային տնտեսության անդամի սեփականություն | 192.3 | 77.7 | 152.9 | 74.3 | 345.2 | 76.1 |
| Համասեփականատեր | 25.1 | 10.2 | 44.5 | 21.6 | 69.6 | 15.4 |
| Պետություն / համայնք | 3.7 | 1.5 | 0.4 | 0.2 | 4.0 | 0.9 |
| Վարձակալություն՝ փոխհատուցվում է գործատուի կողմից (լրիվ կամ մասնակի) | 2.0 | 0.8 | 0.3 | 0.1 | 2.3 | 0.5 |
| Վարձակալություն | 16.1 | 6.5 | 3.5 | 1.7 | 19.6 | 4.3 |
| Ծնող, բարեկամ և այլն (անվճար) | 8.3 | 3.4 | 4.3 | 2.1 | 12.7 | 2.8 |

76.1% դեպքերում կացարանը եղել է ՏՏ անդամի սեփականությունը, որից 55.7%-ը՝ քաղաքային բնակավայրերում: Վարձակալությամբ բնակվել են երեխաների 4.9%-ը, որոնց գերակշիռ մասը՝ 83%-ը, եղել են քաղաքաբնակ:

**Գծապատկեր 9.1.1** Տնային տնտեսություններն ըստ կացարանի սեփականության ձևի




## 9.1.2 Կացարանային պայմաններն ըստ առկա հարմարությունների

Կենցաղային պայմանների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ խոհանոց առկա է եղել տնային տնտեսությունների 99%-ում, լոգարան՝ 97.8%-ում և զուգարան ունեցել են, բնականաբար, բոլոր ՏՏ-ները: ՏՏ-ների գերակշիռ մասում բոլոր հարմարությունները եղել են կացարանի ներսում՝ միայն տվյալ ՏՏ-ի համար. խոհանոցը՝ ՏՏ-ների 93.2%-ում, լոգարանը՝ 85.5%-ում և զուգարանը՝ 77.4%-ում: Անշուշտ, բոլոր հարմարությունների առումով տարբերություններ են եղել քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև, ինչն օբյեկտիվորեն պայմանավորված է բնակավայրի առանձնահատկություններով: Ընդհանրացնելով, կարելի է փաստել, որ գյուղական բնակավայրերում երեխաների բնակության պայմաններն ըստ առկա հարմարությունների զիջել են քաղաքայինին:

**Աղյուսակ 9.1.2.1** Տնային տնտեսություններն ըստ կացարանի հարմարությունների, երեխաների ակտիվության կարգավիճակի և բնակավայրի, %

| | Քաղաք | | Գյուղ | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| | Աշխատող երեխաներ ունեցող ՏՏ | Աշխատող երեխաներ չունեցող ՏՏ | Աշխատող երեխաներ ունեցող ՏՏ | Աշխատող երեխաներ չունեցող ՏՏ | |
| **ԽՈՀԱՆՈՑ** | | | | | |
| Կացարանի ներսում՝ միայն տվյալ ՏՏ համար | 97.3 | 97.8 | 76.0 | 90 | 93.2 |
| Կացարանի ներսում՝ այլ ՏՏ հետ համատեղ | 0.4 | 0.3 | 0.9 | 0.5 | 0.4 |
| Դրսում՝ միայն տվյալ ՏՏ համար | 1.5 | 1.2 | 20.2 | 8.2 | 5.3 |
| Դրսում՝ այլ ՏՏ հետ համատեղ | 0 | 0.1 | 0.3 | 0.1 | 0.1 |
| Առկա չէ | 0.8 | 0.6 | 2.6 | 1.3 | 1.0 |
| **ԼՈԳԱՐԱՆ** | | | | | |
| Կացարանի ներսում՝ միայն տվյալ ՏՏ համար | 93.3 | 94.7 | 67.7 | 75.3 | 85.5 |
| Կացարանի ներսում՝ այլ ՏՏ հետ համատեղ | 0 | 1.3 | 1.2 | 0.6 | 1.1 |
| Դրսում՝ միայն տվյալ ՏՏ համար | 5.9 | 3 | 26.3 | 19.7 | 10.9 |
| Դրսում՝ այլ ՏՏ հետ համատեղ | 0 | 0.3 | 0.3 | 0.3 | 0.3 |
| Առկա չէ | 0.8 | 0.7 | 4.5 | 4.1 | 2.2 |
| **ՋՈՒԳԱՐԱՆ** | | | | | |
| Կացարանի ներսում՝ միայն տվյալ ՏՏ համար | 80.6 | 94.2 | 43.9 | 58.9 | 77.4 |
| Կացարանի ներսում՝ այլ ՏՏ հետ համատեղ | 0.5 | 1.3 | 0.3 | 0.6 | 1.0 |
| Դրսում՝ միայն տվյալ ՏՏ համար | 18.8 | 4 | 55.3 | 39.4 | 20.9 |
| Դրսում՝ այլ ՏՏ հետ համատեղ | 0 | 0.6 | 0.4 | 1.1 | 0.7 |

Ընդհանուր առմամբ, հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ աշխատող երեխա ունեցող տնային տնտեսություններում կոմունալ հարմարությունները եղել են պակաս բարեկեցիկ, քան այն տնային տնտեսություններում, որտեղ երեխաները չեն աշխատել:

Որպես կերակուրի պատրաստման հիմնական աղբյուր տնային տնտեսություններն առավելապես օգտագործել են գազ (նաև՝ հեղուկ)՝ 90.6%՝ գնի մատչելիությամբ պայմանավորված, ապա՝ էլեկտրականությունը՝ 5%, փայտ՝ 2.9%, չոր աթար՝ 1.3%: Գազի օգտագործման բարձր ցուցանիշ է գրանցել քաղաքային բնակավայրերում:

**Աղյուսակ 9.1.2.2** Տնային տնտեսություններն ըստ էներգիայի հիմնական աղբյուրի, օգտագործման նպատակների և երեխաների ակտիվության կարգավիճակի, %

| | Քաղաք | | Գյուղ | | Ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|
| | Աշխատող երեխաներ ունեցող ՏՏ | Աշխատող երեխաներ չունեցող ՏՏ | Աշխատող երեխաներ ունեցող ՏՏ | Աշխատող երեխաներ չունեցող ՏՏ | |
| **Կերակուրի պատրաստման էներգիայի հիմնական աղբյուր** | | | | | |
| Փայտ | 2.7 | 1.0 | 10.1 | 4.2 | 2.9 |
| Չոր աթար | … | 0.1 | 3.6 | 2.7 | 1.3 |
| Ածուխ | … | … | … | 0.1 | … |
| Կերոսին | … | … | 0.2 | 0.2 | 0.1 |
| Գազ | 83.1 | 93.3 | 83.4 | 88.4 | 90.6 |
| Էլեկտրականություն | 14.2 | 5.5 | 2.7 | 4.4 | 5 |
| Այլ | … | 0.1 | … | … | 0.1 |
| **Ջեռուցման / հովացման հիմնական աղբյուր** | | | | | |
| Փայտ | 41.5 | 15.2 | 44.2 | 60.3 | 33.8 |
| Չոր աթար | 11.7 | 1.1 | 37.7 | 11 | 7.9 |
| Ածուխ | … | … | … | 0.1 | … |
| Կերոսին | … | … | … | 0.1 | … |
| Գազ | 33.4 | 60.8 | 15.3 | 24.6 | 43.9 |
| Էլեկտրականություն | 12.6 | 21.9 | 2.6 | 3.9 | 13.9 |
| Արև | 0.8 | 0.7 | 0 | 0 | 0.4 |
| Այլ | … | 0.3 | 0.2 | 0.1 | 0.2 |
| **Ջեռուցման / հովացման հիմնական աղբյուր** | | | | | |
| Էլեկտրականություն | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| **Խմելու ջրի հիմնական աղբյուր** | | | | | |
| Կենտրոնացված ջրամատակարարում՝ կացարանի ներսում | 97.5 | 97.3 | 82.2 | 82.5 | 90.8 |
| Կենտրոնացված ջրամատակարարում՝ կացարանից դուրս | 1.2 | 2.1 | 13.4 | 11.2 | 6.3 |
| Բերովի | … | … | 2.0 | 2.4 | 1.1 |
| Գնովի ջուր | 1.3 | 0.1 | 0.6 | 0.8 | 0.3 |
| Աղբյուր | … | 0.2 | 0.8 | 1.9 | 0.9 |
| Գետ | … | 0.1 | 0.2 | 0.2 | 0.1 |
| Ջրհոր | … | 0.3 | 0.7 | 0.9 | 0.5 |
| Այլ | … | … | … | 0.1 | … |

Որպես ջեռուցման/հովացման հիմնական աղբյուր տնային տնտեսությունների 43.9%-ի կողմից օգտագործվել է գազը, 33.8%-ի կողմից՝ փայտը, 13.9%՝ էլեկտրականությունը:

Լուսավորության հիմնական աղբյուրը թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակավայրերում բացառապես հանդիսացել է էլեկտրականությունը:

Խմելու ջրի մատակարարման հիմնական աղբյուրը եղել է կենտրոնացված ջրամատակարարումը՝ կացարանի ներսում, որն առկա է եղել ՏՏ-ների 90.8%-ում: Գյուղական բնակավայրերում այս ցուցանիշը զիջել է քաղաքայինին, ինչը լրացվում է գյուղական բնակավայրերում ջրի մատակարարման դրսում առկա խողովակաշարով, սակայն կենտրոնացված կարգով: Գյուղական վայրերում աշխատող երեխա ունեցող տնային տնտեսությունների 1.6%-ը և աշխատող երեխա չունեցող տնային տնտեսությունների 4.5%-ն օգտվել են աղբյուրներից, ինչը հասկանալի է դարձնում 1.7 հազար երեխաների կողմից ՏՏ կարիքների համար կանոնավոր ջուր կրելու/ վառելափայտ հավաքելու անհրաժեշտությունը: Ընդհանուր առմամբ բոլոր ՏՏ-ների 0.3%-ը խմելու ջուրը գնել է, իսկ 0.5%-ն օգտվել է ջրհորից:

## Գծապատկեր 9.1.2.1 ՏՏ-ները ըստ կերակուրի պատրաստման էներգիայի հիմնական աղբյուրի, երեխաների տնտեսական ակտիվության և բնակավայրի, %




Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ, գազը (այդ թվում նաև՝ հեղուկ), լինելով կերակուրի պատրաստման համար անհրաժեշտ էներգիայի հիմնական աղբյուրն ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակավայրերում, ավելի քիչ է օգտագործվել աշխատող, քան չաշխատող երեխա ունեցող տնային տնտեսություններում: Վերը՝ գծապատկերում ներկայացված տվյալները վկայում են այն մասին, որ երեխա ունեցող ՏՏ-ները կերակուրի պատրաստման համար բավականաչափ հաճախ օգտագործել են նաև փայտ և աքար՝ գյուղական բնակավայրերի նկատելի գերակշռությամբ: Այնուամենայնիվ, տվյալների վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ առկա չէ ակնհայտ կապ երեխայի աշխատելու և ՏՏ կողմից փայտ կամ աքար օգտագործելու հաճախականության միջև: Փայտ կամ աքար օգտագործող ՏՏ-ներում բնակվող զբաղված երեխաների միայն 4.7%-ն են ներգրավված եղել վառելափայտ հավաքելու/ ջուր կրելու հետ կապված գործունեության մեջ, որտեղ, համաձայն դաշտային աշխատանքներ իրականացնողների վկայության, երեխաներն ավելի հաճախ կանոնավոր ջուր են կրել, քան վառելափայտ հավաքել:

Փոքր-ինչ այլ պատկեր է արձանագրվել ջեռուցման /հովացման նպատակով ՏՏ-ների կողմից առավել հաճախ օգտագործված էներգիայի հիմնական աղբյուրի առումով: Աշխատող երեխա ունեցող ՏՏ-ներում թե՛ գյուղական, թե՛ քաղաքային բնակավայրերում գերակշռել է փայտի օգտագործումը՝ 44%, որին հետևել է աթարը՝ 34%, ինչն առանձնապես բնորոշ է եղել գյուղաբնակ ՏՏ-ներին: Աշխատող երեխա չունեցող ՏՏ-ներում ջեռուցման հիմնական աղբյուրը եղել է գազը:

Այնուամենայնիվ, տվյալների վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ երկու դեպքում էլ՝ կերակուրի պատրաստման և ջեռուցման նպատակով փայտի կամ աթարի օգտագործման և երեխայի աշխատելու հավանականության միջև առկա չէ ակնհայտ օրինաչափություն: Փայտ կամ աթար օգտագործող ՏՏ-ներում բնակվող զբաղված երեխաների միայն 4.7%-5.1%-ն են ներգրավված եղել վառելափայտ հավաքելու/ ջուր կրելու հետ կապված գործունեության մեջ, որտեղ, համաձայն դաշտային աշխատանքներ իրականացնողների վկայության, երեխաներն ավելի հաճախ կանոնավոր ջուր են կրել, քան վառելափայտ հավաքել: Հակառակը՝ տվյալները վկայում են այն մասին, որ աշխատող երեխա ունեցող ՏՏ-ներն ավելի քիչ են օգտագործել գազ կամ էլեկտրականություն և ավելի հակված են եղել լինելու անապահով, դասվելու ցածր եկամուտներ ունեցողների խմբին, քան աշխատող երեխա չունեցող ՏՏ-ները:

## 9.2. Տնային տնտեսությունների ակտիվներ

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ առաջին անհրաժեշտության կենցաղային նշանակության ապրանքները (հեռուստացույց, արդուկ, սառնարան, լվացքի մեքենա, ջեռոց, գազօջախ և այլն) հիմնականում առկա են եղել տնային տնտեսությունների մեծամասնությունում, անկախ ՏՏ-ում երեխաների աշխատանքային կարգավիճակից: Բջջային հեռախոս ունեցել են գրեթե բոլոր ՏՏ-ները (98%), համակարգիչ՝ գերակշիռ մասը (79%): Ավտոմեքենայի առկայության մասին նշել են ՏՏ-ների 44.3%-ը, մինչդեռ հեծանիվի մասին նշել են ընդամենը 20.7%-ը:

Տրակտորի / ձեռքի էլեկտրական խոտհնձիչի առկայության մասին նշել են գյուղական բնակավայրերի ՏՏ-ների ընդամենը 5.1%-ը: Այս ցուցանիշը մտահոգիչ է այնքանով, որ, գյուղատնտեսությունը, լինելով բնակչության մեկ երրորդի զբաղվածությունն ապահովող հիմնական ոլորտը, ՏՏ-ների 94.9%-ը չունեն տեխնիկայի նշված միջոցը, ինչը ենթադրում է ծանր ֆիզիկական աշխատանք, դրա համեմատ՝ ցածր արտադրողականություն, հետևաբար, նաև՝ ցածր եկամուտներ, ոչ բավարար կենսամակարդակ և երեխայի աշխատանքի օգտագործում:

**Գծապատկեր 9.1.2.2** ՏՏ-ներն ըստ ջեռուցման էներգիայի հիմնական աղբյուրի, երեխաների տնտեսական ակտիվության և բնակավայրի, %




Փոքր-ինչ այլ պատկեր է արձանագրվել ջեռուցման /հովացման նպատակով ՏՏ-ների կողմից առավել հաճախ օգտագործված էներգիայի հիմնական աղբյուրի առումով: Աշխատող երեխա ունեցող ՏՏ-ներում թե՛ գյուղական, թե՛ քաղաքային բնակավայրերում գերակշռել է փայտի օգտագործումը՝ 44%, որին հետևել է աթարը՝ 34%, ինչն առանձնապես բնորոշ է եղել գյուղաբնակ ՏՏ-ներին: Աշխատող երեխա չունեցող ՏՏ-ներում ջեռուցման հիմնական աղբյուրը եղել է գազը:

Այնուամենայնիվ, տվյալների վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ երկու դեպքում էլ՝ կերակուրի պատրաստման և ջեռուցման նպատակով փայտի կամ աթարի օգտագործման և երեխայի աշխատելու հավանականության միջև առկա չէ ակնհայտ օրինաչափություն: Փայտ կամ աթար օգտագործող ՏՏ-ներում բնակվող զբաղված երեխաների միայն 4.7%-5.1%-ն են ներգրավված եղել վառելափայտ հավաքելու/ ջուր կրելու հետ կապված գործունեության մեջ, որտեղ, համաձայն դաշտային աշխատանքներ իրականացնողների վկայության, երեխաներն ավելի հաճախ կանոնավոր ջուր են կրել, քան վառելափայտ հավաքել: Յակառակը՝ տվյալները վկայում են այն մասին, որ աշխատող երեխա ունեցող ՏՏ-ներն ավելի քիչ են օգտագործել գազ կամ էլեկտրականություն և ավելի հակված են եղել լինելու անապահով, դասվելու ցածր եկամուտներ ունեցողների խմբին, քան աշխատող երեխա չունեցող ՏՏ-ները:

## 9.2. Տնային տնտեսությունների ակտիվներ

Յետազոտության արդյունքները ցույց են տվել, որ առաջին անհրաժեշտության կենցաղային նշանակության ապրանքները (հեռուստացույց, արդուկ, սառնարան, լվացքի մեքենա, ջեռոց, գազօջախ և այլն) հիմնականում առկա են եղել տնային տնտեսությունների մեծամասնությունում, անկախ ՏՏ-ում երեխաների աշխատանքային կարգավիճակից: Բջջային հեռախոս ունեցել են գրեթե բոլոր ՏՏ-ները (98%), համակարգիչ՝ գերակշիռ մասը (79%): Ավտոմեքենայի առկայության մասին նշել են ՏՏ-ների 44.3%-ը, մինչդեռ հեծանիվի մասին նշել են ընդամենը 20.7%-ը:

Տրակտորի / ձեռքի էլեկտրական խոտհնձիչի առկայության մասին նշել են գյուղական բնակավայրերի ՏՏ-ների ընդամենը 5.1%-ը: Այս ցուցանիշը մտահոգիչ է այնքանով, որ, գյուղատնտեսությունը, լինելով բնակչության մեկ երրորդի զբաղվածությունն ապահովող հիմնական ոլորտը, ՏՏ-ների 94.9%-ը չունեն տեխնիկայի նշված միջոցը, ինչը ենթադրում է ծանր ֆիզիկական աշխատանք, դրա համեմատ՝ ցածր արտադրողականություն, հետևաբար, նաև՝ ցածր եկամուտներ, ոչ բավարար կենսամակարդակ և երեխայի աշխատանքի օգտագործում:

**Գծապատկեր 9.2.1** ՏՏ-ներն ըստ ՏՏ ակտիվների առկայության և երեխաների տնտեսական ակտիվության %




Գյուղատնտեսական նշանակության կենդանիների առկայությունը կարևոր պայման է հանդիսացել ինչպես տնային տնտեսության կենսապայմանների, այնպես էլ աշխատանքի և եկամուտ ստանալու պոտենցիալ հնարավորությունների բացահայտման առումով: Ինչպես երևում է ստորև ներկայացված գծապատկերից, երեխա ունեցող տնային տնտեսություններում գյուղ. նշանակության կենդանիների առկայությունը գյուղական և քաղաքային բնակավայրերում ունեն հակադարձ համամասնություններ՝ ընտանի կենդանիներ ունեցել է գյուղաբնակ ՏՏ-ների 91.6%-ը և քաղաքաբնակների՝ 17%-ը:

## Գծապատկեր 9.2.2 SS ների ըստ գյուղատնտեսական նշանակության կենդանիների առկայության, երեխաների տնտեսական ակտիվության և բնակավայրի, %




ԵԱԱՀ արդյունքները ցույց են տալիս, որ 87 հազար SS-ներ (կամ 5-17 տ. երեխա ունեցող SS-ների 30%-ը) ունեցել են գյուղ. նշանակության կենդանիներ, որոնց 25%-ն ունեցել են 40 հազարի հասնող աշխատող երեխա: Ուշագրավ է, որ այդ երեխաների 36%-ը կամ հետազոտված 5-17 տ. երեխաների 3.2%-ի զբաղվածությունը կապված է եղել հենց անասնապահության հետ:

## Աղյուսակ 9.2.1 SS բաշխումն ըստ գյուղատնտեսական նշանակության կենդանիների առկայության և դրանց գլխաքանակի

| | Households by thousand | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 0 | 1-10 | 11-20 | 21-30 | 31-40 | 41-50 | 51-60 | 61> |
| Ձի | 81.9 | 5.4 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կով / ցուլ / գոմեշ | 30.5 | 55.0 | 1.3 | 0.4 | 0.1 | 0 | 0 | 0 |
| Ոչխար | 66.2 | 13.3 | 5.7 | 1.5 | 0.3 | 0 | 0.2 | 0 |
| Այծ | 82.9 | 4.4 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Խոզ | 60.7 | 25.8 | 0.8 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ճագար / նապաստակ | 78.2 | 9.0 | 0.2 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Մեղուներ | 80.7 | 5.2 | 0.6 | 0.4 | 0.2 | 0.1 | 0 | 0 |
| Ընտանի թռչուններ | 10.3 | 31.5 | 30.7 | 11.1 | 2.4 | 0.7 | 0.2 | 0.5 |
| Այլ | 87.1 | 0.2 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

## 9.3 Տնային տնտեսության ծախսեր / եկամուտներ և պարտավորություններ

Համաձայն հետազոտության արդյունքների, ՏՏ միջին ծախսերի աճին զուգընթաց նվազում է ՏՏ-ների քանակը՝ թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակավայրերում և անկախ ՏՏ-ներում երեխայի աշխատելու հանգամանքից:

Տնային տնտեսությունների եկամուտների և ծախսերի ուսումնասիրության արդյունքների համաձայն, քաղաքային բնակավայրերում 100 000 դրամից պակաս միջին ամսական ծախսեր են ունեցել աշխատող երեխա ունեցող տնային տնտեսությունների 48.3%-ը և աշխատող երեխա չունեցող տնային տնտեսությունների՝ 25.1%-ը: Գյուղական բնակավայրերի համապատասխան ցուցանիշները կազմել են՝ 36% և 22.8%:

**Աղյուսակ 9.3.1** Տնային տնտեսությունների բաշխումն ըստ միջին ամսական ծախսերի, բնակավայրի և երեխայի տնտեսական ակտիվության վիճակի

| Ծախսերի չափը, դրամ | Քաղաք | | | | Գյուղ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Աշխատող երեխա ունեցող ՏՏ | | Աշխատող երեխա չունեցող ՏՏ | | Աշխատող երեխա ունեցող ՏՏ | | Աշխատող երեխա չունեցող ՏՏ | |
| | Քանակ, 1 000 ՏՏ | % | Քանակ, 1 000 ՏՏ | % | Քանակ, 1 000 ՏՏ | % | Քանակ, 1 000 ՏՏ | % |
| **Ընդամենը** | **3.7** | **100** | **160.1** | **100** | **25.2** | **100** | **100.9** | **100** |
| < 100 000 | 1.8 | 48.3 | 40.2 | 25.1 | 9.1 | 36.0 | 23.0 | 22.8 |
| 101 000 - 150 000 | 0.9 | 23.6 | 38.6 | 24.1 | 5.5 | 21.9 | 25.9 | 25.7 |
| 151 000 - 200 000 | 0.4 | 11.3 | 33.5 | 20.9 | 6.4 | 25.3 | 28.1 | 27.8 |
| 201 000 - 250 000 | 0.3 | 7.1 | 16.2 | 10.1 | 1.7 | 7.0 | 9.9 | 9.8 |
| 251 000 - 300 000 | 0.3 | 8.2 | 12.3 | 7.7 | 1.4 | 5.5 | 6.4 | 6.3 |
| 300 000 > | 0.1 | 1.6 | 12.3 | 7.7 | 0.8 | 3.1 | 5.2 | 5.2 |
| Հրաժարվել են պատասխանել | 0.0 | 0 | 7.0 | 4.4 | 0.3 | 1.3 | 2.4 | 2.4 |

Ստորև բերված գծապատկերում տեսանելի է, որ մինչև 150 հազար դրամ միջին ամսական ծախսեր ունեցող ՏՏ-ների կազմում մեծ տեսակարար կշիռ ունեցել են աշխատող երեխա ունեցող տնային տնտեսությունները, և ճիշտ հակառակը, այդպիսի տնային տնտեսություններն ավելի փոքր մասնաբաժին են ունեցել 250 հազար և ավել միջին ամսական ծախսեր ունեցող ՏՏ-ների դեպքում:

**Գծապատկեր 9.3.2** Տնային տնտեսությունների բաշխումն ըստ միջին ամսական ծախսերի և երեխայի տնտեսական ակտիվության, %




### Եկամուտներ

Տնային տնտեսությունների եկամուտները դիտարկվել են ըստ եկամտի հիմնական աղբյուրի, ինչը նշանակում է, որ եկամտի այլ աղբյուրները անգամ լինելով նշանակալի, չեն հետազոտվել: Այսպես, և՛ քաղաքային, և՛ գյուղական բնակավայրերում տնային տնտեսությունների գերակշիռ մասը (80.1%) իրենց եկամտի հիմնական աղբյուրը նշել են աշխատանքային եկամուտը՝ քաղաքում՝ 78%, գյուղում՝ 82.9%:

Տեսակարար կշռով երկրորդը եղել են մասնավոր փոխանցումները (9.5%) ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում (8.6% և 10.7%)՝ պայմանավորված աշխատանքային միգրացիայի և արտերկրում գտնվող ընտանիքի անդամի/հարազատի փաստով: Այս աղբյուրը հիմնական են համարել չաշխատող երեխա ունեցող ՏՏ-ների 8.8%-ը, մինչդեռ 16% են կազմել այն ՏՏ-երը, ովքեր ունեցել են աշխատող երեխա: Գյուղական բնակավայրերում չաշխատող երեխա ունեցող և աշխատող երեխա

**Աղյուսակ 9.3.2** Տնային տնտեսությունների բաշխումն ըստ եկամտի հիմնական աղբյուրի և բնակության վայրի

| Եկամտի հիմնական աղբյուրը | Քաղաք | | | | Գյուղ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Աշխատող երեխա ունեցող ՏՏ | | Աշխատող երեխա չունեցող ՏՏ | | Աշխատող երեխա ունեցող ՏՏ | | Աշխատող երեխա չունեցող ՏՏ | |
| | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % |
| **Ընդամենը** | **3.7** | **100** | **160.1** | **100** | **25.2** | **100** | **100.9** | **100** |
| Աշխատանք | 3.0 | 81.1 | 124.8 | 77.9 | 19.9 | 79.0 | 84.7 | 83.9 |
| Մասնավոր փոխանցումներ | 0.5 | 12.6 | 13.7 | 8.6 | 4.1 | 16.5 | 9.4 | 9.3 |
| Սոցիալական փոխանցումներ (կենսաթոշակ, նպաստ) | 0.2 | 5.1 | 10.3 | 6.4 | 0.7 | 2.7 | 4.2 | 4.2 |
| Ծնողներ/ընկերներ /հարազատներ/ | 0.0 | 1.2 | 8.1 | 5.1 | 0.4 | 1.5 | 2.2 | 2.1 |
| Այլ | 0.0 | 0 | 3.2 | 1.9 | 0.1 | 0.4 | 0.4 | 0.4 |

ունեցող տնային տնտեսություններից մասնավոր փոխանցումները որպես եկամտի հիմնական աղբյուր նշել են, համապատասխանաբար, 9.3%և 16.5%-ը, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 8.6% և 12.6% -ը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը, թերևս, թույլ է տալիս ենթադրել, որ ընտանիքի աշխատունակ տարիքի անդամի/հարազատի բացակայությունը ՏՏ կողմից մասամբ լրացվել է երեխայի աշխատուժի ներգրավմամբ՝ առավելապես գյուղատնտեսության ոլորտում՝ բերքահավաքի եռուն շրջանում:

## Գծապատկեր 9.3.3 ՏՏ բաշխումն ըստ եկամտի հիմնական աղբյուրի և բնակավայրի, %




Տնային տնտեսությունների 5.3%-ը կամ հետազոտված յուրաքանչյուր 20-րդ ՏՏ-ն եկամտի հիմնական աղբյուրը նշել են սոցիալական փոխանցումները (կենսաթոշակ, ընտանեկան, երեխայի նպաստ և այլն): Եկամտի այս աղբյուրը մոտ երկու անգամ ավելի հաճախ նշել են քաղաքային բնակավայրերի ՏՏ-ները և այն ՏՏ-ները, որոնք չեն ունեցել աշխատող երեխա:

Երեխաներ ունեցող տնային տնտեսությունների ամսական միջին եկամտի ցուցանիշները համահունչ են նրանց ամսական միջին ծախսերի ցուցանիշներին:

Ընդհանուր առմամբ, որ ՏՏ եկամուտների հիմնական աղբյուրի առումով առանձնակի տարբերություն չեն արձանագրվել քաղաքային կամ գյուղական բնակավայրերում:

## Աղյուսակ 9.3.3 ՏՏ ամսական եկամտի միջին չափն ըստ երեխաների ակտիվության կարգավիճակի և բնակության վայրի

| Եկամտի չափը. դրամ | Քաղաք | | | | Գյուղ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Աշխատող երեխա ունեցող ՏՏ | | Աշխատող երեխա չունեցող ՏՏ | | Աշխատող երեխա ունեցող ՏՏ | | Աշխատող երեխա չունեցող ՏՏ | |
| | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % |
| **Ընդամենը** | **3.7** | **100** | **160.1** | **100** | **25.2** | **100** | **100.9** | **100** |
| < 100 000 | 1.2 | 32.2 | 34.5 | 21.5 | 7.4 | 29.4 | 16.8 | 16.7 |
| 101 000 - 150 000 | 0.8 | 21.6 | 33.6 | 21 | 5.1 | 20.2 | 21.6 | 21.4 |
| 151 000 - 200 000 | 0.8 | 22.5 | 36.1 | 22.5 | 6.1 | 24.2 | 27.2 | 27 |
| 201 000 - 250 000 | 0.4 | 9.5 | 18.2 | 11.4 | 2.8 | 11.1 | 13.3 | 13.1 |
| 251 000 - 300 000 | 0.3 | 7.7 | 13.9 | 8.7 | 1.8 | 7.3 | 10.0 | 9.9 |
| 300 000 > | 0.2 | 6.5 | 16.8 | 10.5 | 1.7 | 6.6 | 9.6 | 9.5 |
| Հրաժարվել են պատասխանել | 0 | 0 | 7.0 | 4.4 | 0.3 | 1.3 | 2.4 | 2.4 |

Քաղաքային բնակավայրերում նկատվել է հետևյալ միտումը՝ մինչև 200 հազար դրամ եկամուտ ունեցող տնային տնտեսությունների կազմում գերակշռել են աշխատող երեխա ունեցող ՏՏ-ները, մինչդեռ պատկերը ճիշտ հակառակն է եղել 200 հազար դրամից ավելի միջին ամսական եկամուտ ունեցող տնային տնտեսությունների դեպքում, որտեղ գերակայել են աշխատող երեխա չունեցող տնային տնտեսությունները: Սա հաստատում է այն իրողությունը, որ որքան բարձր է տնային տնտեսության միջին եկամուտը, այնքան նրանք հակված չեն օգտագործելու երեխաների աշխատանքը: Հատկանշական է, որ ՏՏ-ները նույն վարքագիծն են դրսևորվել գյուղական բնակավայրերում, սակայն մի տարբերությամբ՝ այստեղ միտումը փոխվում է եկամուտների ավելի ցածր մակարդակից՝ 101 000 դրամից:

**Գծապատկեր 9.3.4** ՏՏ բաշխումն ըստ միջին ամսական եկամտի, %




## 9.4 Միգրացիան երեխա ունեցող տնային տնտեսություններում

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են նաև մշտական բնակության վայրը փոխած տնային տնտեսությունները, որոնք կազմել են 5-17 տարեկան երեխա ունեցող հետազոտված տնային տնտեսությունների 5%-ը: Բնակության վայրը փոխելու առավել տարածված պատճառներից են եղել աշխատանքը (33%), ընտանեկան / կենցաղային հարցերը (31.6%) և դրան հաջորդել են սոցիալական-քաղաքական խնդիրները ( 27.2%):

Հատկանշական է, որ քաղաքային և գյուղական բնակավայրերում բնակության վայրի փոփոխության պատճառները տարբերվել են: Այսպես, քաղաքաբնակ տնային տնտեսություններն առավել հաճախ բնակավայրը փոխել են աշխատանքի (37.2%) պատճառով, մինչդեռ ընտանեկան / կենցաղային հարցերը (38.6%) եղել են գյուղաբնակ տնային տնտեսությունների բնակավայրը փոխելու հիմնա-

**Աղյուսակ 9.4.1** ՏՏ բաշխումն ըստ բնակության վայրը փոխելու պատճառների

| | ՔԱՂԱՔ | | | | ԳՅՈՒՂ | | | | ԸՆԴԱՄԵՆԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % |
| Ընդամենը | 7.8 | 100 | 6.4 | 100 | 14.2 | 7.8 | 100 | 6.4 | 100 | 14.2 |
| Աշխատավայրի տեղափոխություն | 0.9 | 11.9 | 0.4 | 5.7 | 1.3 | 0.9 | 11.9 | 0.4 | 5.7 | 1.3 |
| Անցնել աշխատանքի | 0.6 | 8.1 | 0.7 | 11.2 | 1.3 | 0.6 | 8.1 | 0.7 | 11.2 | 1.3 |
| Աշխատանք փնտրել | 0.3 | 3.8 | 0.6 | 8.8 | 0.9 | 0.3 | 3.8 | 0.6 | 8.8 | 0.9 |

| | ՔԱՂԱՔ | | | | ԳՅՈՒՂ | | | | ԸՆԴԱՄԵՆԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % |
| Ավելի լավ մշակելի հող գտնել | 0.1 | 1.7 | 0.1 | 1.3 | 0.2 | 0.1 | 1.7 | 0.1 | 1.3 | 0.2 |
| Ուսում / ուսուցում | 0.3 | 4.1 | 0.2 | 2.4 | 0.5 | 0.3 | 4.1 | 0.2 | 2.4 | 0.5 |
| Աշխատավայրին մոտ լինել | 0.9 | 11.8 | 0.0 | 0.7 | 1.0 | 0.9 | 11.8 | 0.0 | 0.7 | 1.0 |
| Ընտանեկան / կենցաղային հարցեր | 2.0 | 25.7 | 2.5 | 38.6 | 4.5 | 2.0 | 25.7 | 2.5 | 38.6 | 4.5 |
| Սոցիալական/ քաղաքական խնդիրներ | 2.1 | 27.4 | 1.7 | 27.1 | 3.9 | 2.1 | 27.4 | 1.7 | 27.1 | 3.9 |
| Առողջական խնդիրներ | 0.2 | 2.1 | 0.2 | 2.4 | 0.3 | 0.2 | 2.1 | 0.2 | 2.4 | 0.3 |
| Այլ | 0.3 | 3.5 | 0.1 | 1.8 | 0.4 | 0.3 | 3.5 | 0.1 | 1.8 | 0.4 |

**Գծապատկեր 9.4.1** ՏՏ բաշխումն ըստ բնակավայրը փոխելու պատճառների և երեխաների ակտիվության կարգավիճակի



Համաձայն հետազոտության արդյունքների 64 հազար երեխաներ կամ հետազոտված 5-17 տարեկան երեխաների 14%-ը բնակվել են միգրացիոն պատմություն ունեցող ՏՏ-ներում: Տաս երեխայից ինը զբաղված է եղել որևէ տնտեսական գործունեությամբ՝ հիմնականում լինելով արական սեռի (61.4%) և գյուղաբնակ (93.5%):

Մշտական բնակության վայրը երբևէ փոխած ՏՏ-ներում երեխաների զբաղվածության մակարդակը եղել է անհամեմատ ցածր մյուս ՏՏ-ներում բնակվող երեխաների համեմատ (1.4% և 10%): Այսպիսով, տվյալները վկայում են, որ երեխայի աշխատանքի և ՏՏ միգրացիոն պատմության միջև ուղղակի կապ առկա չէ (Աղյուսակ 9.4.2):

**Աղյուսակ 9.4.2** 5-17 տարեկան երեխաների ակտիվության մակարդակը և ՏՏ միգրացիոն բնութագրերն ըստ սեռի և բնակավայրի

| | Մշտական բնակության վայրը փոխած ՏՏ-ներ | | | Մշտական բնակության վայրը չփոխած ՏՏ-ներ | | | Ընդամենը ՏՏ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Աշխատող երեխաներ, 1000 | %, 5-17տ. երեխաներից | Չաշխատող երեխաներ, 1000 | Աշխատող երեխաներ, 1000 | %, 5-17տ. երեխաներից | Չաշխատող երեխաներ, 1000 | Աշխատող երեխաներ, 1000 | Չաշխատող երեխաներ, 1000 |
| **Ընդամ.** | **6.5** | **1.4** | **57.3** | **45.4** | **10.0** | **344.1** | **52.0** | **401.4** |
| **ՍԵՌ** | | | | | | | | |
| Տղա | 4.0 | 1.7 | 29.0 | 30.9 | 12.8 | 177.4 | 34.9 | 206.4 |
| Աղջիկ | 2.5 | 1.2 | 28.3 | 14.5 | 6.8 | 166.7 | 17.1 | 195 |
| **ԲՆԱԿԱՎԱՅՐ** | | | | | | | | |
| Քաղաք | 0.4 | 0.2 | 26.1 | 5.7 | 2.3 | 215.2 | 6.1 | 241.3 |
| Գյուղ | 6.1 | 3.0 | 31.1 | 39.7 | 19.3 | 128.9 | 45.8 | 160.1 |

## 9.5 Աշխատանքի պատճառով երեխաների առողջությանը հասցված վնաս, պատահար և հիվանդություն

Աշխատող երեխաների առողջական խնդիրների վերաբերյալ հետազոտությամբ հավաքագրված տվյալները որոշակի պատկերացում են տալիս նրանց կողմից կատարվող աշխատանքի վնասակար գործոնների, պայմանների և միջավայրի մասին:

Համաձայն հետազոտության արդյունքների վերջին 12 ամիսների ընթացքում զբաղված 64.2 հազար երեխաներից 10.5 հազարը կամ 60.4%-ը նշել են, որ հիվանդացել են վերջին մեկ տարվա ընթացքում: Ընդ որում, յուրաքանչյուր տասներորդ երեխան նշել է հաճախ հիվանդանալու մասին, նրանց 90%-ը եղել են գյուղաբնակ:

Անցած 12 ամիսների ընթացքում աշխատանքի պատճառով խնդիրներ ունեցել են 6.2 հազար երեխա՝ նշելով միջին հաշվով ոչ ավել քան 2 տեսակի խնդիր: Խնդիրների թվում առավել հաճախ երեխաները նշել են ծայրահեղ հոգնածությունը (32.3%), ինչն, անշուշտ, կանդրադառնար նրանց առողջության, կրթության որակի, ազատ ժամանցի լիարժեք օգտագործման հնարավորության վրա:

Դեպքերի քանակով հաջորդ հաճախ հանդիպող խնդիրը եղել է մակերեսային վնասվածքը / բաց վերքը (17.1%). 84.2% դեպքերում այդ մասին նշել են տղաները: Մարսողության հետ կապված խնդիրներ են ունեցել երեխաների 14.7%-ը: 8.3% են կազմել մաշկային և վեցական՝ հոդախախտման / քերծվածքի, այրվածքի, ցրտահարության, շնչառական խնդիրների հետ կապված դեպքերը:

**Աղյուսակ 9.5.1** Վերջին 12 ամիսների ընթացքում աշխատանքի պատճառով / հետևանքով աշխատող երեխաների հիվանդացության դեպքերը[10]

| | Ընդամենը | | Տղա | | Աղջիկ | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1000 դեպք | % | 1000 դեպք | % | 1000 դեպք | % |
| **Ընդամենը** | **10.5** | **100** | **8.0** | **100** | **2.5** | **100** |
| Մակերեսային վնասվածք / բաց վերք | 1.9 | 17.1 | 1.6 | 17.7 | 0.4 | 14.7 |
| Կոտրվածքներ | 0.1 | 1.1 | 0.0 | 0.6 | 0.1 | 2.7 |
| Հոդախախտում /քերծվածք | 0.7 | 6.2 | 0.4 | 5.6 | 0.2 | 8.5 |
| Այրվածքներ, ցրտահարություն | 0.6 | 6.0 | 0.5 | 6.7 | 0.1 | 3.6 |
| Շնչառական խնդիր | 0.6 | 6.1 | 0.6 | 7.2 | 0.1 | 2.6 |
| Լսողական խնդիր | 0.1 | 1.0 | 0.1 | 1.4 | 0.0 | 0 |
| Մաշկային խնդիր | 0.9 | 8.3 | 0.7 | 8.3 | 0.2 | 8.4 |
| Մարսողության խնդիր / փորլուծություն | 1.5 | 14.7 | 1.1 | 14.3 | 0.4 | 15.9 |
| Տենդ | 0.6 | 5.4 | 0.4 | 5.3 | 0.1 | 5.6 |
| Ծայրահեղ հոգնածություն | 3.4 | 32.3 | 2.6 | 32.3 | 0.8 | 32.3 |
| Այլ | 0.1 | 1.4 | 0.0 | 0.6 | 0.1 | 3.9 |
| Չեն ցանկացել պատասխանել | 0.0 | 0.4 | 0 | 0 | 0.0 | 1.8 |

Առողջական խնդիրների և դեպքերի բաշխումն ըստ սեռի դիտարկելիս, պարզվում է, որ չնայած տղաների հիվանդացության դեպքերը 3 անգամ ավելի են, այնուհանդերձ, աղջիկներն առավել խոցելի են ու անպաշտպան աշխատանքի վնասակար պայմանների նկատմամբ: Առաջին հայացքից և՛ տղաների, և՛ աղջիկների համար աշխատանքի պայմանների ու վնասակար գործոնների ազդեցության ռիսկը գրեթե նույնական է, այնուհանդերձ առկա են մի քանի լուրջ և անհանգստացնող բացառություններ: Եթե տղաների խմբում հենաշարժիչ համակարգին և վերջույթներին հասցված վնասվածքները կազմել են դեպքերի 6.2%-ը, ապա աղջիկների մոտ այն գրեթե երկու անգամ ավելին է՝ 11.2%:

10 Նույն երեխան կարող էր նշել մեկից ավելի վնասվածք:

## Գծապատկեր 9.5.1 Աշխատող երեխաների հիվանդացության դեպքերն ըստ սեռի




Առողջության վերականգնման նպատակով տնային պայմաններում բուժում է ստացել երեխաների 72.7%-ը. տղաների՝ 74.3%-ը և աղջիկների՝ 68.5%-ը: Առողջապահական կազմակերպություններում մասնագիտական բուժօգնություն է ստացել երեխաների 4%-ը. աղջիկների՝ 11.2%-ը և տղաների ընդամենը 1.2%-ը: Երեխաների 21%-ը բուժօգնություն չի ստացել:

## Աղյուսակ 9.5.2 Զբաղված 5 17 տ. երեխաների բժշկական օգնության /առողջության վերականգնման եղանակը

| | Տղա | | Աղջիկ | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1000 երեխա | % | 1000 երեխա | % | 1000 երեխա | % |
| **Ընդամենը** | **4.3** | **100** | **1.7** | **100** | **6.0** | **100** |
| Բուժվել է տանը | 3.2 | 74.3 | 1.1 | 68.5 | 4.3 | 72.7 |
| Գտնվել է հիվանդանոցում / պոլիկլինիկայում | 0 | 1.2 | 0.2 | 11.5 | 0.2 | 4.0 |
| Ոչ մի բուժօգնություն չի ստացել | 0.9 | 21.3 | 0.3 | 20.0 | 1.2 | 20.9 |
| Այլ | 0.1 | 3.2 | 0 | 0 | 0.1 | 2.3 |

23.6 հազար երեխա աշխատավայրում առնչվել են ֆիզիկական, քիմիական և կենսաբանական վնասակար գործոնների հետ: Առավել հաճախ երեխաներն աշխատել են փոշու/ գոլորշու առկայության պայմաններում (46.5%), յուրաքանչյուր չորրորդ երեխան աշխատանքի ընթացքում օգտագործել է վտանգավոր գործիք (գերանդի, կացին, մետաղ, քար կտրող էլեկտրական գործիքներ, սղոց, էլեկտրական խոտհնձիչ, ուրագ, դանակ, եղան, բահ, փոցխ, մուրճ, մկրատ և այլն):

Ծայրահեղ ցուրտ կամ շոգ պայմաններում աշխատելու մասին նշել է տաս երեխայից մեկը:

**Աղյուսակ 9.5.3** Վնասակար աշխատանքներով զբաղված 5 17 տ. երեխաների բաշխումն ըստ վնասակար աշխատանքային պայմանների և սեռի

| | ՏՂԱ | | ԱՂՋԻԿ | | ԸՆԴԱՄԵՆԸ | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 000 երեխա | % | 1 000 երեխա | % | 1 000 երեխա | % |
| **Ընդամենը** | **16.5** | **100** | **7.1** | **100** | **23.6** | **100** |
| Փոշի, գոլորշի | 7.0 | 42.5 | 4.0 | 56.0 | 11.0 | 46.5 |
| Կրակ, գազ | 0.1 | 0.4 | 0.4 | 5.7 | 0.5 | 2.0 |
| Բարձր ձայն կամ միգրացիա | 0.3 | 1.7 | 0.1 | 2.1 | 0.4 | 1.8 |
| Ծայրահեղ ցուրտ կամ շոգ | 1.6 | 10.0 | 0.9 | 12.4 | 2.5 | 10.7 |
| Վտանգավոր գործիքներ (սղոց, կացին, գերանդի, դանակ և այլն) | 5.0 | 30.1 | 0.7 | 10.2 | 5.7 | 24.1 |
| Աշխատանք բարձրության վրա | 1.2 | 7.6 | 0.7 | 9.6 | 1.9 | 8.2 |
| Աշխատանք ջրում / լճում / գետում | 0.1 | 0.8 | 0.0 | 0.0 | 0.1 | 0.5 |
| Չափազանց մութ, ճնշող աշխատավայր | 0.1 | 0.4 | 0.0 | 0.0 | 0.1 | 0.3 |
| Ոչ բավարար օդափոխություն | 0.5 | 2.8 | 0.1 | 1.4 | 0.6 | 2.4 |
| Քիմիկատներ | 0.6 | 3.8 | 0.2 | 2.5 | 0.8 | 3.4 |

Ընդհանրացնելով սույն բաժնում ներկայացված տվյալները, կարելի է փաստել, որ երեխաների ունեցած առողջական խնդիրները հիմնականում պայմանավորված են եղել ոչ նպաստավոր պայմաններում կատարած աշխատանքի հետ:

Հետազոտության տվյալները թույլ են տալիս գնահատել, թե որքանով է հիվանդությունը կամ վնասվածքն ազդել երեխայի աշխատունակության և ուսումնական հաստատություն հաճախելու վրա: Հիվանդության կամ վնասվածքի պատճառով տղաների 88%-ը և աղջիկների 99%-ը այն չի համարել լուրջ խոչընդոտ և չի դադարեցրել աշխատանքը կամ ուսումը: Թեև տղաների 95%-ը բուժօգնություն ստացել է տանը կամ ընդհանրապես չի ստացել, այնուհանդերձ նրանց 4.5%-ը ժամանակավորապես դադարեցրել է ուսումը, 6.3%-ը՝ աշխատանքը, իսկ 1.2%-ը՝ և՛ ուսումը, և՛ աշխատանքը:

Աղջիկների միայն 1%-ն է ժամանակավորապես դադարեցրել ուսումը, չնայած նրանց 11.5%-ը բուժօգնություն ստացել է հիվանդանոցում կամ պոլիկլինիկայում: Այս հակասության բացատրությունը կարող է լինել ոչ ստացիոնար պայմաններում բուժօգնություն ստանալու իրողությունը:

**Աղյուսակ 9.5.4** Երեխաների հիվանդության / վնասվածքի ազդեցությունը աշխատանքի / ուսման վրա

| | Տղա | | Աղջիկ | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 000 երեխա | % | 1 000 երեխա | % | 1 000 երեխա | % |
| **Ընդամենը** | **4.3** | **100** | **1.7** | **100** | **6.0** | **100** |
| Չեն դադարեցրել աշխատանքը և ուսումը | 3.8 | 88.1 | 1.6 | 99.0 | 5.4 | 91.1 |
| Դադարեցրել են ուսումը կարճ ժամանակով | 0.2 | 4.5 | 0.0 | 1.0 | 0.2 | 3.5 |
| Դադարեցրել են աշխատանքը կարճ ժամանակով | 0.3 | 6.3 | 0.0 | 0.0 | 0.3 | 4.5 |
| Դադարեցրել են և՛ աշխատանքը, և՛ ուսումը կարճ ժամանակով | 0.1 | 1.2 | 0.0 | 0.0 | 0.1 | 0.9 |

# Բաժին 10.

# Երեխայի աշխատանքի (ուսման) որոշիչ գործոնները

Սույն բաժինը ներկայացնում է երեխայի աշխատանքի հետ կապված մի շարք գործոններ, որոնք որոշակի ազդեցություն են ունենում երեխայի աշխատանքի վրա: Այդպիսի գործոնները բազմաթիվ են, իսկ դրանց շարքում հատկապես ուշադրության են արժանի տնային տնտեսության առջև ծառացած սոցիալական և տնտեսական խնդիրները: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են տնային տնտեսության ունեցած դժվարությունները, դրանց հաղթահարման ուղիները և հնարավոր ազդեցությունը երեխայի աշխատանքի և / կամ ուսման վրա:

## 10.1 Տնային տնտեսության առջև ծառացած խնդիրները

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են այն խնդիրները, բարդությունները կամ դժվարին իրավիճակները, որոնց բախվել է երեխա ունեցող տնային տնտեսությունը:

Տնային տնտեսությունների 80.2%-ը որպես լուրջ խնդիր նշել է գնաճը, ընդ որում գնաճի ազդեցությունն ավելի զգալի է եղել քաղաքային բնակավայրերի աշխատող երեխա ունեցող տնային տնտեսությունների համար՝ 82.8% և աշխատող երեխա չունեցող տնային տնտեսությունների համար՝ 93.7%, քան գյուղական բնակավայրերում, համապատասխանաբար՝ 54.9% և 54.8%: Տնային տնտեսությունների 9.7%ը նշել են գյուղատնտեսական արտադրանքի գների նվազումը, 5.5%ը՝ բնական աղետները և գյուղատնտեսական ապրանքների գների անկումը: Այս գործոններն անմիջականորեն ազդել են տնային տնտեսությունների կենսամակարդակի և եկամուտների վրա, որն էլ պատճառ է հանդիսացել փոխառությունների և պարտքերի առաջացման համար:

**Աղյուսակ 10.1.1** Վերջին 12 ամիսների ընթացքում երկրի/համայնքի մակարդակով բացասական ազդեցության ենթարկված ՏՏ ներն ըստ երեխայի տնտեսական ակտիվության կարգավիճակի

| | Աշխատող երեխա ունեցող ՏՏ | | Աշխատող երեխա չունեցող ՏՏ | | Ընդամենը բացասական ազդեցության ենթարկված ՏՏ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % |
| **Բնական աղետ** | **5.2** | **100** | **87.8** | **100** | **93.0** | **100** |
| Համաճարակ | 0.3 | 5.8 | 4.8 | 5.5 | 5.1 | 5.5 |
| Տնտեսական ճգնաժամի հետևանքով բիզնեսի փակում | ... | ... | 0.4 | 0.5 | 0.5 | 0.5 |
| Գյուղ. արտադրանքի գների անկում | 1.5 | 28.8 | 7.6 | 8.7 | 9.0 | 9.7 |
| Գնաճ | 3.0 | 57.7 | 71.6 | 81.4 | 74.6 | 80.2 |
| Հանրային բողոքի ակցիա | 0.0 | 0.0 | 1.8 | 2.1 | 1.8 | 2.0 |
| Այլ | 0.4 | 7.7 | 1.7 | 1.9 | 2.0 | 2.1 |

**Գծապատկեր 10.1.1** ՏՏ բախումն ըստ վերջին 12 ամիսների ընթացքում խնդիրների տեսակի, %




Ինչպես ներկայացված է ստորև՝ գծապատկերում, հետազոտության արդյունքները չեն վկայում վերջին 12 ամիսների ընթացքում ՏՏ ունեցած խնդիրների և երեխայի աշխատանքի միջև ուղղակի փոխազդեցության մասին: Հակառակը, նման խնդիրներ չնշած ՏՏ-ներում 5-17տ. երեխաների զբաղվածության մակարդակն փոքր-ինչ բարձր է եղել խնդիրներ նշվածների համեմատ (6.4% և 5.1%):

**Գծապատկեր 10.1.2** 5-17տ. երեխաների զբաղվածության մակարդակն ըստ ՏՏ-ների դասակարգման




Հետազոտության արդյունքների համաձայն, երեխա ունեցող ՏՏ-ների կողմից նշված խնդիրներից է եղել վերջին 12 ամիսների ընթացքում եկամուտների նվազումը, որտեղ հատկապես մեծ մասնաբաժին են ունեցել բերքի կամ գյուղատնտեսական կենդանիների կորուստը՝ 29%, աշխատատեղի կորուստը՝ 16% և ՏՏ աշխատող անդամի հիվանդությունը/լուրջ պատահարը՝ 13.7%:

**Աղյուսակ 10.1.2** Վերջին 12 ամիսների ընթացքում եկամտի նվազում ունեցած ՏՏ-ների բաշխումն ըստ երեխայի տնտեսական ակտիվության կարգավիճակի

| | Աշխատող երեխա ունեցող ՏՏ | | Աշխատող երեխա չունեցող ՏՏ | | Ընդամենը եկամտի նվազում ունեցած ՏՏ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % |
| **Ընդամենը** | **6.9** | **100** | **62.7** | **100** | **69.6** | **100** |
| ՏՏ անդամի աշխատանքի / աշխատատեղի կորուստ | 0.3 | 3.7 | 11.0 | 17.5 | 11.2 | 16.1 |
| Ընտանեկան բիզնեսի սնանկացում / լուծարում | 0.0 | 0.6 | 2.7 | 4.3 | 2.7 | 3.9 |
| ՏՏ աշխատող անդամի հիվանդություն / լուրջ պատահար | 0.3 | 4.2 | 9.2 | 14.7 | 9.5 | 13.7 |
| ՏՏ աշխատող անդամի մահ | 0.3 | 3.7 | 1.8 | 2.9 | 2.1 | 3.0 |
| ՏՏ աշխատող անդամի հեռանալը | 0.0 | 0.7 | 2.1 | 3.4 | 2.3 | 3.2 |
| Հրդեհ տանը / բիզնեսում / սեփականությունում | 0.0 | 0.0 | 0.1 | 0.2 | 0.1 | 0.1 |
| Տարածքային վեճ | 0.0 | 0.0 | 0.1 | 0.2 | 0.1 | 0.2 |
| Դրամական օգնության դադարեցում | 0.5 | 6.6 | 5.1 | 8.1 | 5.5 | 7.9 |
| Ընտանեկան բիզնեսում արտադրվող ապրանքի գների նվազում | 1.6 | 22.5 | 9.6 | 15.3 | 11.1 | 16.0 |
| Բերքի կորուստ | 1.8 | 26.6 | 10.0 | 15.9 | 11.8 | 16.9 |
| Գյուղատնտեսական կենդանու կորուստ | 1.9 | 28.0 | 6.5 | 10.4 | 8.5 | 12.1 |
| Այլ | 0.2 | 3.5 | 4.5 | 7.2 | 4.8 | 6.8 |

**Գծապատկեր 10.1.3** 5-17 տ. երեխա ունեցող ՏՏ-ներում խնդիրների առաջացման պատճառներն ըստ բնակավայրի տեսակի



Գյուղական բնակավայրերի տնային տնտեսություններում առավել հաճախ հանդիպող խնդիրներից են ընտանեկան բիզնեսում արտադրվող ապրանքի գների նվազումը՝ 30.2 %, բերքի կորուստը՝ 26.9%, ընտանի կենդանիների կորուստը՝ 15.7 % և տնային տնտեսության աշխատող անդամի հիվանդությունը կամ լուրջ պատահարը՝ 7.7%:

Առաջացած խնդիրների հաղթահարման նպատակով տնային տնտեսությունները դիմել են ֆինանսական աջակցության տարբեր աղբյուրների օգնությանը: Դժվարության հանդիպած յուրաքանչյուր երկրորդ տնային տնտեսություն կրճատել է ծախսերը, ներառյալ երեխայի ուսման հետ կապված ծախսերը:

Երկրորդ առավել տարածված միջոցը վարկային, պարտքային կամ փոխառության որևէ այլ տեսակի դիմելն է, որից օգտվել են և՛ քաղաքային, և՛ գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունները: Քաղաքային բնակավայրերի տնային տնտեսություններն առավել հակված են եղել վարկ/պարտք կամ փոխառություն վերցնելուն, քան գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունները, որտեղ այդ ցուցանիշը աշխատող երեխա ունեցող տնային տնտեսությունների համար կազմել է 20.3% և աշխատող երեխա չունեցող տնային տնտեսությունների համար՝ 16.8%: Քիչ չեն նաև այն տնային տնտեսությունները, որոնք վաճառել են սեփական գույքը կամ սկսել են օգտագործել խնայողությունները:

**Գծապատկեր 10.1.4** 5-17 տ. երեխաների զբաղվածության մակարդակն ըստ ՏՏ-ների դասակարգման




Ինչպես վերջին 12 ամիսների ընթացքում երկրի / համայնքի մակարդակով ծագած խնդիրների հետ առնչված, այնպես էլ եկամտի անկում ունեցած ՏՏ-ների դեպքում վերը ներկայացված տվյալները չեն արձանագրում ուղղակի փոխազդեցություն երեխաների զբաղվածության մակարդակի և ՏՏ եկամտի նվազման հետ կապված խնդիրների միջև: Հակառակը, 5-17 տարեկան երեխաների զբաղվածության մակարդակը 2.7 անգամ ավելի բարձր է եղել այն ՏՏ-ներում, որոնք նման խնդրի չեն բախվել (8.3% և 3.1%):

**Աղյուսակ 10.1.3** ՏՏ-ների բաշխումն ըստ խնդիրները հաղթահարելու միջոցների, երեխայի տնտեսական ակտիվության կարգավիճակի

| | Աշխատող երեխա ունեցող ՏՏ | | Աշխատող երեխա չունեցող ՏՏ | | Խնդիրները հաղթահարած ՏՏ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % |
| **Ընդամենը** | **6.9** | **100** | **62.7** | **100** | **69.6** | **100** |
| Ֆինանսական աջակցություն պետական մարմինների կողմից | 0.1 | 1.4 | 1.9 | 2.1 | 2.0 | 2.0 |
| Ֆինանսական աջակցություն հասարակական /կրոնական / համայնքում գործող կազմակերպությունների կողմից | 0.0 | 0.0 | 0.3 | 0.3 | 0.3 | 0.3 |
| Ֆինանսական աջակցություն հարազատների / ընկերների կողմից | 1.0 | 10.2 | 8.8 | 9.7 | 9.8 | 9.7 |
| Երեխա(ներ)ը դադարեցրել են ուսումը՝ ուսումնական ծախսերը հոգալ չկարողանալու պատճառով | 0.1 | 1.1 | 0.3 | 0.3 | 0.4 | 0.4 |
| Երեխաներն աշխատել են լրացուցիչ աշխատաժամեր | 0.3 | 3.1 | 0 | 0 | 0.3 | 0.3 |
| ՏՏ չափահաս անդամներն աշխատել են լրացուցիչ աշխատաժամեր | 0.5 | 5.1 | 3.5 | 3.9 | 4.0 | 4.0 |
| Վաճառվել է սեփականությունը / օգտագործվել են խնայողությունները | 0.6 | 5.9 | 7.6 | 8.4 | 8.2 | 8.2 |
| Կրճատվել են ՏՏ ծախսերը | 4.4 | 44.2 | 44.0 | 48.7 | 48.4 | 48.3 |
| Էական ազդեցություն չի ունեցել | 0.7 | 7.2 | 4.6 | 5.1 | 5.3 | 5.3 |
| Վարկ / պարտք /գրավ | 2.1 | 20.6 | 19.2 | 21.2 | 21.3 | 21.2 |
| Այլ | 0.1 | 1.2 | 0.2 | 0.2 | 0.3 | 0.3 |

Վերջին 12 ամիսների ընթացքում վերը նշված խնդիրների հաղթահարման հիմնական միջոցների առումով էական տարբերություններ չեն արձանագրվել աշխատող կամ չաշխատող երեխա ունեցող ՏՏ-ներում: ՏՏ-ների մեծամասնությունը կրճատել են ծախսերը. աշխատող երեխա ունեցող ՏՏ-ների դեպքում այդ ցուցանիշը կազմել 48.3%, իսկ յուրաքանչյուր հինգերորդ նման ՏՏ-ը ծագած խնդիրը հաղթահարել է վարկի, պարտքի ձեռքբերմամբ կամ գրավի միջոցով (21.2%). Այնուամենայնիվ, աշխատող երեխա ունեցող ՏՏ-ների 3.1%-ում խնդիրները հաղթահարվել են երեխաների աշխատաժամանակի երկարացման միջոցով, իսկ տաս ՏՏ-ից մեկում երեխա(ներ)ը դադարեցրել են ուսումը՝ ուսումնական ծախսերը հոգալ չկարողանալու պատճառով:

## 10.2 Տնային տնտեսությունների վարկեր

Հետազոտության արդյունքների համաձայն 121.3 հազար ՏՏ-ներ (կամ 5-17տ. երեխա ունեցող ՏՏ-ների 42%-ը) վերջին 12 ամիսների ընթացքում վերցրել են վարկ / պարտք, որոնցից 8 հազարն ունեցել են աշխատող երեխաներ: Վարկ/պարտք վերցնելու պատճառները տարբեր են եղել, որոնց վերաբերյալ հետազոտության արդյունքները ներկայացված են ստորև բերվող աղյուսակում:

**Աղյուսակ 10.2.1** ՏՏ-ների բաշխումն ըստ վարկեր վերցնելու պատճառների, երեխաների տնտեսական ակտիվության և բնակավայրի

| | Աշխատող երեխա ունեցող ՏՏ | | Աշխատող երեխա չունեցող ՏՏ | | Ընդամենը վարկ / պարտք վերցրած ՏՏ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % |
| **Ընդամենը** | **8.0** | **100** | **113.2** | **100** | **121.3** | **100** |
| Հոգալ ՏՏ կենսական կարիքները (գնել սնունդ, հագուստ և այլն) | 2.8 | 34.3 | 50.3 | 44.5 | 53.1 | 43.8 |
| Վճարել երեխաների կրթության համար | 0.5 | 6.4 | 6.8 | 6.0 | 7.3 | 6.1 |
| ՏՏ անդամի համար գնել հեծանիվ / մոտոցիկլետ / մեքենա | 0.1 | 1.3 | 4.2 | 3.7 | 4.3 | 3.5 |
| Տուն գնել / վերակառուցել / վերանորոգել / կառուցել | 1.4 | 16.8 | 12.5 | 11.0 | 13.8 | 11.4 |
| Վճարել բուժման հետ կապված ծախսերը | 0.8 | 9.4 | 12.6 | 11.1 | 13.4 | 11.0 |
| Վճարել ընտանեկան արարողությունների հետ կապված ծախսերը | 0.6 | 8.0 | 2.8 | 2.5 | 3.4 | 2.8 |
| Բիզնես / սեփական գործ, սկսել / ընդլայնել բիզնեսը | 1.3 | 16.3 | 12.2 | 10.7 | 13.5 | 11.1 |
| Վճարել նախկին վարկը | 0.4 | 4.3 | 7.1 | 6.3 | 7.5 | 6.2 |
| Ձեռք բերել տնային ապրանքներ | 0.1 | 1.8 | 3.2 | 2.8 | 3.3 | 2.7 |
| Այլ | 0.1 | 1.4 | 1.6 | 1.4 | 1.7 | 1.4 |

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, տնային տնտեսությունների մեծ մասը վարկ են վերցրել ընտանիքի կարիքները հոգալու համար, ինչին հետևել են տուն գնելը կամ վերակառուցելը, բիզնես կամ սեփական գործ սկսելը / ընդլայնելը և այնուհետև՝ ՏՏ անդամի բուժման ծախսերը վճարելը: Ակնհայտ է, որ վերցված վարկերի մեծ մասն ուղղակի կապ ունեն տնային տնտեսության ցածր կենսամակարդակի հետ, հետևաբար նաև, նման տնային տնտեսություններում ապրող երեխաների հետ: Ուշագրավ է այն, որ ՏՏ-ների 6.2%-ը ստիպված են եղել վարկ /պարտք վերցնել իրենց նախկին վարկերը վճարելու համար:

Հետազոտության արդյունքները չեն բացահայտել վարկ / պարտք վերցնելու մի այնպիսի պատճառ, որն առանձնապես բնորոշ է եղել աշխատող երեխա ունեցող ՏՏ-ներին: Վարկ վերցնելու պատճառների հաճախականությունը գրեթե նույնական է եղել աշխատող և չաշխատող երեխա ունեցող ՏՏ-ներում:

**Գծապատկեր 10.2.1** ՏՏ-ների բաշխումն ըստ վերցված վարկերի նպատակների, երեխաների տնտեսական ակտիվության կարգավիճակի և բնակավայրի, %




Հետազոտության արդյունքները վկայում են, որ աշխատող երեխա ունեցող ՏՏ-ներն ավելի քիչ են դիմել վարկ կամ պարտք վերցնելուն, քան աշխատող երեխա չունեցող ՏՏ-ները, ինչն ամենևին չի ենթադրում, որ աշխատող երեխա ունեցող տնային տնտեսություններն ավելի ապահովված են: Խնդիրը նրանում է, որ դրանք ավելի հաճախ ցածր եկամուտ ունեցող ՏՏ-ներն են, որոնք վարկ վերցնելու համար անհրաժեշտ գրավադրումը չեն կարող ապահովել կամ վարկի տոկոսադրույքները մարելու երաշխիքները չունեն, հետևաբար խուսափում են դիմել վարկ տրամադրող կազմակերպություններին: Վարկ վերցրած երեխա ունեցող տնային տնտեսությունների կեսից ավելին եղել են քաղաքաբնակ: Ակնհայտ է, որ ֆինանսական փոխառություններն առավել հասանելի են քաղաքային բնակավայրերի տնային տնտեսություններին:

**Գծապատկեր 10.2.2** 5-17 տ. երեխաների զբաղվածության մակարդակն ըստ ՏՏ-ների դասակարգման



10.2.2 գծապատկերը թույլ է տալիս 5-17 տարեկան երեխաների զբաղվածության մակարդակը համեմատել վերջին 12 ամիսների ընթացքում վարկ / պարտք վերցրած և չվերցրած ՏՏ-ներում: Զբաղվածության մակարդակը կրկնակի անգամ ցածր է եղել վարկ / պարտք վերցրած, քան նման խնդիր չնշած ՏՏ-ներում բնակվող երեխաների շրջանում (3.7% կամ 7.7%), ինչը սակայն չի ենթադրում, որ զբաղվածության ցածր մակարդակը հետևանք է ՏՏ բարեկեցության:

## Աղյուսակ 10.2.2 ՏՏ-ների[11] բաշխումն ըստ վերցված վարկի/պարտքի աղբյուրի և երեխաների տնտեսական ակտիվության կարգավիճակի

| | Աշխատող երեխա ունեցող ՏՏ | | Աշխատող երեխա չունեցող ՏՏ | | Ընդամենը վարկ / պարտք վերցրած ՏՏ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % |
| **Ընդամենը** | **8.0** | **100** | **113.2** | **100** | **121.3** | **100** |
| Բանկ / վարկային կազմակերպություն | 5.9 | 65.2 | 89.4 | 73.6 | 95.3 | 73.1 |
| Միկրովարկ / գրավատուն / լիզինգային կազմակերպություն | 0.2 | 2.5 | 5.8 | 4.8 | 6.0 | 4.6 |
| Գործատու / հողատեր | 0.1 | 0.8 | 0.4 | 0.3 | 0.4 | 0.3 |
| Ապրանքների, սարքավորումների կամ հումքի մատակարար | 0.2 | 2.3 | 1.2 | 1.0 | 1.4 | 1.1 |
| Անհատ վարկատու | 0.7 | 8.0 | 2.8 | 2.3 | 3.5 | 2.7 |
| Ընկեր / բարեկամ | 1.9 | 21.0 | 21.0 | 17.3 | 22.9 | 17.5 |
| Այլ | 0.0 | 0.4 | 0.8 | 0.7 | 0.9 | 0.7 |

Հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ ՏՏ-ների մեծամասնությունը վարկ / պարտք վերցնելու նպատակով դիմել են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններին՝ բանկ / վարկային, միկրովարկ տրամադրող կազմակերպություն / գրավատուն / լիզինգային կազմակերպություն (77.7%): Ընդ որում, աշխատող երեխա չունեցող ՏՏ-ները, քան աշխատող երեխա ունեցող ՏՏ-ները ավելի հաճախ են դիմել այս աղբյուրին (78.4% և 65.2%): Հակառակ օրինաչափությունն է արձանագրվել անհատ վարկատուներից կամ ընկեր / բարեկամից պարտք վերցնելու դեպքերի առումով: Աշխատող երեխա ունեցող (29%), քան աշխատող երեխա չունեցող (19.6%) ՏՏ-ները ավելի հաճախ են օգտագործել այս աղբյուրը: Ակնհայտ է, որ աշխատող երեխա ունեցող ՏՏ-երը ֆորմալ հատվածի ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելի քիչ հնարավորություններ են ունեցել ցածր եկամուտների պատճառով, հետևաբար նաև՝ ֆինանսական պարտավորությունները հաղթահարելու ավելի մեծ ռիսկեր:

11 Տվյալները վերաբերում են դեպքերին, քանի որ միևնույն ՏՏ-ն կարող էր նշել վարկ/պարտք վերցնելու մեկից ավելի աղբյուրներ:

## Գծապատկեր 10.2.2 Տնային տնտեսությունների վարկավորման աղբյուրները, %




Պարտքի վերադարձը կարևոր գործոն է տնային տնտեսության ֆինանսական վիճակի և դրա փոփոխության առումով: Ըստ հետազոտության արդյունքների, պարտքերն ամբողջությամբ վերադարձրել են տնային տնտեսությունների 10.1%-ը, մասամբ կարողացել են վերադարձնել 70.6%-ը, իսկ 19.4%-ը դեռ չի վերադարձրել:

## Աղյուսակ 10.2.3 ՏՏ-ների[12] ըստ պարտքը վերադարձնելու / վարկը մարելու աստիճանի, միջոցների և երեխաների տնտեսական ակտիվության կարգավիճակի

| | Աշխատող երեխա ունեցող ՏՏ | | Աշխատող երեխա չունեցող ՏՏ | | Ընդամենը վարկ / պարտք վերցրած ՏՏ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % |
| **Ընդամենը** | **8.0** | **100** | **113.2** | **100** | **121.3** | **100** |
| **Պարտքի վերադարձման աստիճանը** | | | | | | |
| Պարտքը վերադարձվել է ամբողջությամբ | 0.8 | 10.1 | 11.4 | 10.0 | 12.2 | 10.1 |
| Պարտքը վերադարձվել է մասամբ | 4.9 | 60.6 | 80.8 | 71.3 | 85.6 | 70.6 |
| Պարտքը չի վերադարձվել | 2.4 | 29.3 | 21.1 | 18.6 | 23.5 | 19.4 |
| **Վերադարձված պարտքը մարելու միջոցները / եղանակները** | | | | | | |
| **Ընդամենը** | **5.7** | **100** | **92.1** | **100** | **97.8** | **100** |
| Կանխիկ՝ մեկ այլ անձից պարտք վերցնելով | 0.7 | 11.0 | 7.9 | 8.0 | 8.6 | 8.2 |
| Կանխիկ՝ վաճառելով որոշ իրեր | 0.2 | 4.0 | 3.6 | 3.7 | 3.8 | 3.7 |
| Կանխիկ՝ աշխատանքից ստացվող եկամտով | 4.6 | 76.9 | 79.4 | 80.7 | 84.0 | 80.5 |
| Այլ (ներառյալ մասնավոր և սոցիալական տրանսֆերտները) | 0.5 | 8.2 | 6.5 | 6.6 | 7.0 | 6.7 |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 0.0 | 0.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 |

12 Տվյալները վերաբերում են դեպքերին, քանի որ միևնույն ՏՏ-ն կարող էր նշել վարկ/պարտք վճարելու մեկից ավելի միջոցներ:

| | Աշխատող երեխա ունեցող SS | | Աշխատող երեխա չունեցող SS | | Ընդամենը վարկ / պարտք վերցրած SS | |
|---|---|---|---|---|---|---|
| | Քանակ, 1000 SS | % | Քանակ, 1000 SS | % | Քանակ, 1000 SS | % |
| **Վերադարձման ենթակա պարտքը մարելու միջոցները / եղանակները** | | | | | | |
| **Ընդամենը** | **7.2** | **100** | **101.9** | **100** | **109.1** | **100** |
| Կանխիկ՝ մեկ այլ անձից պարտք վերցնելով | 0.5 | 6.7 | 6.0 | 5.5 | 6.5 | 5.6 |
| Կանխիկ՝ վաճառելով որոշ իրեր | 0.2 | 3.0 | 3.7 | 3.4 | 3.9 | 3.3 |
| Կանխիկ՝ աշխատանքից ստացվող եկամտով | 5.4 | 71.5 | 78.7 | 72.2 | 84.1 | 72.2 |
| Այլ (ներառյալ մասնավոր և սոցիալական տրանսֆերտները) | 0.5 | 7.2 | 6.2 | 5.6 | 6.8 | 5.8 |
| Չգիտեն / դժվարացել են պատասխանել | 0.9 | 11.6 | 14.5 | 13.3 | 15.4 | 13.2 |

Կրկին անգամ հետազոտության արդյունքները վկայում են, որ պարտքը վերադարձնելու /վարկը մարելու առումով ավելի հաճախ ոչ շահեկան վիճակում են գտնվել աշխատող երեխա ունեցող, քան աշխատող երեխա չունեցող SS-ները: Վերջիններիս 18.6%-ն ի վիճակի չի եղել վերադարձնել պարտքը, մինչդեռ նույն ցուցանիշը աշխատող երեխա ունեցող SS-ների դեպքում կազմել է 29.3%: Համապատասխանաբար, աշխատող երեխա ունեցող SS-ներն ավելի հակված են եղել պարտքը վերադարձնել մեկ ուրիշից պարտք վերցնելու կամ որոշ իրեր վաճառելու միջոցով, քան խնդիրը լուծել աշխատանքից ստացվող եկամուտների հաշվին: (Գծապատկեր 10.2.3):

**Figure 10.2.3** SS-ների բաշխումն ըստ պարտքը վերադարձնելու աստիճանի, միջոցների և երեխաների տնտեսական ակտիվության կարգավիճակի




Վերցված պարտքերի դիմաց տնային տնտեսությունների 80.5%-ը վճարել է կանխիկ՝ աշխատանքից ստացվող եկամտից: Երեխաների ուսման կամ աշխատանքի վրա տնային տնտեսության ունեցած պարտքի և դրա մարման ազդեցությունը բացահայտելու համար, հարց է ուղղվել ռեսպոնդենտ տնային տնտեսություններին, թե արդյոք պարտքի առկայությունը ազդել է երեխայի ուսումը կիսատ թողնելու վրա:

**Աղյուսակ 10.2.4** Պարտք ունեցող ՏՏ-ների բաշխումն ըստ երեխայի կրթության կարգավիճակի, երեխայի ուսումը կիսատ թողնելու կամ շարունակելու մտադրության և երեխաների տնտեսական ակտիվության կարգավիճակի

| | Աշխատող երեխա ունեցող ՏՏ | | Աշխատող երեխա չունեցող ՏՏ | | Ընդամենը ՏՏ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % |
| **ՈՒՍՈՒՄԸ ԿԻՍԱՏ Է ԹՈՂՆՎԵԼ** | | | | | | |
| **Ընդամենը** | **5.6** | **100** | **91.9** | **100** | **97.5** | **100** |
| Կիսատ է թողնվել | 0.3 | 5.4 | 0.8 | 0.9 | 1.1 | 1.1 |
| Կիսատ չի թողնվել | 5.3 | 94.6 | 91.1 | 99.1 | 96.4 | 98.9 |
| **ՈՒՍՈՒՄԸ ԿԻՍԱՏ ԿԱՐՈՂ Է ԹՈՂՆՎԵԼ** | | | | | | |
| **Ընդամենը** | **8.0** | **100** | **113.2** | **100** | **121.3** | **100** |
| Կիսատ կթողնի | 0.2 | 3.0 | 0.5 | 0.5 | 0.8 | 0.6 |
| Միգուցե կիսատ թողնի | 0.5 | 5.9 | 3.6 | 3.2 | 4.1 | 3.4 |
| Կիսատ չի թողնի | 7.3 | 91.1 | 109.1 | 96.3 | 116.4 | 96.0 |
| **ՈՒՍՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏՔԸ ՄԱՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ** | | | | | | |
| **Ընդամենը** | **0.7** | **100** | **4.5** | **100** | **5.2** | **100** |
| Կշարունակի | 0.1 | 19.5 | 1.5 | 33.2 | 1.6 | 31.3 |
| Հնարավոր է՝ շարունակի | 0.3 | 43.1 | 2.7 | 59.4 | 3.0 | 57.2 |
| Չի շարունակի | 0.3 | 37.5 | 0.3 | 7.5 | 0.6 | 11.6 |

Համաձայն հետազոտության արդյունքների, տնային տնտեսությունների կարծիքով, իրենց ֆինանսական պարտավորությունները շատ քիչ են ազդում երեխայի ուսումը կիսատ թողնելու վրա (98.1%), սակայն որոշ մասն, այնուամենայնիվ, չի բացառում դրա հնարավորությունը: Ընդհանուր առմամբ, և՛ քաղաքային, և՛ գյուղական համայնքներում երեխաների կրթությունը առավել առաջնային խնդիր է, որը միայն խիստ բացառիկ դեպքերում է տուժում տնային տնտեսության ֆինանսական պարտավորությունների առկայությունից: Ընդհակառակը, տնային տնտեսությունների որոշ մասը նույնիսկ նոր պարտքեր է վերցնում հատկապես կրթության ծախսերը հոգալու նպատակով: Մյուս կողմից, այն հանգամանքը, որ Հայաստանում դպրոցական կրթությունը անվճար է, մեծ դեր ունի այս հարցում:

Պարտք ունեցող տնային տնտեսությունների միայն 1.0%-ն է նշել, որ վերցված պարտքերի պատճառով երեխան կիսատ է թողել ուսումը, իսկ 0.9%-ը չի բացառել նման վիճակի հավանականությունը: Ընդ որում, ըստ բնակավայրի տեսակի նույն պատասխանը տված տնային տնտեսությունների մասնաբաժինը գրեթե նույնն է և՛ քաղաքում, և՛ գյուղում:

5.2 հազար տնային տնտեսություններից, որոնք ունեն ուսումը կիսատ թողած երեխա, 31.3%-ը գտնում է, որ պարտքի մարումից հետո երեխան կշարունակի ուսումը դպրոցում, 57.2%-ը չեն բացառում դրա հնարավորությունը և միայն 11.6%-ն են վստահ, որ երեխան չի շարունակի ուսումը իրավիճակի բարելավումից հետո:

**Աղյուսակ 10.2.5** Պարտք ունեցող ՏՏ-ներում բնակվող 5-17 տարեկան երեխաների ըստ կրթության կարգավիճակի, ուսումը կիսատ թողնելու կամ շարունակելու մտադրության և տնտեսական ակտիվության կարգավիճակի

| | Աշխատող երեխա ունեցող ՏՏ | | Աշխատող երեխա չունեցող ՏՏ | | Ընդամենը ՏՏ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % | Քանակ, 1000 ՏՏ | % |
| **ՈՒՍՈՒՄԸ ԿԻՍԱՏ Է ԹՈՂՆՎԵԼ** | | | | | | |
| **Ընդամենը** | **11.8** | **2.6** | **141.8** | **31.3** | **155.4** | **34.3** |
| Կիսատ է թողնվել | 0.6 | 0.1 | 1.3 | 0.3 | 1.8 | 0.4 |
| Կիսատ չի թողնվել | 11.2 | 2.5 | 140.6 | 31.0 | 153.6 | 33.9 |
| **ՈՒՍՈՒՄԸ ԿԻՍԱՏ ԿԱՐՈՂ Է ԹՈՂՆՎԵԼ** | | | | | | |
| **Ընդամենը** | **16.8** | **3.7** | **176.3** | **38.9** | **193.1** | **42.6** |
| Կիսատ կթողնի | 0.3 | 0.1 | 0.9 | 0.2 | 1.2 | 0.3 |
| Միգուցե կիսատ թողնի | 0.8 | 0.2 | 4.8 | 1.1 | 5.5 | 1.2 |
| Կիսատ չի թողնի | 15.8 | 3.5 | 170.6 | 37.6 | 186.3 | 41.1 |
| **ՈՒՍՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏՔԸ ՄԱՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ** | | | | | | |
| **Ընդամենը** | **1.3** | **0.3** | **6.3** | **1.4** | **7.6** | **1.7** |
| Կշարունակի | 0.4 | 0.1 | 2.3 | 0.5 | 2.7 | 0.6 |
| Հնարավոր է՝ շարունակի | 0.6 | 0.1 | 3.5 | 0.8 | 4.1 | 0.9 |
| Չի շարունակի | 0.3 | 0.1 | 0.5 | 0.1 | 0.8 | 0.2 |

Հետազոտության արդյունքները վկայում են, որ, անկախ խնդիրների բնույթի, որոնց հետ բախվել են ՏՏ-ները, ծնողների համար երեխաների ուսումը մնում է որպես առաջնահերթություն: Պարտք ունեցող ՏՏ-ներում բնակվող 5-17 տարեկան երեխաների 0.4%-ն անավարտ են թողել ուսումը, որոնց 0.1%-ն եղել են աշխատող, իսկ 0.3%-ը՝ չաշխատող երեխաները: Գրեթե նույն պատկերն է արձանագրվել ուսումը կիսատ թողնելու մտավախություն ունեցող երեխաների առումով (0.3%): Ճիշտ հակառակ միտումն է նկատվել այն երեխաների շրջանում, ովքեր նշել են, որ պարտքերը մարելուց հետո մտադիր են շարունակել ուսումը: Աշխատող երեխաների 0.1%-ը, իսկ չաշխատող երեխաների 0.8%-ը չեն բացառել կրթությունը շարունակելու հնարավորությունը:

**Բաժին 11.**

# Եզրակացություններ և առաջարկություններ

## 11.1 Եզրակացություններ[13]

### Տնտեսական գործունեության մեջ ներգրավված երեխաներ

- Հետազոտությանը մասնակցած **5 -17 տարեկան** 453 հազար երեխաներից **ընթացիկ** (հարցմանը նախորդած 7 օրերի ընթացքում) զբաղվածություն ունեցել են 52 հազար երեխա կամ երեխաների 11.5%-ը: Նրանց 95%-ը զբաղված է եղել նաև ողջ տարվա ընթացքում:
- Տարիքային բաշխման համաձայն, 5-11 տարեկան երեխաների 4.6%-ը, 12-15 տարեկանների 15.6%-ը և 16-17 տարեկանների 27.4%-ը եղել են զբաղված:
- Զբաղվածների 22%-ը եղել են 5-11 տարեկան երեխաներ, 40%-ը եղել են 12-15 և 38%-ը՝ 16-17 տարեկաններ:
- Տնտեսական գործունեությամբ զբաղված տղաները (67%) երկու անգամ գերազանցել են աղջիկներին (33%):
- Գյուղական բնակավայրերում **ընթացիկ** զբաղվածություն ունեցել են 46 հազար երեխա կամ զբաղված երեխաների 88%-ը կամ գյուղաբնակ երեխաների 12%-ը: Արդյունքում՝ զբաղվածություն ունեցող գյուղաբնակ երեխաները մոտ 8 անգամ գերազանցել են քաղաքաբնակ իրենց հասակակիցներին:
- Հետազոտությանը նախորդած շաբաթում որևէ տնտեսական գործունեությամբ զբաղված են եղել քաղաքաբնակ երեխաների 2.5%-ը (տղաների 3.6%-ը և աղջիկների 1.2%-ը) և գյուղաբնակ երեխաների 22.3%-ը (տղաների 27%-ը և աղջիկների 16.6%-ը):
- Հետազոտությանը մասնակցած **5-17 տարեկան** 453 հազար երեխաներից **սովորաբար** (հարցմանը նախորդած վերջին 12 ամիսների ընթացքում) զբաղվածություն ունեցել են 64 հազար երեխա կամ երեխաների 14.2%-ը, որոնց սեռային բաշխվածությունը գրեթե չի տարբերվել ընթացիկ զբաղվածության կառուցվածքից՝ տղաների՝ 67%-ը, աղջիկների՝ 33%-ը: Հետազոտությանը նախորդած վերջին 12 ամիսների ընթացքում զբաղված են եղել 5-17 տարեկան աղջիկների 10.1%-ը և տղաների 17.7%-ը: Նույն ժամանակահատվածում զբաղված են եղել 5-11 տարեկանների 5.2%-ը, 12-15 տարեկանների՝ 19.7%-ը և 16-17 տարեկանների՝ 34.7%-ը: Զբաղված եղել են հետազոտված գյուղաբնակ երեխաների 27.2%-ը՝ քաղաքաբնակների 3.3%-ի համեմատ:
- Երեխաներն առավելապես ընդգրկված են եղել գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն ոլորտում՝ 91%՝ հիմնականում ներգրավված լինելով բերքահավաքի աշխատանքներում որպես ընտանիքի օգնող անդամ, զբաղվել են խոշոր եղջերավոր անասունների խնամքով, արածեցմամբ և խառը՝ անասնապահական և բուսաբուծության գյուղատնտեսական գործունեությամբ: Առևտուր, նորոգում, փոխադրում, պահպանում, կացություն և հանրային սննդի ծառայությունների ոլորտում ներգրավված են եղել երեխաների 4%-ը՝ հիմնականում զբաղված լինելով սննդամթերքի վաճառքով, սակայն երեխաները զբաղվել են նաև շարժիչային վառելիքի, շինանյութի, դեղորայքի առևտրով, զբաղվել են նաև ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքներով:

13 Ստորև ներկայացված տվյալները կլորացման պատճառով կարող են տասնորդական նիշով տարբերվել զեկույցում ներկայացված տվյալներից:

- Երեխաների 90%-ը զբաղվել են որակավորում չպահանջող աշխատանքներով (բեռնակիր, ցրիչ, առաքիչ, պահակ և այլն), 7%-ն իրականացրել են որոշակի հմտություններ պահանջող բանվորական աշխատանքներ (արտադրության բանվոր, տրակտորիստ, վարորդ և այլն), 2.4%-ը եղել են ծառայության և առևտրի ոլորտի աշխատողներ (մատուցող, խոհարար, վաճառող և այլն), իսկ 0.3%-ի աշխատանքը պահանջել է որոշակի մասնագիտական հմտություններ (պարուսույց, երաժիշտ, տեխնիկ-դեղագետ):
- 5-11 տարեկան տարիքային խմբի երեխաներն առավելապես ներգրավված են եղել որակավորում չպահանջող զբաղմունքներում (72%), թեև, 28%-ն իրականացրել է որևէ հմտություն պահանջող աշխատանք: Որոշակի որակավորում, հմտություն պահանջող աշխատանքներ կատարել է 16-17 տարեկան երեխաների 66%-ը, և 12-15 տարեկանների՝ 44%-ը:
- Զբաղված երեխաների 4%-ը եղել են վարձու աշխատող, որոնց 95%-ը գործատուի հետ աշխատել են բանավոր համաձայնությամբ՝ չօգտվելով որևէ սոցիալական երաշխիքից (վճարովի արձակուրդ, կրճատ աշխատաժամանակ և այլն):
- Գյուղատնտեսության ոլորտում 91% զբաղվածությունը ենթադրում էր, որ առավել մեծ տեսակարար կշիռ են ունեցել ընտանիքի առանց վարձատրության աշխատող անդամները՝ կազմելով 76%: Գյուղական բնակավայրերում այն կազմել է 78%՝ քաղաքային բնակավայրերի 64%-ի համեմատ:
- Երեխաների 20%-ը համարվել է ինքնազբաղված՝ ինքնուրույնաբար զբաղվելով եկամտաբեր գործունեությամբ:
- Երեխաները շաբաթական աշխատել են միջինը 13 ժամ. 14 ժամ՝ տղաները և 11 ժամ՝ աղջիկները:
- Միաժամանակ աշխատող և դպրոց հաճախող երեխաները գյուղական բնակավայրերում կազմել են 20%՝ 10 անգամ գերազանցելով քաղաքային բնակավայրերի նույն ցուցանիշին (2%): Սա, թերևս, պայմանավորված է նրանով, որ գյուղաբնակ երեխաները չեն կարող անմասն մնալ իրենց տնային տնտեսության կողմից իրականացվող գյուղատնտեսական աշխատանքներից, ինչը և անմիջականորեն ազդում է գյուղաբնակ երեխաների տնտեսական ակտիվության վրա:

## Կենցաղային, տնային գործեր / ծառայություններ

- Տնային կենցաղային գործերում այս կամ այն չափով ներգրավված են եղել ընդհանուր առմամբ 173 հազար երեխա կամ 5-17 տարեկան բոլոր երեխաների 38%-ը, որոնց 61%-ը եղել են քաղաքաբնակ և 39%-ը՝ գյուղաբնակ: Ինչպես և ենթադրվում էր, ի տարբերություն աշխատանքային գործունեությամբ զբաղվածության, գործունեության այս ձևում մոտ 2 անգամով գերակշռել են աղջիկները՝ կազմելով 63% (քաղաքում՝ 61% և գյուղում՝ 65%):
- Երեխաների 62%-ը տնային կենցաղային աշխատանքներով զբաղվել են շաբաթական ոչ ավել քան 7 ժամ:

## Չաշխատող երեխաներ

- 5-17 տարեկան երեխաների 88%-ը կամ 401 հազ. երեխա չի զբաղվել տնտեսական գործունեության (չաշխատող երեխաներ) որևէ տեսակով: Չաշխատող երեխաների սեռային բաշխվածությունը գրեթե հավասարաչափ է եղել՝ 51%-ը եղել են տղա և 49%-ը՝ աղջիկ:
- Չաշխատող երեխաներից աշխատանք են փնտրել և գործազուրկ են համարվել 0.5 հազ. երեխա: Ըստ այդմ՝ 5-17 տարեկան երեխաների շրջանում գործազրկության մակարդակը կազմել է 1%, տղաներինը՝ 0.9% և աղջիկներինը՝ 1.2%:

## Երեխայի արգելված աշխատանք և վնասակար աշխատանք

- Հետազոտության շրջանակում կիրառված մեթոդաբանության համաձայն **երեխայի արգելված համարվող աշխատանքում (երեխաների զբաղվածությանը բոլոր այն աշխատանքներում, որոնք ֆիզիկապես, սոցիալապես կամ բարոյապես համարվում են վնասակար կամ վտանգավոր)** ներգրավված են եղել 5-17 տարեկան երեխաների 9%-ը (39.3 հազար երեխա), իսկ 2%-ի կատարած աշխատանքը չի համարվել արգելված: Երեխայի արգելված աշխա-

տանքով զբաղվածների 31%-ը եղել են աղջիկ (ընդամենը աղջիկ երեխաների 5.7%-ը) և 69%-ը` տղա (ընդամենը տղաների 11.4%-ը):

- 16-17 տարեկան հինգ երեխայից մեկը (19%), 12-15 տարեկան տաս երեխայից մեկը (10%) ներգրավված են եղել արգելված աշխատանքում: 5-11 տարեկանների 5%-ն է իրականացրել արգելված համարվող աշխատանք:
- Գյուղաբնակ երեխաների 16.8%-ն է ներգրավված են եղել արգելված համարվող աշխատանքում` 9 անգամ գերազանցելով քաղաքաբնակ երեխաների նույն ցուցանիշին (1.9%): Մյուս կողմից, գյուղում է բնակվել արգելված աշխատանքում ներգրավված երեխաների 88%-ը:
- 5-17 տարեկան զբաղված երեխաների 6.9%-ը ներգրավված է եղել վնասակար համարվող աշխատանքներում: Աղջիկ երեխաների դեպքում այդ ցուցանիշը կազմել է 9.3% և 4.1%` տղաների դեպքում: Հետազոտված գյուղաբնակ երեխաների 13.1%-ը և քաղաքաբնակների 1.7%-ը զբաղված են եղել վնասակար աշխատանքով:
- Երեխայի արգելված համարվող աշխատանքով զբաղվածություն ունեցել են երեխաների 76%-ը կամ 39 հազ. երեխա, որոնց 79%-ը կամ 31 հազ. երեխա զբաղված են եղել վնասակար աշխատանքներում: Տղաները 3 անգամ ավելի հաճախ են զբաղված եղել երեխայի համար վնասակար համարվող գործունեությամբ (72%), քան աղջիկները (28%):
- Վնասակար համարվող աշխատանքով զբաղված 10 երեխայից 9-ը զբաղվել է գյուղատնտեսությամբ, 55%-ի աշխատանքը կապված է եղել ծանր բեռների տեղափոխման հետ` հիմնականում բերքահավաքի աշխատանքներով պայմանավորված: Համապատասխանաբար, վնասակար համարվող աշխատանքներում 87% դեպքերում զբաղված են եղել գյուղաբնակ երեխաները:
- Վնասակար աշխատանքներով զբաղված 31 հազար երեխաների 45%-ը եղել են 16-17 և 39%-ը` 12-15 տարիքային խմբի երեխաները և 11%-ը` 5-11 տարեկանները, որոնց 96%-ը զբաղված է եղել գյուղատնտեսության ոլորտում:
- Վնասակար աշխատանք կատարող երեխաների միջին շաբաթական աշխատաժամերը գերազանցել են 16 ժամը, ընդ որում` 16-17 տարեկաններն աշխատել են ավելի քան 19 ժամ, 12-15 տարեկանները` 14 և 5-11 տարեկանները` 12 ժամ: Տղաներն ավելի երկար աշխատանքային շաբաթ են ունեցել 12-17 տարիքային խմբում, իսկ աղջիկները` 5-11 տարիքային խմբում:
- Ըստ աշխատանքի վնասակարության բաղադրիչների[14], երեխայի աշխատանքը վնասակար, հետևաբար նաև` արգելված համարելու առավել տարածված գործոնը եղել է աշխատանքային վնասակար պայմանները (փոշի, աշխատանք բարձրության վրա, վտանգավոր գործիքի օգտագործում և այլն), որի մասին նշել են 24 հազ. երեխա կամ վնասակար աշխատանքում ներգրավված երեխաների 76%-ը:
- Վնասակար աշխատանքային պայմաններում հիմնականում աշխատել են տղաները` կազմելով 70%:
- Վնասակար համարվող` շաբաթական 43 ժամից ավել աշխատել է 1.2 հազար երեխա, որոնց 83%-ը եղել են 16-17 տարիքային խմբում:
- Վնասակար զբաղմունք է ունեցել 0.6 հազ. երեխա, նրանց 88%-ը` տղա: Վնասակար զբաղմունք ունեցող 4 երեխայից երեքը եղել է 16-17 տարեկան, իսկ 3%-ը կազմել են 5-11 տարեկան տղաները:
- Վնասակար ոլորտում զբաղված են եղել բացառապես 16-17 տարեկան տղաները (0.4 հազ. երեխա):
- Ոչ վնասակար համարվող, սակայն այլ արգելված աշխատանքներում ներգրավված է եղել 8.1 հազար երեխա կամ արգելված աշխատանքով զբաղվածների 21%-ը: Նրանց 78%-ը եղել են 5-11 տարեկան երեխաները, ովքեր տարիքի գործոնով պայմանավորված, չպետք է ընդհանրապես աշխատեին: Երեխաների 99%-ը սեփական տնային տնտեսությունում զբաղվել է գյուղատնտեսական ժամանակավոր աշխատանքներով` առավելապես լինելով առանց վարձատրության աշխատող ընտանիքի օգնող անդամ (89%): 12-15 տարեկանները կազմել են 22%. Նրանց աշխատանքը չի եղել վնասակար, բայց չի եղել նաև թեթև, քանի որ հետազոտվող շաբաթում աշխատել են ավելի քան թույլատրելի 13 ժամը (բայց ոչ ավել քան 42 ժամ):

14 **Վնասակար** զբաղմունք կամ ոլորտ կամ աշխատաժամեր կամ աշխատանքային պայմաններ:

## Կրթական բնութագրիչներ

- Հետազոտության մեթոդաբանությամբ գրագիտության ցուցանիշի գնահատման համար հիմք է ընդունվել 5-17 տարեկան երեխայի կողմից որևէ լեզվով, ներառյալ՝ մայրենի, գրելու, կարդալու և կարճ պարզ նախադասություններ կազմելու ունակությունը, ըստ որի գրագետ են համարվել 423.2 հազար երեխա կամ հարցված բոլոր երեխաների 93.3%-ը, իսկ ոչ գրագետ՝ 30.2 հազար երեխա կամ 6.7%-ը: Ոչ գրագետ երեխաների 99.7%-ը եղել են 5-11 տարիքային խմբում, որտեղ բացարձակ մեծամասնություն են կազմել 5-6 տարեկան երեխաները:
- Հետազոտության արդյունքներով 5-17 տարեկան 453 հազար հարցված երեխաների 95.%-ը (430 հազար երեխա) նշել է կրթական ծրագրի որևէ աստիճանում տվյալ պահին ներգրավված լինելու մասին, որից 39%-ը՝ հիմնական կրթությունում, 33%-ը՝ տարրական կրթական աստիճանում, 16%-ը՝ ավագ դպրոցում: Նախադպրոցական կրթական մակարդակը նշել է երեխաների 7%-ը, իսկ արհեստագործական կամ միջին մասնագիտական և բուհական կրթությունը, համապատասխանաբար՝ 3% և 2%-ը:
- Երեխաների ընթացիկ դպրոցական հաճախելիությունը երկրում բավականին բարձր է՝ 95%: Սեռային առումով՝ տղաների և աղջիկների ընդգրկվածության մակարդակը համարյա նույնական է՝ 94.8% տղաներինը և 95.1%՝ աղջիկներինը: Քաղաքաբնակ երեխաների համեմատ գյուղաբնակ երեխաներն ունեցել են նախադպրոց/դպրոց հաճախելիության ավելի ցածր մակարդակ (92.5% և):
- Ընթացիկ ուս. տարում դպրոց/նախադպրոցական ուսումնական հաստատություն չի հաճախել 5-17 տարեկան երեխաների 5%-ը կամ 23 հազար երեխա: Չեն հաճախել հետազոտված տղա երեխաների 5.2%-ը և աղջիկների 4.9%-ը: Ըստ տարիքային բաշխման նախադպրոց /դպրոց չեն հաճախել 5-11 տարեկանների 5.9%-ը, 12-15 տարեկանների՝ 0.1%-ը և 16-17 տարեկանների՝ 9.8%-ը: Չհաճախողների 64%-ը եղել են 5-11 տարեկան երեխաները և 31%-ը՝ 16-17 տարեկանները, ինչը պայմանավորված է 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատություն չհաճախելու, իսկ ավագների դեպքում՝ միջնակարգ կրթությունը չշարունակելու փաստով:
- Հետազոտության արդյունքները վկայում են երեխաների դպրոց հաճախելիության մակարդակի և զբաղվածության միջև ակնհայտ փոխադարձ կապի մասին, ընդ որում՝ հատկապես արտահայտված՝ երեխայի արգելված և վնասակար համարվող աշխատանքների առումով: Այսպես, չաշխատող երեխաներն ունեցել են դպրոց հաճախելիության ավելի բարձր մակարդակ, քան աշխատող երեխաները (95.2% և 92.8%): Մյուս կողմից՝ արգելված չհամարվող աշխատանքով զբաղված երեխաներն ավելի հաճախ են ընդգրկված եղել կրթության մեջ (96%), քան նրանք, ովքեր իրականացրել են արգելված աշխատանք (91.8%):
- Երբևէ դպրոց չի հաճախել 13 հազար երեխա կամ հարցված երեխաների 3%-ը, որոնց 98%-ը եղել են մինչև 7 տարեկան երեխաները: 12-15 տարիքային խմբում երբևէ դպրոց չհաճախած կամ ոչ գրագետ երեխաների թվաքանակը եղել է վիճակագրորեն չնչին՝ ոչ ներկայացուցչական մեծություն, այնուամենայնիվ, պատճառը եղել է երեխայի հաշմանդամությունը:
- Կրթությունը դադարեցնելու / ուսումը կիսատ թողնելու հիմնական պատճառներից է հատկապես փոքր տարիքը՝ 67%, ապա՝ հաշմանդամությունը՝ 14% և դպրոցի բացակայությունը կամ հեռավորությունը՝ 10%:

## Այլ բնութագրիչներ

- Գյուղաբնակ երեխաների բնակության պայմաններն ըստ կացարաններում առկա հարմարությունների ավելի անբարենպաստ են, քան քաղաքաբնակ երեխաներինը: Մյուս կողմից, քաղաքային բնակավայրերում աշխատող երեխա ունեցող տնային տնտեսությունների կենցաղային պայմաններն ավելի բարենպաստ են, քան աշխատող երեխա չունեցող տնային տնտեսությունների պայմանները:
- Քաղաքային բնակավայրերում նկատվել է հետևյալ միտումը ավելի հաճախ երեխաներն աշխատել են մինչև 200 հազար դրամ միջին ամսական եկամուտ ունեցող տնային տնտեսություններում և հակառակը՝ ավելի քիչ դեպքերում են աշխատել 200 հազար դրամից ավել միջին ամ-

սական եկամուտ ունեցող տնային տնտեսություններում: Սա վկայում է այն մասին, որ որքան տնային տնտեսության միջին ամսական եկամուտը բարձր է, այնքան նրանք հակված չեն օգտագործել երեխաների աշխատանքը:

- Նույն միտումն առկա է նաև գյուղական բնակավայրերում, սակայն մի տարբերությամբ, որ գյուղում հարաբերակցությունը փոխվում է եկամուտների ավելի ցածր շեմից՝ 101.000 դրամից:
- Առողջական խնդիրների և դեպքերի բաշխումն ըստ սեռի դիտարկելիս արձանագրում ենք, որ չնայած տղաների հիվանդացության դեպքերը 3 անգամ ավելի են, այնուհանդերձ աղջիկներն ավելի խոցելի են ու անպաշտպան աշխատանքի վնասակար պայմանների նկատմամբ: Առաջին հայացքից և՛ տղաների, և՛ աղջիկների համար աշխատանքի պայմանների ու վնասակար գործոնների ազդեցության ռիսկը գրեթե նույնական է, այնուհանդերձ, առկա են մի քանի լուրջ և անհանգստացնող բացառություններ: Եթե տղաների խմբում հենաշարժիչ համակարգին և վերջույթներին հասցված վնասները կազմել են դեպքերի 6%-ը, ապա աղջիկների մոտ այն գրեթե երկու անգամ ավելին է՝ 11%:
- Վերը նշված տվյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ, որքան էլ, որ ծնողի կողմից երեխայի աշխատանքն արդարացվի ՏՏ ցածր կենսամակարդակով, այնուամենայնիվ, երեխայի աշխատանքի բացասական կողմերի մասին բնակչության շրջանում գոյություն ունի իրազեկման անբավարար մակարդակ: Կարելի է փաստել, որ առկա է նաև առողջապահական ծառայությունների սահմանափակ հասանելիության և մատչելիության խնդիր:

## Երեխաների կրթության, ուսման վրա ազդող այլ բնութագրիչներ

- Տնային տնտեսությունների կարծիքով, իրենց ֆինանսական պարտավորությունները շատ քիչ են ազդել երեխայի ուսումը կիսատ թողնելու վրա, սակայն նրանց որոշ մասը, այնուամենայնիվ, չի բացառում նման հնարավորությունը:
- Հետազոտության արդյունքները վկայում են, որ աշխատող երեխա ունեցող տնային տնտեսություններն ավելի քիչ են դիմում վարկ կամ փոխառություն վերցնելուն, քան աշխատող երեխա չունեցող տնային տնտեսությունները:
- Հետազոտության արդյունքների համաձայն 121.3 հազար ՏՏ-ներ (կամ 5-17տ. երեխա ունեցող ՏՏ-ների 42%-ը) վերջին 12 ամիսների ընթացքում վերցրել են վարկ / պարտք, որոնցից 8 հազարն ունեցել են աշխատող երեխաներ: Զբաղվածության մակարդակը կրկնակի անգամ ցածր է եղել վարկ / պարտք վերցրած, քան նման խնդիր չնշած ՏՏ-ներում բնակվող երեխաների շրջանում (3.7% կամ 7.7%), ինչը սակայն չի ենթադրում, որ զբաղվածության ցածր մակարդակը հետևանք է ՏՏ բարեկեցության:
- Տնային տնտեսությունների 32%-ը նշել են, որ վերջին 12 ամիսների ընթացքում **երկրի/համայնքի մակարդակով** ենթարկվել է բացասական ազդեցության. ինվ ՏՏ-ից 4-ի դեպքում պատճառը եղել է գնաճը, տասից մեկի դեպքում՝ գյուղատնտեսական արտադրանքի գների նվազումը և 6%-ն էլ՝ բնական աղետը:
- Հետազոտության արդյունքներով չի արձանագրվել վերջին 12 ամիսների ընթացքում ՏՏ ունեցած խնդիրների ուղղակի ազդեցություն երեխաների զբաղվածության մակարդակի վրա: Ընդհակառակը, նման խնդիրներ չնշած ՏՏ-ներում 5-17տ. երեխաների զբաղվածության մակարդակն փոքր-ինչ բարձր է եղել խնդիրներ նշվածների համեմատ (6.4% և 5.1%):
- Տնային տնտեսությունների 24%-ը վերջին 12 ամիսների ընթացքում **ՏՏ մակարդակով** ունեցել են եկամտի նվազում. 21%-ը, որպես ընտանիքի առաջ ծառացած խնդիր նշել է ընտանեկան բիզնեսում արտադրվող ապրանքի գների նվազումը, որի ազդեցությունն ավելի զգալի է եղել գյուղական բնակավայրերում (30%): 16%-ը նշել են ՏՏ անդամի աշխատանքի կորուստը, որն ավելի լուրջ խնդիր է եղել քաղաքային բնակավայրերի համար (34%): Բերքի և գյուղ. կենդանիների կորուստը նշել են ՏՏ-ների 29%-ը, որը, բնականաբար, գյուղական բնակավայրերին բնորոշ խնդիր է (42%): 9.5 հազար ՏՏ-ների դեպքում էլ աշխատող անդամի հիվանդությունը / լուրջ պատահարն է եղել եկամտի նվազման պատճառ, որի 97%-ը եղել են քաղաքային բնակավայրերի աշխատող երեխա չունեցող ՏՏ-ները:
- Վերոնշյալ միտումներն ընդհանրացնելով, կարելի է վկայել, որ գյուղական բնակավայրերի ՏՏ-ների հիմնական խնդիրները (բերքի կորուստը) պայմանավորել են քաղաքային բնակավայ-

րերին առավել բնորոշ խնդիրները (գնածը):

- Վերջին 12 ամիսների ընթացքում վերը նշված խնդիրների հաղթահարման հիմնական միջոցների առումով էական տարբերություններ չեն արձանագրվել աշխատող կամ չաշխատող երեխա ունեցող ՏՏ-ներում: ՏՏ-ների մեծամասնությունը կրճատել են ծախսերը. աշխատող երեխա ունեցող ՏՏ-ների դեպքում այդ ցուցանիշը կազմել 48%, իսկ յուրաքանչյուր հինգերորդ նման ՏՏ-ը ծագած խնդիրը հաղթահարել է վարկի, պարտքի ձեռքբերմամբ կամ գրավի միջոցով (21%): Տնային տնտեսությունների 10%-ն էլ ֆինանսական աջակցություն է ստացել հարազատների, բարեկամների կողմից:
- Տնային տնտեսությունների կարծիքով, ընտանիքի ֆինանսական պարտավորությունները շատ քիչ են ազդել երեխայի ուսումը կիսատ թողնելու վրա (98%), սակայն որոշ մասն, այնուամենայնիվ, չի բացառել դրա հնարավորությունը: Պարտք ունեցող տնային տնտեսությունների միայն 1%-ն է նշել, որ վերցված պարտքերի պատճառով երեխան կիսատ է թողել ուսումը, իսկ 1%-ը չի բացառել նման վիճակի հավանականությունը:
- 5.2 հազար տնային տնտեսություններից, որոնք ունեն ուսումը կիսատ թողած երեխա, 31%-ը գտնում է, որ պարտքի մարումից հետո երեխան կշարունակի ուսումը, 57%-ը չեն բացառել դրա հնարավորությունը և միայն 12%-ն են վստահ եղել, որ երեխան չի շարունակի ուսումն անգամ իրավիճակի բարելավումից հետո:
- Հետազոտության արդյունքները վկայում են, որ, անկախ խնդիրների բնույթից, որոնց հետ բախվել են ՏՏ-ները, ծնողների համար երեխաների ուսումը մնում է որպես առաջնահերթություն: Պարտք ունեցող ՏՏ-ներում բնակվող 5-17 տարեկան երեխաների 0.4%-ն անավարտ են թողել ուսումը, որոնց 0.1%-ն եղել են աշխատող, իսկ 0.3%-ը՝ չաշխատող երեխաները: Գրեթե նույն պատկերն է արձանագրվել ուսումը կիսատ թողնելու մտավախություն ունեցող երեխաների առումով (0.3%): Ճիշտ հակառակ միտումն է նկատվել այն երեխաների շրջանում, ովքեր նշել են, որ պարտքերը մարելուց հետո մտադիր են շարունակել ուսումը: Աշխատող երեխաների 0.1%-ը, իսկ չաշխատող երեխաների 0.8%-ը չեն բացառել կրթությունը շարունակելու հնարավորությունը:

## 11.2 Առաջարկություններ

### ա) Մեթոդաբանական և հայեցակարգային առաջարկություններ

- Առնվազն հնգամյա պարբերականությամբ կրկնել հետազոտության իրականացումը՝ երեխայի աշխատանքին վերաբերող հիմնական ցուցանիշների մշտապես թարմացվող տվյալների շտեմարան ունենալու նպատակով: Ռեսուրսների սակավության դեպքում կիրառել մոդուլային հետազոտությանը տարբերակը՝ սահմանափակ հարցախմբով.
- Երեխայի աշխատանքի հետազոտության ստանդարտացված մեթոդաբանությունը՝ սահմանումները, դրույթներն ու չափորոշիչները, հնարավորինս կիրառել երեխայի խնդիրներն արծարծող համանման հետազոտություններում՝ տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով.
- Հաշվի առնելով աղքատ ընտանիքներում երեխաների առավել խոցելի վիճակը, հնարավորության սահմաններում աշխատող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրել նաև «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների» միջոցով:
- Հաշվի առնելով հետազոտության բարդությունը և հարցաթերթի ծավալը՝ հատկապես թիրախային ռեսպոնդենտների (5-17 տարեկան երեխաներ) տեսանկյունից, համանման հետազոտություններում, թանկարժեք տեղեկատվություն տրամադրելու և ժամանակ հատկացնելու համար, հարցվողների համար նախատեսել որոշակի խրախուսական միջոցներ՝ երեխաների դեպքում՝ շոկոլադե սալիկ կամ քաղցրավենիք, գրենական պիտույքներ և / կամ որոշակի գումար՝ տնային տնտեսության համար:

### բ) Երեխայի աշխատանքի ազգային ռազմավարական մոտեցումներ

- Բարձրացնել երեխայի աշխատանքի վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը` օգտագործելով գովազդային արշավներն ու տեղեկատվության փոխանցման այլ հանրամատչելի ձևերը (գրքույկներ, պլակատներ, ձեռնարկներ, ռադիո և հեռուստատեսային հաղորդումներ և այլն) պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների միջոցով.
- Ուսումնական հաստատություններում կազմակերպել երեխայի աշխատանքի լուսաբանմանը նվիրված հատուկ դասընթացներ.
- Պարբերաբար հավաքագրել երեխայի աշխատանքին վերաբերող ընթացիկ վիճակագրական տեղեկատվություն և ապահովել դրա օգտագործումը պետական նպատակային քաղաքականությունների, ռազմավարությունների մշակման ժամանակ, ինչպես նաև երեխաների պաշտպանության ազգային և մշտադիտարկման ծրագրերում:

# ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Աշխատանքի միջազգային կազմակերպություն

# ԵՐԵԽԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ
# Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ

**Տրամադրված տեղեկատվության գաղտնիության պահպանումը երաշխավորվում է «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքով:**

Հարցման ընթացքում ստացված տեղեկատվությունը կիրապարակվի բացառապես **ամփոփ տեսքով**՝ երեխայի աշխատանքի վիճակագրական վերլուծության նպատակով:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հարցաթերթի համարը | | | | | |
| 2. | Տնային տնտեսության (ՏՏ ) համարը | | | | | |
| 3. | Մարզ (անվանումը) | | | | | |
| 4. | Բնակավայր (անվանումը) | | | | | |
| 5. | Քաղաք-1 / Գյուղ-2 | | | | | |
| 6. | Հետազոտվող ժամանակահատվածը | | | 2015 | | |

ամիս

### 2. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7. | Հարցազրույցը կայացել է լրիվին | | | |
| 8. | Հարցազրույցը կայացել է մասամբ | | | |
| 9. | Հարցազրույցի տևողությունը (րոպե) | | | |

*Օգտագործված հապավումներ*

1. ՏՏ - տնային տնտեսություն
2. h/h - հերթական համար
3. Գ/Տ - գյուղացիական տնտեսություն
4. տ. - տարեկան

# 3. ՏՏ կազմը[1] և անդամների բնութագրերը

(հարցերն ուղղել ՏՏ առավել տեղեկացված չափահաս անդամին)

| ՏՏ անդամի հ/հ-ն | Խնդրում եմ նշել Ձեր ՏՏ բոլոր անդամների անունները* սկսելով ընտանիքի գլխավորից<br><br>*ՏՏ -ն մեկ կամ մի քանի անձանց խումբ է, ովքեր միասին ապրում են միևնույն կացարանում և վարում են միասնական տնտեսություն, իսկ ՏՏ անդամներից որևէ մեկին ընդունում են որպես գլխավոր: ՏՏ անդամների համար արյունակցական կամ ամուսնական կապի առկայությունը պարտադիր չէ: Ճիշտ նույն կերպ՝ միևնույն տանն ապրողները պարտադիր չէ, որ լինեն միևնույն ՏՏ անդամ* | (ԱՆՈՒՆ)-ի ազգակցական կապը ՏՏ գլխավորի հետ<br>1. ՏՏ գլխավոր<br>2.Կին/ամուսին/զուգընկեր<br>3. Որդի/դուստր<br>4. Եղբայր/քույր<br>5. Փեսա/ հարս<br>6. Թոռ<br>7. Զարմիկ/զարմուհի<br>8. Խորթ երեխա<br>9. Հայր / մայր / սկեսրայր / սկեսուր /աներ/ զոքանչ<br>10. Դայակ / սպասավոր (ՏՏ -ում ապրող)<br>11. Այլ ազգական<br>12. Ազգակցական կապ չկա | ՏՏ անդամի սեռը<br>1. Արական<br>2. Իգական | ՏՏ անդամի տարիքը՝ լրացած վերջին ծննդյան օրով *(մինչև 1տ. երեխայի տարիքը նշել «0»)* | 5 - 17տ. *անդամների համար նշել «1», մնացած դեպքերում՝ «0»* | Ամուսնական վիճակը *(հարցումը 15 տարեկանից, մնացած դեպքերում նշել «0»)*<br>1. Երբևէ չամուսնացած<br>2. Ամուսնացած՝ գրանցված<br>3. Ամուսնացած՝ չգրանցված<br>4. Բաժանված<br>5.Ամուսնալուծված<br>6. Այրի | Ձեր ՏՏ-ում կա՞ մինչև 1 տարի ժամանակով բացակա անդամ<br>1. Այո, ՀՀ-ում<br>2. Այո, ՀՀ-ից դուրս<br>3. Չկա *(բանակում գտնվելը չհամարել բացակայություն)* | ՏՏ ԲՈԼՈՐ անդամների համար նշել ստորև նշված ՏՏ անդամի հ/հ-ն *(նշել «97», եթե կիրառելի չէ, բացակա է կամ ՏՏ անդամ չէ)* | | | ՏՏ ո՞ր անդամն է տեղեկություն տրամադրել ՏՏ անդամի վերաբերյալ *(նշել հ/հ-ն A1-ից)* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | հարցվողի ամուսինը / կինը / զուգընկերը | հարցվողի կենսաբանական մայրը | հարցվողի կենսաբանական հայրը | |
| A1 | A2 | A3 | A4 | A5 | A6 | A7 | A8 | A9 | A10 | A11 | A12 |
| 01 | | 1 | | | | | | | | | |
| 02 | | | | | | | | | | | |
| 03 | | | | | | | | | | | |
| 04 | | | | | | | | | | | |
| 05 | | | | | | | | | | | |
| 06 | | | | | | | | | | | |
| 07 | | | | | | | | | | | |
| 08 | | | | | | | | | | | |
| 09 | | | | | | | | | | | |

**A2-ում ՉՆՇԵ'Լ.**

- 1 տարի և ավելի ժամանակով բացակա ՏՏ անդամներին, բացառությամբ բանակում գտնվողների.
- մինչև 3 ամիս ժամանակով հյուր եկածներին:

## ՄԱՍ I. ՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՐՑԱԹԵՐԹ

(հարցերն ուղղել SS առավել տեղեկացված չափահաս անդամին)

**ԲԱԺԻՆ 1. Տնային տնտեսության 5 և բարձր տարիքի անդամների կրթական մակարդակը**

(լրացվում է ըստ A1-ում SS անդամների հ/հ-ների հաջորդականության՝ սկսած 01 համարից և <u>չի լրացվում</u> SS բացակա անդամների համար (<u>A8=1</u> և <u>A8=2</u>))

| | | | | | | | | | Անցում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *SS անդամի հերթական համարը՝ A1-ից* | | | | | | | | | |
| *SS անդամի անունը՝ A2-ից* | | | | | | | | | |
| *SS անդամի տարիքը՝ A5-ից* | | | | | | | | | |
| **A13.** Երբևէ (ԱՆՈՒՆ)-ը հաճախե՞լ է որևէ ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատություն | 1. Այո<br>2. Ոչ | | | | | | | | 1 → **A15**<br>2 → **A14** |
| ***A14.** Ի՞նչ պատճառով (ԱՆՈՒՆ)-ը չի հաճախել*<br>(Կարդալ տարբերակները և նշել ՀԻՄՆԱԿԱՆ պատճառը)<br>1. Դեռ փոքր է / արդեն մեծ է<br>2. Հաշմանդամություն<br>3. Հիվանդություն<br>4. Տարածքում ուս. հաստատություն չկա / շատ հեռու է<br>5. Անհնար է(ր) հոգալ ուսման հետ կապված ծախսերը<br>6. Ընտանիքը / ծնողը / զուգընկերը թույլ չեն տալիս<br>7. Հետաքրքրված չէ ուսմամբ<br>8. Կրթությունը չի համարվում արժեքավոր<br>9. Ուս. հաստատությունն անվտանգ չէ<br>10. Սովորում է արհեստ<br>11. Աշխատում է վարձատրությամբ<br>12. Օգնում է ընտանեկան բիզնեսում / Գ/Տ-ում<br>13. Օգնում է տնային գործերում<br>14. Այլ *(նշել)* | | | | | | | | | |
| **A15.** Կարո՞ղ է (ԱՆՈՒՆ)-ը որևէ լեզվով (ներառյալ՝ մայրենի) գրել, կարդալ և հասկանալ կարճ, պարզ նախադասություններ | 1. Այո<br>2. Ոչ | | | | | | | | Եթե **A13=2** → **A19**<br>Մնացած դեպքերում → **A16** |
| **A16.** Ընթացիկ ուսումնական տարում (ԱՆՈՒՆ)-ը հաճախե՞լ է որևէ ուսումնական հաստատություն (այդ թվում՝ նախադպրոցական) | 1. Այո<br>2. Ոչ | | | | | | | | 1 → **A17**<br>2 → **A16a** |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *ՏՏ անդամի հերթական համարը՝ A1-ից* | | | | | | | | | | | | | | | Անցում |
| *ՏՏ անդամի անունը՝ A2-ից* | | | | | | | | | | | | | | | |
| *ՏՏ անդամի տարիքը՝ A5-ից* | | | | | | | | | | | | | | | |
| ***A16a. Ի՞նչ պատճառով (ԱՆՈՒՆ)-ը չի հաճախել***<br>(Կարդալ տարբերակները և նշել ՀԻՄՆԱԿԱՆ պատճառը)<br>1. Դեռ փոքր է / արդեն մեծ է<br>2. Հաշմանդամություն<br>3. Հիվանդություն<br>4. Տարածքում ուս. հաստատություն չկա / շատ հեռու է<br>5. Անհնար է(ր) հոգալ ուսման հետ կապված ծախսերը<br>6. Ընտանիքը / ծնողը / զուգընկերը թույլ չեն տալիս<br>7. Հետաքրքրված չէ ուսմամբ<br>8. Կրթությունը չի համարվում արժեքավոր<br>9. Ուս. հաստատությունն անվտանգ չէ<br>10. Սովորում է արհեստ<br>11. Աշխատում է վարձատրությամբ<br>12. Օգնում է ընտանեկան բիզնեսում / Գ/Տ-ում<br>13. Օգնում է տնային գործերում<br>14. Այլ *(նշել)* | | | | | | | | | | | | | | | →A18 |
| **A17. Կրթական ծրագրի ո՞ր աստիճանում և ո՞ր դասարանում / կուրսում է (ԱՆՈՒՆ)-ը սովորում**<br>*Աստիճան (Ա) Դասարան/ Կուրս (Դ/Կ)*<br>1. Նախադպրոցական<br>2. Տարրական (1 - 4 դաս.)<br>3. Հիմնական (5 - 9 դաս.)<br>4. Ավագ / միջնակարգ (10 - 12 դաս.)<br>5. Ուսումնարան, տեխնիկում, քոլեջ (1 - 5 կուրս)<br>6. ԲՈՒՀ (բակալավր / մագիստրոս) (1 - 7 կուրս)<br>7. Հետբուհական (1 - 4 կուրս)<br>8. Չգիտեմ /դժվարանում եմ պատասխանել | Ա | Դ/Կ | Ա | Դ/Կ | Ա | Դ/Կ | Ա | Դ/Կ | Ա | Դ/Կ | Ա | Դ/Կ | Ա | Դ/Կ | 1 - 7 →A19<br>8 →A18 |
| | | x | | x | | x | | x | | x | | x | | x | |
| **A18. Ո՞րն է կրթական ծրագրի ամենաբարձր աստիճանը և փուլը (դասարանը / կուրսը), որ (ԱՆՈՒՆ)-ը ձեռք է բերել**<br>*Աստիճան (Ա) Դասարան/ Կուրս (Դ/Կ)*<br>1. Նախադպրոցական<br>2. Տարրական (1 - 4 դաս.)<br>3. Հիմնական (5 - 9 դաս.)<br>4. Ավագ / միջնակարգ (10 - 12 դաս.)<br>5. Ուսումնարան, տեխնիկում, քոլեջ (1 - 5 կուրս)<br>6. ԲՈՒՀ (բակալավր / մագիստրոս) (1 - 7 կուրս)<br>7. Հետբուհական (1 - 4 կուրս)<br>8. Չգիտեմ /դժվարանում եմ պատասխանել | Ա | Դ/Կ | Ա | Դ/Կ | Ա | Դ/Կ | Ա | Դ/Կ | Ա | Դ/Կ | Ա | Դ/Կ | Ա | Դ/Կ | →A19 |
| | | x | | x | | x | | x | | x | | x | | x | |

## ԲԱԺԻՆ 2. ՀԵՏԱԶՈՏՎՈՂ ՇԱԲԱԹՎԱ[1] ԸՆԹԱՑՔՈՒՄ տնային տնտեսության 5 և բարձր տարիքի անդամների տնտեսական ակտիվության կարգավիճակը

### A. *Զբաղվածություն*

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *ՏՏ անդամի հերթական համարը՝ A1-ից* | | | | | | | | | Անցում |
| *ՏՏ անդամի անունը՝ A2-ից* | | | | | | | | | |
| *ՏՏ անդամի տարիքը՝ A5-ից* | | | | | | | | | |
| A19. Անցած շաբաթվա15 ընթացքում գոնե մեկ ժամ զբաղվե՞լ է (ԱՆՈՒՆ)-ը որևէ աշխատանքով / եկամտաբեր գործունեությամբ, եթե անգամ սովորող է, գործազուրկ, վարում է տնային տնտեսություն կամ կենսաթոշակառու է *(աշխատանք որպես վարձու աշխատող, ինքնազբաղված, գործատու կամ առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ)* | 1. Այո<br>2. Ոչ | | | | | | | | 1 →A22<br>2 →A20 |
| A20. Միգուցե (ԱՆՈՒՆ)-ը զբաղվել է ստորև թվարկված գործունեության տեսակներից որևէ մեկով | | | | | | | | | |
| (a) Զբաղվել է սեփական գործով (բիզնեսով)՝ թեկուզև փոքր, ինքնուրույն կամ գործընկերոջ հետ *Օրինակ՝ առևտուր, արտադրություն վաճառքի համար, կոշիկի նորոգում, վարսահարդարման ծառայություն, ուղևորա / բեռնափոխադրում, իրավաբանական, բժշկական գործունեություն և այլն* | 1. Այո<br>2. Ոչ | | | | | | | | |
| (b) Աշխատել է որպես վարձու աշխատող և ստացել է կամ ստանալու է դրամական և (կամ) բնաիրային աշխատավարձ *Օրինակ՝ մշտական / պայմանագրային / պատահական / գործավարձային աշխատանք / աշխատանքային պրակտիկա / աշխատանք սննդի կամ կացարանի դիմաց* | 1. Այո<br>2. Ոչ | | | | | | | | |
| (c) Աշխատել է մասնավոր գործատուի մոտ որպես տնային աշխատող՝ դրամական և (կամ) բնաիրային վարձատրությամբ *Օրինակ՝ մասնավոր անձի տան մաքրություն / երեխայի / հիվանդի խնամք / դասապատրաստում, այգու խնամք և այլն* | 1. Այո<br>2. Ոչ | | | | | | | | |
| (d) Օգնել է ընտանեկան բիզնեսում <u>առանց վարձատրության</u> (բացի Գ/Տ-ում աշխատանքից) *Օրինակ՝ օգնել է վաճառել / ապրանք արտադրել / մաքրել / կարգի* | 1. Այո<br>2. Ոչ | | | | | | | | |

15 Այստեղ և հետայսու՝ վերաբերում է հարցմանը նախորդող օրացուցային շաբաթվան՝ **երկուշաբթի** օրվանից մինչև **կիրակի** օրը (ներառյալ):

| SS անդամի հերթական համարը՝ A1-ից | | | | | | | | | Անցում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| SS անդամի անունը՝ A2-ից | | | | | | | | | |
| SS անդամի տարիքը՝ A5-ից | | | | | | | | | |
| *բերել աշխատանքային տարածքը / օգնել է զբաղվել հաշվարկներով, թղթաբանությամբ և այլն* | | | | | | | | | |
| (e) Աշխատել է / օգնել է Ձեր տնամերձում, այգում, Գ/S-ում, գյուղ. ապրանքների արտադրության մեջ / խնամել է SS-ին պատկանող կենդանիներ վաճառքի, փոխանակման կամ սեփական սպառման[16] համար<br>*Օրինակ՝ հողի փորում, բերքահավաք, անասունի խնամք և այլն* | 1. Այո<br>2. Ոչ | | | | | | | | |
| (f) Զբաղվել է շինարարական / կապիտալ նորոգման աշխատանքներով Ձեր տան, բնակարանի, ընտանեկան բիզնեսի համար<br>*Օրինակ՝ տանիքի փոխում, նոր սենյակի կառուցում և այլն* | 1. Այո<br>2. Ոչ | | | | | | | | |
| (g) Զբաղվել է ձկնորսությամբ, խեցգետինների /վայրի կենդանիների որսով կամ անտառային մրգերի, հատապտուղների հավաքմամբ՝ վաճառքի կամ Ձեր SS-ում օգտագործման համար | 1. Այո<br>2. Ոչ | | | | | | | | |
| (h) Ձեր SS-ում օգտագործելու համար կանոնավոր բերել է ջուր կամ հավաքել վառելափայտ | 1. Այո<br>2. Ոչ | | | | | | | | **Եթե A20 a) - i) - ում կա գոնե մեկ "1" →A22<br>Եթե ԲՈԼՈՐԸ "2" են →A21** |
| (i) Բացառապես Ձեր SS-ում օգտագործելու համար արտադրել է որևէ ոչ գյուղատնտեսական ապրանք<br>*Օրինակ՝ կարել հագուստ, պատրաստել կահույք և այլն* | 1. Այո<br>2. Ոչ | | | | | | | | |
| **A21.** Մի գուցե (ԱՆՈՒՆ)-ն ունի աշխատանք / սեփական գործ կամ այլ տնտեսական, գյուղատնտեսական գործունեություն, որը ժամանակավորապես դադարեցվել և անպայման վերսկսվելու[17] է*) | 1. Այո<br>2. Ոչ | | | | | | | | **1 →A22<br>2 →A33** |
| **A22.** Հակիրճ նկարագրեք (ԱՆՈՒՆ)-ի ՀԻՄՆԱԿԱՆ զբաղմունքը*, կատարած աշխատանքը, զբաղեցրած պաշտոնը<br>*Օրինակ՝ բեռնատարի վարորդ, ավագ դպրոցի ուսուցիչ, հացթուխ, կարտոֆիլի հավաք, հագուստի վաճառք, վարսահարդար և այլն* | | | | | | | | | |
| ***ՀԻՄՆԱԿԱՆ** համարվում է այն աշխատանքը, զբաղմունքը, որում հարցվողը **հետազոտվող շաբաթվա** ընթացքում ծախսել է առավելագույն ժամեր* | | | | | | | | | |
| ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԿՈԴԸ<br>*Լրացվում է կոդավորողի կողմից* | | |__|__|__|__| | |__|__|__|__| | |__|__|__|__| | |__|__|__|__| | |__|__|__|__| | |__|__|__|__| | |__|__|__|__| | |
| **A23.** Հակիրճ նկարագրեք (ԱՆՈՒՆ)-ի աշխատավայրի (նաև Գ/S) գործունեության ՀԻՄՆԱԿԱՆ տեսակը՝ արտադրվող հիմնական արտադրանքը կամ ծառայությունը<br>*Օրինակ՝ սուպերմարկետ՝ մանրածախ վաճառք, բնակելի շենքերի շինարարություն / խառը գյուղատնտեսություն՝ անասունների* | | | | | | | | | |

16 Եթե արտադրվածը նշանակալի մասնա-բաժին չի ունեցել տնային տնտեսության ընդհանուր սպառման մեջ, A21.-ում պետք է նշել «2» («Ոչ»):

17 Եթե հարցվողը եղել է «առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ», բայց հետազոտվող շաբաթվա ընթացքում գոնե մեկ ժամ չի աշխատել, A21.-ում պետք է նշել «2» («Ոչ»):

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *SS անդամի հերթական համարը՝ A1-ից* | | | | | | | | Անցում |
| *SS անդամի անունը՝ A2-ից* | | | | | | | | |
| *SS անդամի տարիքը՝ A5-ից* | | | | | | | | |
| *բուծում և մշակաբույսերի աճեցում / խոհանոցային կահույքի արտադրություն* | | | | | | | | |
| ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԿՈԴԸ<br>*Լրացվում է կոդավորողի կողմից* | \|__\|__\|__\|__\| | \|__\|__\|__\|__\| | \|__\|__\|__\|__\| | \|__\|__\|__\|__\| | \|__\|__\|__\|__\| | \|__\|__\|__\|__\| | \|__\|__\|__\|__\| | |
| **A24. Որտե՞ղ է (ԱՆՈՒՆ)-ը ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ իրականացրել իր աշխատանքը**<br>(Կարդալ տարբերակները)<br>1. Տանը (հարցվողի)<br>2. Հաճախորդի / պատվիրատուի տանը<br>3. Հիմնարկում, գրասենյակում<br>4. Գործարանում / արհեստանոցում / արտադրամասում<br>5. Գ/Տ-ում / ֆերմայում / տնամերձում / այգում<br>6. Շինհրապարակում<br>7. Հանքում / քարհանքում<br>8. Խանութում / կրպակում / սրճարանում / ռեստորանում հյուրանոցում և այլն<br>9. Տարբեր վայրերում՝ շարժական<br>10. Ֆիքսված վայրում՝ տաղավար փողոցում / շուկայի / զբոսայգու / մայրուղու վրա<br>11. Գործատուի տանը՝ որպես տնային աշխատող, դայակ, սպասուհի, վարորդ և այլն<br>12. Լճում / գետում<br>13. Այլ *(նշել)* | | | | | | | | |
| **A25. Թվարկվածներից ո՞րն է առավել լավ բնութագրում անցած շաբաթվա ընթացքում (ԱՆՈՒՆ)-ի զբաղվածության կարգավիճակը** *(Կարդալ տարբերակները)*<br>1. Վարձու աշխատող՝ գրավոր պայմանագրով<br>2. Վարձու աշխատող՝ բանավոր համաձայնությամբ<br>3. Ինքնազբաղված (վարում է սեփական գործը՝ միայնակ, հիմնականում առանց աշխատողի ներգրավման)<br>4. Գործատու(վարում է սեփական գործը՝ մշտապես վարձու աշխատողի ներգրավմամբ)<br>5. Կոոպերատիվի անդամ<br>6. Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ<br>7. Չգիտեմ /դժվարանում եմ պատասխանել | | | | | | | | 1 – 2 →A26<br>3 – 5 →A29<br>6 - 7 →A30 |
| **A26. (ԱՆՈՒՆ)-ի պայմանագիրը / համաձայնությունը եղել է**<br>1. Որոշակի ժամկետով (ոչ ավել քան 5 տարի)<br>2. Անորոշ ժամկետով<br>3. Չգիտեմ /դժվարանում եմ պատասխանել | | | | | | | | 1 → A27<br>2 - 3 → A28 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *ՏՏ անդամի հերթական համարը՝ A1-ից* | | | | | | | | | | | | | | | Անցում |
| *ՏՏ անդամի անունը՝ A2-ից* | | | | | | | | | | | | | | | |
| *ՏՏ անդամի տարիքը՝ A5-ից* | | | | | | | | | | | | | | | |
| **A27**. Որքա՞ն է (ԱՆՈՒՆ)-ի պայմանագրի / համաձայնության տևողությունը<br>1. Մինչև 1 տարի<br>2. 1 - 3 տարի<br>3. 3 - 5 տարի<br>4. Չգիտեմ /դժվարանում եմ պատասխանել | | | | | | | | | | | | | | | |
| **A28**. Հիմնական աշխատանքում (ԱՆՈՒՆ)-ին սովորաբար տրամադրվու՞մ է / կարո՞ղ է տրամադրվել<br>*(լրացվում են ԲՈԼՈՐ տողերը, նշել "1" կամ "2" կամ "3")*<br>1. այո 2. ոչ 3. դժվարանում եմ պատասխանել | | | | | | | | | | | | | | | |
| - Հանգստյան օրեր շաբաթվա ընթացքում | | | | | | | | | | | | | | | |
| - Բժշկական ծախսեր / ապահովագրություն | | | | | | | | | | | | | | | |
| - Ուսման ծախսեր / ուսման ծախսերի փոխհատուցում | | | | | | | | | | | | | | | |
| - Աջակցություն ուսումնական հարցերում | | | | | | | | | | | | | | | |
| - Ժամանակավոր անաշխատունակության նպաստ | | | | | | | | | | | | | | | |
| - Ամենամյա վճարովի արձակուրդ | | | | | | | | | | | | | | | |
| - Անվճար բնակարան / ծախսերի փոխհատուցում | | | | | | | | | | | | | | | |
| - Սնունդ / սննդի ծախսերի փոխհատուցում | | | | | | | | | | | | | | | |
| - Համազգեստ / արտահագուստ | | | | | | | | | | | | | | | |
| - Տրանսպորտ / տրանսպորտային ծախսի փոխհատուցում | | | | | | | | | | | | | | | |
| - Այլ *(նշել)* | | | | | | | | | | | | | | | |
| **A29**. Վերջին ամսում որքա՞ն է կազմել (ԱՆՈՒՆ)-ի դրամական միջին ամսական մաքուր վաստակը հիմնական աշխատանքում *( դրամ)* | | | | | | | | | | | | | | | |
| **A30**. Հիմնական աշխատանքի հետ մեկտեղ անցած շաբաթվա ընթացքում (ԱՆՈՒՆ)-ն ունեցե՞լ է լրացուցիչ աշխատանք / զբաղմունք, նույնիսկ եթե հետազոտվող շաբաթվա ընթացքում ժամանակավորապես չի աշխատել<br>1. Այո<br>2. Ոչ | | | | | | | | | | | | | | | |
| **A31**. Անցած շաբաթվա ընթացքում (ԱՆՈՒՆ)-ը օրական փաստացի քանի՞ ժամ է աշխատել *(չաշխատելու դեպքում նշել "0")*<br>*Հիմնական (Հ) Լրացուցիչ (Լ)* | Հ | Լ | Հ | Լ | Հ | Լ | Հ | Լ | Հ | Լ | Հ | Լ | Հ | Լ | |
| 1. Երկուշաբթի | | | | | | | | | | | | | | | |
| 2. Երեքշաբթի | | | | | | | | | | | | | | | |
| 3. Չորեքշաբթի | | | | | | | | | | | | | | | |
| 4. Հինգշաբթի | | | | | | | | | | | | | | | |
| 5. Ուրբաթ | | | | | | | | | | | | | | | |
| 6. Շաբաթ | | | | | | | | | | | | | | | |
| 7. Կիրակի | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *ՏՏ անդամի հերթական համարը `A1-ից* | | | | | | | | Անցում |
| *ՏՏ անդամի անունը ՝ A2-ից* | | | | | | | | |
| *ՏՏ անդամի տարիքը `A5-ից* | | | | | | | | |
| 8. ԸՆԴԱՄԵՆԸ (Հ + Լ), ժամ | \|__\|__\|__\| | \|__\|__\|__\| | \|__\|__\|__\| | \|__\|__\|__\| | \|__\|__\|__\| | \|__\|__\|__\| | \|__\|__\|__\| | |
| **A32.** Քանի՞ տարեկանում է (ԱՆՈՒՆ)-ն առաջին անգամ աշխատել *(որպես վարձու աշխատող, ինքնազբաղված, գործատու կամ առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ)* | | | | | | | | →A40 |

## B. *Աշխատանք չունեցող անձինք*

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *ՏՏ անդամի հերթական համարը `A1-ից* | | | | | | | | Անցում | |
| *ՏՏ անդամի անունը A2-ից* | | | | | | | | 5 - 9 տ. | 10 տ. > |
| *ՏՏ անդամի տարիքը `A5-ից* | | | | | | | | | |
| **A33.** Անցած շաբաթվա ընթացքում (ԱՆՈՒՆ)-ը փնտրե՞լ է աշխատանք *(որպես վարձու աշխատող, գործատու, ինքնազբաղված)* 1. Այո 2. Ոչ | | | | | | | | → A37 | 1 → A34<br>2 → A35 |
| **A34.** Անցած 4 շաբաթների ընթացքում ի՞նչ քայլեր է ձեռնարկել (ԱՆՈՒՆ)-ը աշխատանք գտնելու համար *(Հնարավոր է 2 պատասխան)*<br>1. Դիմել է ընկերներին / բարեկամներին / ծանոթներին<br>2. Դիմել է զբաղվածության պետական / մասնավոր գործակալություն<br>3. Դիմել է անմիջապես գործատուին<br>4. Տեղադրել է / հետևել է հայտարարություններին<br>5. Թեստ է հանձնել / մասնակցել է հարցազրույցի / մրցույթի<br>6. Փորձել է ձեռք բերել սարքավորումներ, վարկ, տարածք՝ սեփական գործ սկսելու նպատակով<br>7. Պատրաստվում է մեկնել արտերկիր<br>8. Այլ *(նշել)* | | | | | | | | | → A38 |
| **A35.** Անցած շաբաթվա ընթացքում (ԱՆՈՒՆ)-ը ցանկացե՞լ է աշխատել 1. Այո 2. Ոչ | | | | | | | | | 1 → A36<br>2 → A39 |
| **A36.** Ո՞րն էր ՀԻՄՆԱԿԱՆ պատճառը, որ անցած շաբաթվա ընթացքում (ԱՆՈՒՆ)-ը չի փնտրել աշխատանք<br>1. Արդեն գտել է աշխատանք, սպասում է աշխատանքը սկսելուն<br>2. Սպասում է աշխատանքի / սեզոնի վերսկսելուն<br>3. Հոգնել է աշխատանք փնտրելուց, կարծում է համար աշխատանք չկա | | | | | | | | | |

| ՏՏ անդամի հերթական համարը՝ A1-ից | | | | | | | | Անցում | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՏՏ անդամի անունը A2-ից | | | | | | | | 5 - 9 տ. | 10 տ. > |
| ՏՏ անդամի տարիքը՝ A5-ից | | | | | | | | | |
| 4. Չի համապատասխանում գործատուի պահանջներին (կրթություն, աշխատանքային փորձ, որակավորում)<br>5. Չգիտի որտեղ փնտրել աշխատանք<br>6. Սովորում է / շարունակելու է ուսումը<br>7. Ընտանիքը / զուգընկերը թույլ չեն տալիս<br>8. ՏՏ -ում ծանրաբեռնվածությունը / ընտանեկան հանգամանքները<br>9. Հիվանդություն / առողջական խնդիրներ<br>10. Հաշմանդամություն<br>11. Շատ երիտասարդ է / մեծ է<br>12. Բանակ (զտնվում է / մեկնելու է / նոր է վերադարձել)<br>13. Չի ցանկանում աշխատել<br>14. Այլ *(նշել)* | | | | | | | | | |
| **A37.** Անցած շաբաթվա ընթացքում եթե աշխատելու հնարավորություն տրվեր (ԱՆՈՒՆ)-ը կկարողանա՞ր անցնել աշխատանքի — 1. Այո / 2. Ոչ | | | | | | | | → A41 | 1→ A38<br>2→ A39 |
